

ԹԻՒ 1

ՍՆԻ ԴՂԵԿԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

ԿԱՍ

ՀԱՐԱՁՈՏ ՈՐԴԻ ԶՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՀՕՐՆ ԲԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՅԻՆՆ ԱՐԱՐԱ

ՀԵՂԻՆԱԿԻ

ԵՌՈՒՆԻԷ ԵՒ ՄԷՏԷՌ

ԹԱՐԳՄԱՆԻԶ
Տ. ԳԱԼԵՄՃԵԱՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՏԻՐԱՆ ՓԱՓԱՁԵԱՆ

معارف نظارت چاپخانه سنک رخصتیه مطبع اوتمشدر

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Կ. ՄԱՐԸՆԱՆ

1889

ՍԵՒ ԴՂԵԿԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

ԿԱՄ

ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻ ԶՆՄԱՆՈՒԹԻԻՆ ՀՕՐՆ ԲԵՐԷ



Բարոյալ ից ԹատրերգուԹիւն յինն Արար



Տէր եւ Հրատարակիչ Տիրան Գ. Փափագեան



SELEDIYE
KOTOKHANEH
No 439

ԱՌ ԱԶՆՈՒՍՄԵՄԱՐ

ՄԵՍՐՈՊ ԷՓԷՆՏԻ ՊՈՒՊԼԻ

Ի ԶՄԻՌՈՒՆ

ՆՈՒԷՐ ՅԻՇԱՏԱԿԻ ՍԻՐՈՅ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՅԱՐԳԱՆԱՑ

ՀՐԱՏՐԱԿՁԷՆ



ԱԶԴ — Եթէ թատերական արհեստը գեղեցիկ արհեստն
ներուն մէջ առաջիններէն է ըսենք՝ չենք սխալելը՝ նկարի-
չը բնութիւնը կը նկարէ, աչքը կը դիտէ զայն, կը հիա-
նայ, կ'զմայլի, կ'զգայ, բայց այսու ամենայնիւ լուռ, ան-
ձայն, անխօս ըլլալով զգացումը կատարեալ չէ: Բանաս-
տեղծը կը գրէ, կը կարդաս, կ'սքանչանաս, այսու ամե-
նայնիւ լուռ է ազդեցութիւնը. երաժշտութիւնն ալ միայն

իւր մասնատոր ազդեցութիւնը ունի, բայց թատերական արհեստը, թատրոնը՝ այս ամենուն ամփոփումն է, ժողովն է։ Հին՝ նկարչութիւն Բանաստեղծութիւն, Երաժշտութիւն, խօսուն լեզուով կենդանի սղւով կը ներկայանան. ասոնց վրայ աւելցուր նաեւ արամեական արհեստը, (Art dramatique) որով հեղինակը այն տեսակ տեսարանական դարձումքներ դիտէ դորձածել, որք ունկրնդրին երեւակայութիւնը պահ մը վերացնելով ներկայացումը ճշմարտութեան կը փոխեն։ Ահա ՍԵՒ ԳՂԵԿԻ ԱԻՆԵՒԱԿՆԵՐԸ ասոնց մէջ առաջինն է, բնական բարոյալէց խաղ մը, ամէն մէկ տողը ազդու, ամէն մէկ խօսքը մէկ մէկ ճշմարտութիւն. տեսարանները փառաւոր, կապակցութիւնը սքանչելի, վախճանը բարի. մէկ խօսքով աննրման թատրերգութիւն մ'է։

Ա Ն Չ Ի Ն Ք

ԿՈՒԻՏՕ ՏԸ ԿՕՆԶԱԿՈՒԷ, ի յառաջարանն հալածական, իշխան Մանթուի. Աօթօլֆօ անուամբ։
 ՅԲԱՆԶԷՍԳՕ. կարծեցեալ կրատեր որդի Կուխտօի.
 ԲԱՕԼՕ անդրանիկ որդի Կուխտօի.
 ԼՈՒԻՃԻ . . . Աւաղակ
 ԱՆԹՕՆԻՐ Բարեկամ Կուխտօի
 ԲԻԷԹՌՕ Զկնորս
 ՍԲՕԼԷԹԹԱ Գործակալ Ֆըրանչէսկոյի
 ՊԷԲՕ Ծառայ Ֆրանչէսկոյի

ՄԱՆԿԼԱԻԿ ՄԸ
 ԵՐԵՔ ԱԶՆՈՒԱԿԱՆՔ
 ՅԻԼԻԲԲՕ Աւաղակ
 ՍԱՎԻՕԼԱ Աւաղակ
 ՄՈՒՆԵՏԻԿ ՄԸ
 ԳԻՍՈՒՀԻՆ ԼԷՕՆՕՌԱ.
 ԼԻՆՏԱ Կին Լուիճիի և քոյր Բիէթուօի
 ԳԻՍՈՒՀԻՆ ՊԻԱՆԳԱ Դուստր
 Ֆէռուասէի դքսին և խօնցեալ Բաօլօի . . .
 Զինուորք, Ժողովուրդ, Աւաղակք, Պալատական Տիկնայք
 Պալատականք ևն. ևն.

Նղեկութիւնն ի Մանթու, ԺԸ դարուն վերջերը

ՊԱՏԿԵՐ Ա.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

(ԶՈՂՆ ՈՒ ԴԱՀԻՃԸ)

(Տեսարանն է աղքատիկ պանդոկ մը . խորը կամարա-
ղարդ պարտէշ . ի հեռուս ժայռեր և անտառք երևին :
Սեղան, աթոռ և նստարանք . Սջ և ձախ կողմը դռներ :

ՏԵՍԻԼ Ա.

Լինտա եւ երկու տղայք, Ֆրանչէսքօ և Ֆրանչէսքինօ

(Վարագոյրը Բացաւելա Ռջոյն Լինտա յան կողմ նստած է, երկու
տղայ սեղանին առջև դէմ առ դէմ նստած ին ճաշին :)

Լինտա . — (Ելելով) Արդեօք այս գիշերն ալ դուրսը պի-
տի անցնէ . . . մինչև հիմա ո՞ւր մնաց . . . (Տեսնելով որ
Ֆրանչէսքինօ ղՖրանչէսքօն յիշելու համար ին հրէ) Ֆրանչէսքօ, չա՛ր
տղայ, միշտ եղբօրդ զարնել կաշխատիս . վար իջիր սեղա-
նէն, իջի՛ր կըսեմ քեզի . (Զայն կ'ըջոյն) Բայց, կարծես թէ
սաքի ձայն կայ . . . արդեօք ճամբորդ մ'է . . . ո՛հ,
ոչ, արդէն այս պանդոկը շատ մարդ չի յաճախեր . (Դեղ է
իւրը երևոյ, Ֆրանչէսքօ սեղանին դանակը յափշտակելով Էդբօրը կ'ողորմոյ)

Ֆրան . — (Մարտահար գտնուելով) Ա՛հ, մա՛յր իմ, մա՛յր իմ :

Լինտա . — Ի՛նչ կընես, պղտիկ թշուառական, (Վարդ-
ելով դանակը յետին աստի : Բիէթրօ խորէն ին յօնէ :)

Բիէթրօ . — Ի՞նչ է ան .

Լինտա . — Բիէթրօ՛, եղբայր իմ . (Զայն գրկէ)

Բիէթ.— Վերջապէս սիրելի քոյր իմ, չորս տարի ետքը
դարձեալ կը գտնեմ զքեզ:

Լինտա.— Ահ, սրչափ ծարաւի էի քու տեսութեանդ, բայց կեցիր նախ և առաջ սա տղոց գործը կարդաղորենք, (Փրանկտիստի) Դուն հոս, խեղճ պղտիկ, (և շոն ալ կոյնի դռնին ձեզ դնելով դռնը կը փակէ. ապա զժրանչէսֆօն յախ կոյնի դռնին ձեզ կը փակէ և դռնը կը կլկէ՝ ըսելով) Դուն ալ հոն չար տղայ, ուսկից չպիտի կարենաս դուրս ելնել:

Բիէթ. Բարի՛ Լինտա, ըսէ տեսնեմ թէ՛ ի՞նչպէս կըլլայ որ զքեզ հոս կը գտնեմ. երբ ես հասարակապետութեան նաւերուն մէջ ծառայելու համար ասկէց չորս տարի առաջ Վենետիկէն մեկնեցայ՝ դուն հոն աղւոր ագարակ մը ունէիր, իսկ այսօր Մանթուի գքսութեան երկիրներուն այս անպիտան պանդոկիս մէջ կը գտնուիս:

Լինտա.— Աւա՛ղ . . . չե՞ս գիտեր եղբայր իմ.

Բիէթ.— Այո՛, թերեւս ամուսինդ Լուիճի զքեզ թըշուառացուցած և տունդ կործանելէ ետքն ալ երեսի վրայ թողած ըլլայ:

Լինտա.— Այն ատեն աւազակ խմբի մը մէջ մտած էր, այնուհետև օր մ'ալ զինքը չի տեսայ, և սակայն, ես այն միջոցին մայր պիտի ըլլայի, ուստի ագարակէս մեկնելով՝ Բէշիէրայի մօտերը հեռաւոր ազգականներէս մէկուն տունը ապաստանեցայ, հոն զաւակ մը ծնայ, որ հազիւ քանի մը շաբաթ կրցաւ ապրիլ:

Բիէթ.— Խե՛ղճ Լինտա .

Լինտա.— Ալ անկէ ետքը միմիայն ինքզինքս մտածելու էի, և չուզելով աղքատ ազգականուհւոյս վրայ բեռ ըլլալ՝ անկէց մեկնելու էի, երբ յանկարծ դիպուածը անյուսարի օգնութեան աղբիւր մը դէմս հանեց:

Բիէթ.— Ո՛հ, ի՞նչ եղաւ նայինք .

Լինտա.— Աղգականիս հիւղին մօտ գտնուող ամարա-

նոցին մէջ քաշուած կապրէին երիտասարդ մարդ մը և իւր կինը . կը կարծուէր թէ ասոնք վտարանդիներ էին . կինը, զոր երբէք չէի տեսած՝ ինձմէ քանի մը օր վերջը մայր եղած էր, իւր նորածին զաւակը տկար և հիւանդոտ էր , զոր առանց ստնտուի խնամոյցն յանձնելու՝ ինքը կը սնուցանէր : Իւր երկրորդ զաւակն էր սա . Բայց օր մը, կերելայ թէ այս փախստականներուն ազատանարանը յայտնուեցաւ . աճապարանօք ստիպուած էին վախչիլ , բայց պէտք էր տղան կերպով մը միատեղ չտանիլ , վասն զի այն խեղճ մանկիկը չպիտի կրնար դիմանալ ճամբորդութեան ատեն պատահելիք նեղութեանց և դժուարութեանց :

Բիէթ.— Թերևս զայն քեզի յանձնեցին :

Լինտա.— Ա, յ'ո . իրիկուն մը օտարականը, որ անունս Ասթօլֆօ է ըսաւ, հարցուց ինձ թէ՛ յանձնառու կը լինի՞մ այն պղտիկ էակը խնամելու . և իմ ուրախ սրտով հաճութիւն յայտնելուս վրայ բաւական դումար մը տուաւ ինձ, խոստանալով միանգամայն երբեմն երբեմն նոյնչափ դումարներ դրկել , ասկէց զատ, երբ օր մը , այսինքն ուղած ատեննին իրենց զաւակը քաջառողջ վիճակի մէջ գլրկերնին յանձնէի՝ 1000 տուգա ոսկի պիտի տային :

Բիէթ.— (Չարմնօք) Հազար տուգա ոսկի՞ . . . չըսե՞ս թէ իշխան մը ըլլալու է այդ մարդը :

Լինտա.— Չգիտեմ . . . կոտրած ոսկի մանեակ մը նշան դրինք մէջերնիս ժամանակին զմեզ իրարու ճանչցունելու համար : Երկինք օրհնեց իմ ջանքերս , տկար ողեկը իր առողջութիւնը դտաւ, և այնչափ աղէկ՝ որուն ապագայէն ալ Աստուծով վախ չունիմ : Սա տեսած երկու արդաքներէդ մին էր , (Աջ դուռը ցոյցնելով) այն որ սանկ մտաւ . . . և ունեցած տկարութեանը պատճառաւ ֆրանչէսկոյնս դրի իւր անունը :

Բիէթ.— Բայց միւսը . . .

Լինտա. — Մի՛ւսը . . .

Բիէթ. — Չըսի՞ր թէ քու զաւակդ մեռած էր արդէն .

Լինտա. — Այո, ճշմարիտ է :

Բիէթ. — (Ձեռնի ԴՈՒՐ ԳՆՆԵԼԸ) Ո՛րեմն այս կողմինը ո՞վ է :

Լինտա. — Փրանչէսզօ՞ն . . . աւա՛ղ, որք մ'է զսր ինձ որդեգրած եմ . իւր մայրը աւագակի մը այրի կինն էր , որ քողքին մէջ կը մտրար . . . խեղճը հոս հիւղիս մէջ հիւանդանալով մեռաւ, որով օտիպուեցայ իւր տղան ինձ որդեգրել , վասն զի աշխարհիս երեսը մէկը չունէր զինքը խնամող :

Բիէթ. — Շատ աղէկ, սիրելի քոյր իմ, բարի գործ մ'է այդ ըրածդ :

Լինտա. — Որ շատ աղէկ չեկաւ ինձի , շատ ատեն ասոր վրայ զզջացած եմ . եթէ դիանայիր Բիէթ՝նօ , թէ այս տղան ո՞րչափ կը սոսկացնէ զիս . իւր փոքրիկ հասակէն միշտ չարութիւն գործելու ետէ է : Տիար Ասթօլֆօի տըղուն հետ մէկ տարիք և միակերպ մեծցած է, բայց Աստաւած այս երկուքը իրարմէ շատ տարբեր նշանով մը զատած է, . . . աւա՛ղ, կարծես թէ մին դահիճ և միւսը իր զոհը :

Բիէթ. — Բայց վերջապէս պզտիկ Փրանչէսզինօի ագնուական ծնողքը իր խոստումը կատարեց .

Լինտա. — Այն ատենները քանի մը անդամներ ծեր կըրօնաւոր մը եկաւ տեսնելու, որ իրենց կողմէն զրկուած էր, և որ տղուն ու իմ օրական հացերնուս համար ստակ կը բերէր մեզ. սակայն ամբողջ տարի մը կըլլայ որ չէ երեւցած, և այս յապաղումէն Լուիճի շատ անհանդիստ է :

Բիէթ. — Ի՞նքը . . . բայց ըսիր թէ Լուիճի քեզ ձգած էր :

Լինտա. — Իմանալով որ Փէշիէնա կը գանուիմ, եկաւ զիս գտաւ :

Բիէթ.— Եւ դուն հաւանեցա՞ր նորէն զինքը ընդունել.
 Լինտա.— Պէտք էր որ հաւանէի եղբայր իմ, յիրաւի
 զիս բաւական սրբողոցուցած է, բայց վերջապէս ամուսինս
 է, պէտք է զինքը յարգեմ, զի ժամանակին զիս սիրած է,
 և կարծեմ տակաւին կը սիրէ, որովհետեւ երբոր զիս գը-
 տաւ, հետո միշտ աղէկ վարուիլ խոստացաւ :

Բիէթ.— Բէ՛հ . . . նայինք իւր խոստամունքը պահե՞ց .

Լինտա.— Նախ՝ պահեց, բայց քիչ մը ատեն կայ, այսին-
 քըն բարի կրօնաւորին մեղի ստակ բերելը դադրեցնելէն
 ի վեր սաստիկ զայրացած է ինձ դէմ, միանդամայն այս
 խեղճ տղուն հետ շատ հակառակութեամբ կը վարուի :
 Ձինքը կակղացնելու և հանդարտեցնելու համար հաւանե-
 ցայ մինչև իսկ մեր հիւղը ձգելով այս պանդուկը դնել .
 բայց աւա՛ղ . . . հոս ալ անշահ մարդիկներէ, աւազակ-
 ներէ, մարդասպաններէ և հին զօրականներէ ի զատ ու-
 ըիչ յաճախորդներ չունինք :

Բիէթ.— Որք անշուշտ իւր ամենօրեայ ընկերներն են :

Լինտա.— Լուէ՛ եղբայր իմ, կարծեմ թէ իւր ձայնն է .

Բիէթ.— Այո՛, ինքն է :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք և Լուիճի

Լուիճի.— (Գլխով վէճակէ ձեռք) Գինի բեր, կնի՛կ, զինի՛ .
 մի՛ տնանար, աճապարէ՛ . այսօր քիչ մը անախորժ եմ, ու-
 թովհետեւ զրպանս պարապ և կոկորդս ալ ցամքած է . .
 զինի ըսի քեզի, ինչո՞ւ կը կենաս . զինի պատրաստէ բա-
 րեկամացս համար ալ որոյ պիտի սպասեմ :

Լինտա.— Բարեկամներդ . . . բայց զիտե՞ս Լուիճի,
 թէ կինդ այդ բարեկամացդ ներկայութենէն ամենեւին
 չախորժիր .

Բիէթ.— Եւ դուն հաւանեցա՞ր նորէն զինքը ընդունել .
 Լինտա.— Պէտք էր որ հաւանէի եղբայր իմ, յերաւի
 զիս բաւական սրդողջուցած է, բայց վերջապէս ամուսինս
 է, պէտք է զինքը յարդեմ, զի ժամանակին զիս սիրած է,
 և կարծեմ տակաւին կը սիրէ, որովհետեւ երբոր զիս գը-
 տաւ, հետո միշտ ազէկ վարուիլ խոստացաւ :

Բիէթ.— Բէ՛հ . . . նայինք իւր խոստմունքը պահե՞ց .

Լինտա.— Նախ՝ պահեց, բայց քիչ մը ատեն կայ, այսին-
 քըն բարի կրօնաւորին մեղի ստակ բերելը դադրեցնելէն
 ի վեր սաստիկ դայրացած է ինձ դէմ, միանգամայն այս
 խեղճ ազուն հետ շատ հակառակութեամբ կը վարուի :
 Ձինքը կակդացնելու և հանդարտեցնելու համար հաւանե-
 ցայ մինչև իսկ մեր հիւզը ձգելով այս պանդսկը դնել .
 բայց աւա՛ղ . . . հոս ալ անչա՛հ մարդիկներէ, աւազակ-
 ներէ, մարդասպաններէ և հին զօրականներէ ի զատ ու-
 ըիչ յաճախորդներ չունինք :

Բիէթ.— Որք անշուշտ իւր ամենօրեայ ընկերներն են :

Լինտա.— Լուէ՛ եղբայր իմ, կարծեմ թէ իւր ձայնն է .

Բիէթ.— Այո՛, ինքն է :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք և Լուիճի

Լուիճի.— (Գնա՛լ Վիճակի Տեղ) Գինի բեր, կնի՛կ, գինի՛ .
 մի՛ անտնար, աճապարէ՛ . այսօր քիչ մը անախորժ եմ, ու-
 թովհետեւ զրպանս պարապ և կոկորդոս ալ ցամքած է . .
 գինի ըսի քեզի, ինչո՞ւ կը կենաս . գինի պատրաստէ բա-
 րեկամացս համար ալ որոյ պիտի սպասեմ :

Լինտա.— Բարեկամներդ . . . բայց գիտե՞ս Լուիճի,
 թէ կինդ այդ բարեկամացդ ներկայութենէն ամենեւին
 չախորժիր .

Լուիճի.— Թող այդպէս ըլլայ . է՛ ուրեմն, պանդոկապե՛տ կին, գինի բեր մեր խմբին համար, (Ձեռքը «եղանի» շփելով) գինի՛, գինի՛. ապա թէ ոչ՝ կ'երդնում սատանային մարմնոյն վրայ թէ հիմա ամեն բան կը կոտորտեմ .

Բիէթ.— (Յառաջանալով) Կամայ, Լուիճի, կամայ . . .

Լուիճի.— Հէ՞, . . . ո՞վ է այն թշուառականը որ կը համարձակի . . . (Ճանչնալով) Բիէթուօն :

Բիէթ.— Այո, Բիէթուօն, կնոջդ եղբայրը, որ զայն քու բարկութեանդ դէմ պաշտպանելու միանգամայն եթէ ինքը ուզէ՝ այդ քու իրեն համար պատրաստած թշուառ կեանքէդ ալ գինքը ազատելու պատրաստ է .

Լուիճի.— Ա՛ . . . ուրեմն ինձմէ քեզի՞ ալ գանդատեցաւ . . . իրա՛ւ է՛ Լինտա, որ կուզես քու պզտիկ և սիրելի ամուսինդ թողուլ .

Լինտա.— Պզտիկ եւ սիրելի ամուսի՛նս . . .

Լուիճի.— Ուրեմն ուրիշ մը գտիր որ ինձմէ աւելի սիրելի և աւելի աղէկ ապրուստի մը տէր ըլլայ : Եթէ դու իմ ուզած կինս ըլլայիր՝ գիտցած ըլլաս որ թափառական կեանքս և բոլոր ընելիք շահերս քեզի հետ պիտի բաժնէի, որովհետև, վերջապէս մարդս իւր քսակը լեցնելու համար աղէկ արհեստի մը կը կարօտի :

Բիէթ.— Աղէկ արհեստի՞ մը, ուրեմն ի՛նչ պիտի ընէիր .

Լուիճի.— Ի՞նչ պիտի ընէի, արդէն ունեցած արհեստովս կզբաղէի, որ է աւազակութիւն. (Լինտա գննի քերելեքի)

Բիէթ. (Ձգառնելով) Աւազակ .

Լուիճի.— Եւ ի՞նչ կուզէիր որ ըլլար ատենօք գինուրութիւն ընող մարդ մը, այնպիսին պէտք է որ միշտ իւր սուրէն օգուտ քաղէ, ասկէց զատ, Բիէթուօ՛, մի՛ վախնալ, շատ չար ալ չեմ, անմեղ մարդիկները չեմ սպաններ այլ միայն սրիկաները, (Լինտա գննի քերելեքի) Եկուր Բիէթուօ, հիմա այս խօսքերը թողունք և ի միասին տնկենք :

Բիէթ. (Մերձեւ) — Շնորհակալ եմ .

Լուիճի. — Դուն գիտես . (Լուս և ԽԳ ,) է ուրեմն կնիկ , այս երկու օրուան մէջ երբէք կրօնաւորի մը կնքուղը չի տեսա՞ր .

Լինտա. — Ոչ :

Լուիճի. — Ուրեմն պէտք է որ հիմա երթաս Փրանչիս-կեան կրօնաւորաց վանքը և հասկնաս թէ Հայր Անսէլմը դեռ չեկա՞ն անցեալ տարուան պէս պաշտպան Սուրբին իննօրեայ աղօթիցը ներկայ գտնուելու : Վերջապէս պէտք է որ անոր հետ ունեցած հաշիւնիս կարգադրենք : Ինքը-զինքնին սնուցանել չկարողացող մարդոց համար երկու տղայ սնուցանելը քիչ մը է՞ կ ուզայ : Արդ , եթէ ասոնց-մէ մին իր ընկերոջը համար չի վճարէ՝ երկուքն ալ պիտի վճնտեմ :

Լինտա. — Ի՛նչ , դու այդ երկու անմեղները վճնտելու չափ պիտի կրնա՞ս անգթանալ .

Լուիճի. — Չեմ վճնտեր , բայց կրնամ գնչուներու ծախել :

Լինտա. — Բայց վայրկենէ վայրկեան պղտիկ Փրանչէս-գինոյի ծնողքը կրնան դալ և մեզ խոստացեալ օսկիները վճարելով զակնին պահանջել :

Լուիճի. (ԽԳ , Լ) — Ա՛հ , իրաւ ըսիր . . . բայց անոնք թերևս մինչև հիմա մեռած են , ես հաւատարի եմ թէ այդ պարոն Ասթօլֆօն արդի իշխան տիար Պօնագօսի թշնամի նախորդ Կուխտօ տը Կօնզակուէ դքսին կողմնակիցներէն մէկը ըլլալով . . .

Լինտա. — Եթէ այդպէս ըլլար՝ քաղքին մէջ պտտելու չէր համարձակեր , որովհետև Պօնագօսի իշխանը ա՛յնչափ կը հալածէ Կուխտօ տը Կօնզակուէ դուքսը՝ որուն գլուխը մինչև իսկ ծախու հանած է :

Լուիճի. (Գաւառի Բարձրագոյնը) — Մախու հանա՛ծ . . . վերջապէս կարծեմ թէ մեզի գործ մը կելլէ :

Լինտա. — Ո՛վ Սուրբ Մատու . . . միթէ դո՞ւ ալ պիտի յանդգնիս ասանկ ոճրի մը մասնակցիլ :

Լուիճի. — Մասնակցի՛լ . . . անդի՛ն դնա դուն ալ , մասնակցիլը ի՞նչ է , ես առտնձին կուզեմ գործել , և եթէ ոճիր մ'է , մեզքը Պօնաքօս իշխանին վիզը ըլլայ : Ամեն մարդ իր գործը գիտէ , կնիկ , մեր իշխան Պօնաքօսի պարտքն է վճարել , իմ ալ պարտքս է խղճի հանդարտութեամբ այդ դումարը ձեռք բերել : Ինչպէս որ զինուոր մը իր զօրապետին հրամանացը կը հնազանդի , նոյնպէս եւ ես . . .

Բիէթ. — Թշուառակա՛ն , ի՞նչպէս կը համարձակիս այդ խօսքը ըսել . զինուոր մը ցերէկ ժամանակ կը պտտերագմի իւր թշնամուռն հետ ճակատ առ ճակատ , և կեանքը վտանգի մէջ դրած իւր հայրենիքը և ընտանիքը կը պաշտպանէ , իւր ձեռք բերած յաղթութիւնը իրեններուն ազատութիւնն է , իսկ մահը՝ նոցա փառքը : Մ'հ , դադրէ՛ Լուիճի , դադրէ՛ քաջի մը օրինաւոր սուրը վատ եղեռնագործի մը դաշոյնին հետ համեմատելէ :

Լուիճի. (Գաւառի Բարձրագոյնը) Մա՛հ և դժոխք , հիմա պիտի տեսնես վատին ով ըլլալը . (Գաւառի Բարձրագոյնը)

Լինտա. (Մեջ տեղն զփռելով) — Լուիճի , եղբայ՛րս է . Բիէթո՛ւ , չե՞ս անսներ թէ գինով է :

Լուիճի. — Ուրեմն թող հեռանայ աչքիս առջևէն :

Բիէթ. — Հանդարտէ , ես ահա իմ նաւակս կը վերագառնամ , և տայ Աստուած որ զքեզ և քու ընկերներդ ճամբուս վրայ չի տեսնեմ , որք ահա կը մօտենան , որովհետեւ մենք շատ անդամ կախած ենք ծովահէններ , որոց ձեզմէ տելի բարի մարդիկ ըլլալնին ստուգած ենք , Առայժմ մնաս բարեաւ քոյր իմ :

Լինտա.— Մինչև վանքը կուզեմ քեզ ընկերանալ, բայց կեցիք սա աղաքը հետեւինս առնենք, զի աւելի հանդիստ կըլլամ երբ այս աղաքը քովս ունենամ: (Տղայու դարձնելէն հանելէ ետք յետեւինս Բունէ և Խորէն մէջէն.)

ՏԵՍԻՆ Գ.

Լուիճի, Ֆիլիփիօ, Սափիօլա և այլ Աւաղակք

Ֆիլիփի,— Լուիճի, կի՛նդ է որ ասկէց կը հեռանայ:
Լուիճի,— Այո, մինակ ենք և կրնանք լսուիլ. Սափիօլա, դուն հսկողութիւն ըրէ որ մէկը վրայ չի հասնի:

Սափիօլա — Ուրեմն շիշ մը գինի սուր ինձի որ աչացս աեսութիւնը աւելի զօրացնէ:

Լուիճի.— Ա՛ռ նայինք քեզի շիշ մը գինի, (Կոտայ)

Սափիօլա, — Շնորհակալութիւն տէր Լուիճի, (Ետեւէն իջնալ և կայ)

Լուիճի — Ի՞նչ լուր, Ֆիլիփիօ.

Ֆիլիփի.— Կըսեն թէ Տիար Կուխտօ աը Կօնզակուէն այս կողմերս երևցեր է,

Լուիճի, — Հէ՛, ի՞նչ կըսես եղբայր, խե՛նթ է որ գայ գայլին որկորը ինչայ.

Ֆիլիփի, — Գիտե՛ս ուրեմն թէ Պօնագօսի իշխանը անոր գլուխը ծախու հանած է:

Լուիճի, — Ո՞րչափ կուտան կոր,

Ֆիլիփի. — Հինգ հարիւր ոսկի սկուդ:

Լուիճի. — Բաւական դումար մը. . . կրնանք իրեն հետ համաձայնիլ.

Ֆիլիփի. — Ի՞նչպէս.

Լուիճի. — Շատ դիւրութեամբ, Փախտաականը իր կեանքը վտանգի մէջ ըլլալը իմանալուն պէս՝ Վենետիկեան երկիրներուն մէջ պիտի ապաստանի, ուր հասնելու համար

Բէշիէրայի պղտիկ ճամբէն զատ ուրիշ ճամբայ մը չունի. այս պղտիկ ճամբան մինչև իմ պանդոկիս դուռը կը վերջանայ . ես այն մարդը հոս վար դնելը իմ վրաս կառնում, խարէութեամբ կամ բռնութեամբ, վերջապէս պարագային համեմատ . դուք հսկողութիւն կընէք և չորս կողմը կը պաշտպանէք :

Փիլիփ.— Ծատ աղէկ . (Գոռնէ բարչեցնել) Տխար կուխո տը կօնդակուէի մահուանը .

Լուիճի.— Լուէ', ա'հ, լուէ' . մարդուն մահուանը համար խմել .

Փիլիփ.— Ի՞նչպէս .

Լուիճի.— Պէտք է խոստացեալ պարգեւին համար խմել :

Փիլիփ.— Է', այդպէս թող ըլլայ, ամենը մէկ ճամբայ կելլէ, Ուրեմն հինգ հարիւր ոսկի տուգատին համար .

Ամենքը.— Հինգ հարիւր ոսկի տուգատին համար. (Խօսն)

Լուիճի.— Հիմա իրարմէ բաժնուինք, մինչև որ զիշերը վրայ հասնի . (Առաջիկ հետեանն .)

ՏԵՍԻԼ Դ.

Լուիճի (Մընչ)

Լուիճի.— Առաջ պէտք է գործին էական մասը կարգադրենք, այսինքն կնոջս ներկայութեանը ինքզինքնիս չմտնելու համար զգուշանալ, վասնզի իրեն նման բարի հոգիները ասանկ բարի գործերուն միշտ արգելք կըլլան. Ա'հ, Աստուած տայ որ փախտականին հոս հասած ատենը ախուռիս մէջ ձի չգանուի, որովհետև ճամբան հետիոտն երթալը շատ դժուարին է. ինչ՞դճդ Տխար կուխո, ամենեւին քեզի դէմ ոխ չունիմ, բայց ի՞նչ ընեմ, երբ մարդ իր վրայ պաշտօն մը կ'առնու, պէտք է կատարէ . . . ա', ա.

ղէկ միաքս եկաւ, ի՞նչ նշանով զայն պիտի ճանչնամ, . . .
է՛հ, այս առաջին անգամը չէ որ բնազդումս ինձ պիտի
օգնէ: Ո՞վ է այն որ դէպ ի հոս կուգայ . . . երկու ճամ-
ուորդներ:

ՏԵՍԻԼ Ե,

Լուիճի, Ասթօլֆօ և Անթօնեօ

Ասթօլ,— Պա՛րոն, այս պանդոկին տէրը դո՛ւք էք:

Լուիճի,— Այո՛ պարոններս, ի՞նչ կուզէք նայիմ:

Ասթօլ,— Մենք երկուքս վենետիկցի վաճառականներ
ենք, որ հայրենիքնիս կը վերադառնանք, ու հոս քիչ մը
հանգիստ առնուլ կուզենք: (Սեշնին առջև իջնալն)

Լուիճի, (Զննելով գէտերէն) — Հանգիստ ըրէք, և ուղած-
նուդ չափ նստեցէք:

Ասթօլ.— Եթէ չեմ սխալիր՝ Բէշիէրայի շատ մօտ ենք,
և ահաւասիկ այն ճամբան՝ որ հոն կը տանի:

Լուիճի.— Այո՛: (Ասթօլֆօ Անթօնեօի հետ իջնալն, Լուիճի
Բէշնեօ իջնալն) Երկուքէն մէկը մեր բնառած մարդը չըլլայ:

Անթօն,— (Կոմսոյ ղե ընկերոջը) Հոն կերթամ: (Դեռ է Իւր)

Լուիճի,— (Ասթօլֆօ) Ընկերնիդ ձեզի հետ չպիտի՞
վերադառնայ ի վենետիկ:

Ասթօլ.— Այո, բայց կուզենք նախ և առաջ դանել բա-
րի կին մը՝ որ այս կողմերս կը բնակի եղեր, որու հետ
խիստ շահաւոր դործ մը ունինք կարգադրելիք:

Լուիճի,— Պա՛հ. այս մասին կարելի է կրնամ ձեզ օգ-
նել, անունը ի՞նչ է այդ բարի կնոջ:

Ասթօլ.— Լինտա:

Լուիճի.— Կի՛նս . . .

Ասթօլ.— Ի՞նչ, արդեօք դուք,

Լուիճի.— Լուիճի Պարպարէնան եմ:

Ասթօլ. — Դո՞ւք .

Անթօն . (Կոմայ ինքնեւնը) — Լուիճի Պարպարէնա՞ կը սէ , աւազակ մը , հոշակաւօր ոճրագործ մը . . . ա՛հ , տէր իմ , զգուշացէք ,

Ասթօլ. — Լուէ՛ :

Լուիճի . — Է՛ ուրեմն , պարոններ , կնոջմէս ի՞նչ կուզէք :

Ասթօլ. — Թերեւս իմ անունս անցեալ դէպք մը պիտի յիշեցնէ ձեզ :

Լուիճի . — Ձեր անո՞ւնը .

Ասթօլ. — Ասթօլֆօ ,

Լուիճի . — Ասթօլֆօ՞ . Է՛հ , ուրեմն դո՞ւք էք որ առկէց վեց տարի առաջ Լինտայի յանձնեցիք . . .

Ասթօլ. — Տղայ մը իւր օրօրոցին մէջ :

Լուիճի . (Ուրախութեամբ) — Այո՛ , այո՛ , Ասթօլֆօ էք . (Մեկուսի) ասիկայ մեր բնառած էն շատ տարբեր դործ մ'է :

Ասթօլ. — Այն տղան դեռ կապրի՞ .

Լուիճի . — Աստուած վկայ՝ այո՛ .

Ասթօլ. — Օրհնեա՛լ ըլլայ Աստուած .

Լուիճի . — Եւ դուք զայն առնել տանելու համար՞ եկաք հոս .

Ասթօլ. — Եւ ուրիշ ի՞նչ պատճառաւ այս երկար ու տաժանելի ճամբորդութեան յանձնառու պիտի ըլլայի . ահաւասիկ ձեզմէ ճանչցուելու նշանս , (Կէր պարտնել ինչ ինչ ցանկեր և դրոշմներ պահել :)

Լուիճի . — Աղէկ , աղէկ , բայց ամենը աս չէ .

Ասթօլ. — Ի՞նչպէս .

Լուիճի . — Ձե՛ք յիշեր .

Ասթօլ. — Ի՞նչ բան .

Լուիճի . — Լինտա ինձի հազար տուգատ ոսկիի համար խօսած էր . ասիկայ ի՞նչ պիտի ընէք ,

Ասթօլ.— Այդ գումարը ձեզի պիտի վճարենք:

Լուիճի.— Ա՛հ, տէր իմ, ի՛նչ ուրախութիւն, (Յո՛ւշքե-
տաւ) ըսել կուզեմ թէ ի՛նչ ցաւ . . . խեղճ պղտիկ աը-
ղան . . . ս՛րչափ կը սիրեմ զինքը . . . և իրեն հետ ա՛յն-
չափ ջերմ սիրով կապուած էի որ . . . կը հասկնա՞ք . . .
անուցիչ հայր մը . . . վերջապէս քանի որ դուք կուզէք . . .

Ասթօլ.— Ո՞ր է հիմա .

Լուիճի.— Լինտա զայն պտտցնել տարաւ , բայց շատ
չի քչեր կը վերադառնայ , նստեցէք ուրեմն տեարք իմ:

Ասթօլ.— Կաղաչեմ, հոս կենալու շատ ժամանակ չունինք:

Լուիճի.— Կը հաւատամ, ճամբանիդ բաւական վաճառ-
դաւոր է . բոլոր երկիրը Պոնապոսի կողմնակից զինուորնե-
րով լեցուած, որք կը հալածեն . . .

Ասթօլ.— Զո՞վ .

Լուիճի.— Տիար Կուխտօ տը Կօնդակուէն, որուն գլուխը
ծախու հանած են:

Անթօն . (Իողահար Անթօնի Զայելու) — Երկի՛նք :

Լուիճի, — Ի՛նչ ունիք տեարք իմ:

Ասթօլ.— Անթօնեօ կը դարմանայ թէ՛ ի՛նչպէս համար-
ձակած է Կուխտօ տը Կօնդակուէն այս կողմերս երեկ:

Լուիճի.— Ճշմարիտ է . և ձեզի բան մը ըսե՛մ, երբ դուք
հոս եկաք, առաջին անգամ կարծեցի թէ ձեզմէ մէկն էր
այն հալածեալ դուքսը:

Ասթօլ.— Օ՛. որչա՛փ ծաղրաբան էք եղեր պարօն , իւր
զաւակը բնտուող հայր մը Կուխտօ տը Կօնդակուէն կարծե՛լ:

Լուիճի . Այդպէս է , բայց մարդ չե՞նք , կը սխալինք .
թերևս պարօն Անթօնեօն փախստական դքսին կողմնակից-
ներէն ըլլայ:

Անթօն .— Ե՛ս .

Լուիճի.— Հանդարտեցէք, հանդարտեցէք, իմ գործս
միայն տիար Կուխտոյի հետ է, որուն ձեռքէն 500 տու-

գատ ոտկին կուղեմ առնուլ, եթէ յաջողիմ նոյն գումարը ձեռք բերել՝ ձեր բերածին հետ միացնելով մեծ գրամագրխոյ մը տէր պիտի ըլլամ:

Աթոսլ.— Բայ կինդ կուչանայ:

Լուիճի.— Անիճեալ կին . . . ներեցէք անոր ուշանալուն համար տեսրք իմ, եւ եթէ կուղէք ժամանակնիդ խմելով անցնել, կը խոստանամ ամենալնտիր տեսակէն բերել. (Գէնի քերէլ երկուս.)

Անթօն. (կատայ ճ ընկերոջ) — Կը տեսնէ՞ք տէր իմ, թէ ո՞րպիտի վտանգներով չըջապատեալ էք:

Ասթօլ.— Ի՞նչ կուղես որ ընեմ, Անթօն, իմ կողմնակիցներս խաբած են պիս և դեռ դործի սկսած չեն:

Անթօն.— Ուրեմն ի վենետիկ հասնելու համար պէտք է որ աճապարենք:

Ասթօլ.— Եւ տղա՞ս, . . . միթէ կրնամ զայն հոս ձգել, որուն մայրը այնչափ անհամբեր իրեն կ'սուրասէ. բայց այս մարդուն խօսքերուն նայելով՝ մեր փախչելու յատակաղիծը աւրուած է, ուրեմն չի ճանչցուելու համար պէտք է իրարմէ բաժնուինք: Իշխանուհի կինս իւր հազած գիւղացիի զգեստին տակ բաղկացը մէջ ունենալով մեր անդրանիկ որդին Բասօն, ի Սէրանօ պիտի հասնի վենետիկեան երկիրները մանելու համար, ուստի դու պիտի ընկերանաս իրեն այս ճամբորդութեանը մէջ. ուրեմն երթանք զըտնենք զինքը անտառին հովանոցին տակ որ մինչև ցարգձած կեց զմեզ թշնամեաց աչքերէն. ես այս գիշեր նորէն հոս կուգամ զաւակս առնելու և ձեզ կը գտնեմ ի վենետիկ. (Լուիճի քերէլ)

Լուիճի.— Ահաւատիկ տեսրք իմ, ամենահին և ամենաբնտիր տեսակէն ձեզի գրի մը, բայց ներեցէք ինձ մեծաբոյ հիւրերս որ ձեր գալուստը ողջունեմ նախ ես անկելով:

Ասթօլ.— Ի՞նչպէս, ուրեմն . . .

Լուիճի. (Լէջնէ) — Պարոն Ասթօլֆօի և իւր անմեղ Ֆըրանչէսքօ որդւոյն կենացը, որուն բաժանումը ինձ խիստ ցաւ և կսկիճ պիտի պատճառէ. (Խօսելն ետէ) աւա՛ղ, հազար տուգատը շատ պղտիկ դեղ մ'է իմ այս ցաւս դարմանելու, բայց և սյնպէս . . . եթէ . . . եթէ կուզէք զանոնք համրել . . .

Ասթօլ.— Անթօնէօ նախ մօտերը սակարկութիւն մը ունի լմնցնելիք. իրիկուան դէմ, այսինքն գիշերը վրայ հասնելուն պէս ես առանձին պիտի դամ, թող կինդ պարաստուի զաւակս ինձ յանձնել և խոստացեալ գումարը ընդունիլ:

Լուիճի.— Պատրաստ պիտի դանէք տէր իմ:

Ասթօլ.— Ընտանեկան անհամաձայնութիւններ զմեզ կ'ստիպեն ձեզմէ ամենախիստ դաղտնապահութիւն մը խնդրել:

Լուիճի.— Ա', մի' վախնաք, երբ խնդերը ստակի վրայ է, ես հետաքրքրիները չեմ սիրեր:

Ասթօլ.— Առ այժմ մնայք բարեաւ, քիչ ժամանակէն կը տեսնուինք:

Լուիճի.— Այո', քիչ ժամանակէն, երկինք առաջնորդէ ձեզ և մեծ բարութիւններ պարգևէ:

(Ա.Բ.Յ.Յ. և Ա.Բ.Յ.Յ. ԲԷԷ)

ՏԵՍԻԼ Զ.

Լուիճի (ՄԷՆԻ)

Լուիճի.— Ի՛նչ երջանկութիւն . . . ի՛նչ բաղդ . . .
 ես որ այս առաւօտ տասը տուգատի համար հօգիս սատանային կը յանձնէի, ահա հազար հատիկ սսկի, որ երկինքէն կ'իջնէ. Այսուհետեւ միմիայն ինձի համար են ամեն տեսակ ուրախութիւն, զեղիսութիւն, Սպանիոյ պատ-

ուսական դիւնին, խաղատուններ, ծաղկապսակ տիկիւններ, պարահանդէսներ, գլխակներ, վեհեւտիկի ուղնուապետական հանդէսներ. վաղը ասկէ պիտի մեկնիմ՝ գրպաններս լեցուցած և այս պահուիլը պիտի այրեմ՝ Բայց ինչո՞ւ Լինտա կուշանայ . . . ա՛, ահաւասիկ եկաւ, Լինտա, Լինտա, եկու, ի՛նչ երջանկու թիւն:

ՏԵՍԻԼ Է.

(Նոյն. Լինտա սարսափահար վազէ վրան գլուխը անյարդար, երկու դեղջուհիք վիրաւորեալ Ֆրանչէսգինօն գրկած կը մանեն և ձախ կողմի սենեակը երթան.)

Լինտա. — Աստուած իմ, այս ի՛նչ դժբաղդութիւն է.

Լուիճի. — Ի՞նչ կայ Լինտա.

Լինտա. (Զօրէն ելելու վրայ եղող հանանց լալի մը որով) — Առէ՛ք սա լաթը և վերքը կապեցէք: (Կանայք Գարջեալ է ձախ մտնել)

Լուիճի. — Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ .

Լինտա. — Սարսափելի դժբաղդութիւն մը, Լուիճի.

Լուիճի. (Զայրուելով) — Պիտի բացատրե՞ս .

Լինտա. — Ֆրանչէսգինօ . . . խեղճ տղան . . . աւա՛ղ, դիպուած մը . . .

Լուիճի. — Ֆրանչէսգինօ՞ կըսես.

Լինտա. — Վիրաւոր և մահամերձ, թերևս մինչև ցարդ մեռած է:

Լուիճի. — Ի՞նչ, Ասթօլֆօլին տղա՞ն.

Լինտա. — Այո, նոյն ինքը, թո՛ղ որ երթամ և . . .

Լուիճի. (Արհեստով) — Թշուառակա՛ն կին, դո՞ւ ըստաննեցիր դոյն .

Լինտա. — Ե՛ս . . . ո՛վ Աստուած իմ, . . . ե՛ս . . .

Լուիճի. — Բայց պատմէ՛ ուրեմն, պատմէ՛, սպա թէ ո՞չ կ'երդնու՞մ սատանային զլիսուն վրայ թէ այդ սպան-

նութիւնը քու արեամբդ պիտի հատուցանես ինձ , շուտ
ըրէ , խօսէ՛ .

Լինտա.— Ա՛հ, մի՛ բարկանար Լուիճի, յանցանքը իմն
չէ. հայր Անսէլմի վրայօք տեղեկութիւն առնելու համար
քու հրամանաւդ վանք գացած էի, և մի՛չդեռ վանահօր
հետ կը խօսէի, երկու տղայք ալ պատշգամին վրայ կը
խաղային. յանկարծ աղիք գալարոյ ճիւ մը կը լսեմ և կը
վազեմ, ի՛նչ սարսափելի տեսարան, Փրանչէստօ, այն չար
տղան զմիւսը այն բարձր պատշգամէն հրելով վար ձգած
էր : Ո՛հ, խեղճ Փրանչէստինօն քարայատակին վրայ բռն-
ւած, արիւնսթաթախ և գլուխը ջախջախուած կիսամեռ
լինկած էր . անմիջապէս զայն կը վերցնեմ, և օգնութեան
կանչելու ձայնէս ամենքը կը վազեն . եղբայր Ամպուօզի-
օնըն ալ հոն տղուն քոյն էր . աւա՞ղ, անյոյս վիճակի մէջ
է խեղճ տղան :

Լուիճի.— Անյոյս . . .

Լինտա. (Լուսւ) — Խե՛ղճ տղայ . . . զոնէ Աստուած
ներեր ինձի, հսկողութեան պարտքս լաւ չի կատարելուս
համար :

Լուիճի.— Փրանչէստինօ՛ն . . . բայց աղէկ դիտե՞ս, Փը-
րանչէստինօ՛ն է, և մի՞ւսը, այն հարուածը տուողը այդ-
պղտիկ թշուառակա՞նն էր .

Լինտա.— Այո, ինքն էր, ես տեսայ, և որ ինքզինքը
ծածկելու համար այս կողմերը վախաւ . ա՛հ, այս առա-
ւօտ աղէկ կըսէի թէ դահիճ մը և իր զոհը :

Լուիճի.— Բայց չէ՛, այս տղան չկրնար մեռնիլ և պէտք
չէ՛ որ մեռնի, կը հասկնա՞ս, ուրեմն դու բան մը չե՞ս ի-
մացած այս մասին . . . բայց վազէ՛, վազէ՛ այդ տղան
ազատելու :

Լուիճի.— Ո՛հ, որչա՛փ բարեսիրտ ես Լուիճի, ազաչենք
երկնից որ հրաշք մը բնէ, ապա թէ ոչ կօրսուած է խեղճ
տղան : (Զախ կողմէ դուրս)

Լուիճի (Առնյէն) — կորսուած, Ասթօլֆօի ազան, որ քիչ մը ետքը պիտի գան շինքն առնուլ . . . և մեր գանձը, ա՛հ, մեր գանձն ալ կը կորսուի : Դժօխք ինձ գէմ կելէ այդ պզտիկ ճիւղին դէմքին տակ . բայց ո՞ւր է, ո՞ւր պահուրած է այդ լակօտը, որուն վրայ պէտք է արգարութիւնը ի գործ գնեմ : (Այս Տիւրքի Պրանչէֆօ Խորէն ծոնի դողահար և վաղելով աջ կողմի սենեակը մտնելէն ետքը դուռը բացէ,) ահ, ահաւասիկ, կ'երգնու՛մ գերեզմանիս վրայ որ իւր արիւնն ալ, . . . (Դուրսէջ Բարձրացոյցած դեպ է յաջ և զ վաղէ, բայց յանկարծ յաւաքերէ) բայց ի՞նչ կընեմ, . . . վայրկեան մը մտածելու եմ, (Մտածէ) Տիար Ասթօլֆօ իր ազան չի ճանչնար, վասն զի նորա ծննդէն ի վեր տեսած չէ . այս Պրանչէֆօ-գօն, այս աւազակի և մուրացկան կնոջ ազան միւսին հետ մէկ տարիք ունի : Նախապէս նայինք որ մէկը վրայ չի հասնի, (Զտիլ դրանն ապէս երկու մտիկ կընէ) կը պոռան . . . կուլան . . . մեռա՛ւ . . . ամեն բան լինցաւ . . . զիչերը վրայ կը հասնի և մեր մարդն ահա կուգայ : (Տեսարանը միանայ)

ՏԵՄԻԼ Ը,

Լուիճի և Ասթօլֆօ (Երկուքն վերադառնալէ իջ Տիւրքի դռնէն)

Ասթօլ, (Մտած արեւը, Տիւրքի) — Փառք Երկնից, իշխանուհին և սիրելի Բաօլօս քիչ ատենէն պիտի երջանկանան, ա՛հ, ո՞րչափ կուշանամ իմ կրտսերը զաւակս ալ իւր մօրը զիրկն յանձնելու :

Լուիճի, — Դո՛ւք էք Տիար Ասթօլֆօ :

Ասթօլ, — Է՛ որեմն Լուիճի, զաւակս բերի՞ն,

Լուիճի, — Այո՛, հոս է :

Ասթօլ, — Անհամբերութեանէս կը ասնջուիմ, շուտ ըրէ, կանչէ՛ Լինտան :

Լուիճի, — Լինտան . արդէն զինքը հեռացուցած եմ :

Ասթօլ.— Եւ ինչո՞ւ համար,

Լուիճի.— Գիտնալով որ աղէն զատուելու միջոցին շատ յաւ պիտի զգար:

Ասթօլ.— Խեղճ կին. . . կուզէի զինքը աեանել և զաւկիս համար տարած այնչափ խնամքներէն շնորհակալ ըլլալ:

Լուիճի.— Ես ձեր կողմանէ շնորհակալութիւննիդ կը յայտնեմ իրեն:

Ասթօլ.— Շատ լաւ . . . որեմն զաւակս բերէք, վասն զի ժամանակ չունիմ վայրկեան մը իսկ սպասելու, վախնալով որ մութին մէջ աւազակաց կը հանդարմ:

Լուիճի.— Այո, անոնք իմ ընկեր . . . (Յուշաբէրու) այսինքն աւազակներ են, որք ինձ չափ անվախ չեն, այլ տեսած ճամբորդներն կը կողոպտեն և կը մեռցնեն: Սակայն դուք մէկ քառորդէն լերան ետեւի կողմը անցած պիտի ըլլաք:

Ասթօլ.— Կրնա՞ք ինձի ձի մը ճարել:

Լուիճի.— Հատ մը ունիմ հոս պատրաստ:

Ասթօլ.— Այդ ձիուն համար ձեզի հարիւր տուգատ ոսկի կուտամ:

Լուիճի.— Հարիւր ոսկի^օ, և հազար ալ արդէն պիտի տաք՝ որ կընէ հազար հարիւր տուգատ ոսկի:

Ասթօլ.— Սակարկութիւննիս լմնցաւ, (Ներսէն որնայն) բոլոր այս ի՞նչ ազմուկ է:

Լուիճի.— Ա՛յ չար սատանայ, անոնք են, այսինքն աւազակները, քիչ մը ատեն սա կողմը պահուրտեցէք տէր իմ:

Ասթօլ. (Դեռ է յաի երջալու.) — Հո՞ն,

Լուիճի.— Չէ՛, չէ՛, (Մեկտեղ) ա՛յ թշուառական, մեռած տղուն սենեակը կերթայ: (Չաիի դուռը կը կողոպտէ) Տէր իմ, սա ա՛յ կողմի պզտիկ սենեակը մաէք ուր պիտի գտնէք պզտիկ Ծրանչէսոն:

Ասթօլ, — Զաւակս, այնպէս չէ՞,

Լուիճկ, — Ըստ երևութին,

Ասթօլ, — Ի՛նչ երջանկութիւն .

Լուիճի, — Շուտ ըրէք, մտէ՛ք : (Առջևէն աջ դռանէն հոնէ :)

ՏԵՍԻԼ Թ.

Լուիճի, Ֆիլիփօ, Սալիօլա և այլ Աւազակք

Լուիճի. — Է՛, դո՞ւք էք ընկերք, ինչո՞ւ եկաք .

Ֆիլիփ, — Եկանք հարցնել քեզ թէ՛ մէկը չի տեսա՞ր .

Լուիճի, — Ո՛չ .

Սալիօ, — Կասկածելի անծանօթ մը որ այս կողմերը կը թափառէր. կարծեցինք թէ հոս մտած է :

Լուիճի, — Ա՛, հասկցայ ինչ ըլլալը . Լինտայի զաւակաց միտյն գլխուն եկած մէկ մեծ փորձանքին պատճառաւ զիւղացիներէն քանի մը հողի եկած էին :

Սալիօ, — Ամենը այսչափ .

Լուիճի, — Ուրիշ բան չիկայ .

Սալիօ, — Ըսել կուզենք թէ, կը հասկնա՞ս, կուզէ Կոնզակուէ դուքսը ըլլայ կուզէ ուրիշ մը, բոլոր ճամբորդները մեզ կը վերաբերին .

Ֆիլիփ, — Ուրեմն կրա՛կ բոլոր մեր ձեռքն իյնալիք մարդկանց վրայ .

Լուիճի, — Ամեն բանի համար պատասխանատու եմ ձեզ միայն թէ գացէք լաւ հսկեցէք : (Առջևէն հոնէն :)

ՏԵՍԻԼ Ժ.

Լուիճի, (Երէ) Ասթօլիֆօ

Լուիճի, (Մընտ) — Սրիկաներ . . . եթէ այս մարդը տեսնէին՝ անպատճառ 1100 ոսկին պիտի յափշտակէին,

որ ըստ օրինի ինձ կը վերաբերի . (Այլ դուրսէ իմաց ճշ քանակով)
 ահաւասիկ աղան գրկացը մէջ առած է . . . եթէ գիտ-
 նար թէ իւր զաւկին դահիճն է . . . (Բարձր) եկէ՛ք տէր
 իմ, ալ վախ չիկայ:

Ասթօլ . (Կերէն վերաբերուն որովհետեւ գրեթէ) —, Ձեզ խոս-
 տացեալ գումարն այս քսակին մէջ պիտի գտնէք: (Բռնի ճշ
 երբնցնէ:)

Լուիճի . (Առնելով) — Շնորհակալ եմ:

Ասթօլ . — Եւ ձի՛ն .

Լուիճի . — Դուրսը պատրաստ է . (Ձոյն խորը որով) Տղան
 չի՞ տրտնջար գրկացդ մէջ .

Ասթօլ . — Ոչ . եւ կարծեմ թէ կը քնանայ:

Լուիճի . — Խեղճ անմեղը . . . Ուրեմն երթայք բար-
 եա՛ւ տէր իմ:

Ասթօլ . — Ձգիտեմ թէ ուրիշ անգամ ալ պիտի կարե-
 նամ ձեզ տեսնել . . . բայց Աստուած վարձատրէ զձեզ
 բարի Լուիճի, որ զաւակս ինձ կը յանձնէք անվտանգ:

(Շորտոս Դիճի)

Լուիճի . (Մինակ) — Ահաւասիկ օրհնութիւնն մ'ալ գող-
 ցանք, իսկ այս ոտակին գալով՝ շատ արդարութեամբ
 առնուած ստակ մը եղաւ:

Լինտա . (Ներսէն յոյ գրեթէ զարնելով) — Լուիճի, Լուիճի:

Լուիճի . — Ա՛ . քիչ մնաց մտքէս պիտի ելլէի՛ր կնի՛կ:

(Կլկած դուրսէ քանայ.)

ՏԵՍԻԼ ԺԱ .

Նոյն և Լինտա (Արտաստակով)

Լինտա . — Ահ, Լուիճի, մեռաւ խեղճ տղան, մեռա՛ւ .

Լուիճի . — Իմացայ . այո, ես ալ կը մեղքնամ այդ պղզ-
 տիկ արարածը . . . բայց ի՞նչ կընանք ընել . . . ձեռ-

Լինուս Ի՛նչ կուգայ . . . Տէր ետ և Տէր էառ, կըսէ Դաւիթ ,
ասոր հետ մեկտեղ , այնչափ ցաւելու չենք , որովհետեւ
մեր հարազատ զաւակը չէր : Օ՛ն ուրեմն , մխիթարուէ՛ ,
հոս նայէ , հոս , ահաւասիկ քսակ մը սսկի .

Լինտա . — Ոսկի՛ , . . . ո՞ւսկից ձեռք ձգեցիր .

Լուիճի . (Ձայն Խորը Գանչով) Նայէ՛ ,

Լինտա . — Մեկնելու մօտ ձիաւոր մը ,

Լուիճի . — Փրանչէսպիսի հայրը .

Լինտա . — Իւր հայրը , Ասթօլֆօ՞ն .

Լուիճի . — Ար տղան առնելու եկած էր .

Լինտա . — Աստուած՝ իմ . և դու ամեն բան իմացուցի՞ր
իրեն .

Լուիճի . — Ոչ .

Լինտա . — Ի՛նչպէս ,

Լուիճի . — Չե՞ս հասկնար կնի՛կ .

Լինտա . — Ի՞նչ ըրիր .

Լուիճի . — Ձաւակը իրեն յանձնեցի .

Լինտա . — Բայց ո՞րը .

Լուիճի . — Փրանչէսպօն .

Լինտա . — Տղուն դահլիճը .

Լուիճի . — Ձայն գրկացը մէջ սեղմեց և ճշմարիտ հօրմէ
մը աւելի՛ երջանկացեալ մեկնեցաւ . (Կնի՛կ ապիւրջը հաճել)

Լինտա . — Ա՛հ , թշուա՛ռ մարդ , զանի այսպէս խաբե՛լ ,
բայց օճիր մ՛է .

Լուիճի . — Ոճիր մի՛ . կորէ՛ր սընկէց , զայն մեծ յու-
սահատութենէ մը և քեզ ալ պզտիկ թշուառականէ մը
ազատեցի . միանգամայն այն պզտիկ թշուառական տղան
որ օր մը անշուշտ հօրը պէս աւազակ պիտի ըլլար , ահա-
ւասիկ մեծ իշխանի մը ժառանգորդ ըրի . . . 1100 ոս-
կին ալ այս հանուէն դուրս է : Աշխարհիս վրայ ուրիշ
գործ մը գտիր ինձի որ ասկէ աւելի բարի ըլլայ .

Լինաա. — Ա՛հ Լուիճի, վատութիւն է այդ. (Ձախը բռն առնէ և ծորնը և յետեւը երկնելով) Խեղճ աղայ, դահիճըդ քեզ կը յաջորդէ:

Լուիճի. (Մտալը խորտելով) — Հաշիւը շիտակ է . . . հիմա գործին մնացած մասը նույինք:

ՏԵՍԻԼ ԺԲ.

Նոյնք, Ֆիլիփփո, Սափիօլա և այլ Աւազակք

Ֆիլիփ. — Ձիաւո՛ր մը որ սա կողմէն կը փախչի. . .
 ա՛հ, Լուիճի, մատնեցի՛ր զմեզ:

Լուիճի. — Սատանա՛ն տանի ձեզ:

Ֆիլիփ. — Շո՛ւտ, Սափիօլա, սա աջ կողմէն փախչող մարդուն և ձիուն վրայ կրակ բրէք.

Սափիօ. (Խորը վաղէ և հրացանը դարդէ:)

Լուիճի. (Մափօլակ Կոկորդէն բռնելով) — Ա՛հ թշուառական, արդեօք ձի՞ս սպաննեցիր:

ՉԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ



ՊԱՏԿԵՐ Բ.

(Ա.Ռ.Ա.ՋԷՍԳՈ ԿԱՐԾԵՑԵՍԱԼ ՀԱՐԱՉԱՏ)

(ՖՐԱՆՉԷՍԳՈ ԿԱՐԾԵՑԵՍԱԼ ՀԱՐԱՉԱՏ)

Տեսարանն է Մանթուի դքսական պալատին մէկ սրահը,
Խորը և երկու կողմը դռներ :

ՏԵՍԻԼ Ա.

Իշխանուհին Լէօնօռա և Դքսուհին Պիանգա (Նոպոլ)

Լէօնօռա.— Մտատանջութենէս կը մեռնիմ, սիրելիդ իմ
Պիանգա, ահաւասիկ այս վեցերորդ օրն ալ կանցնենք ա-
ռանց իմ սիրելի Բաօլօէս լուր մը առնելու :

Պիանգա.— Հանդարտեցէք, տիկին, արդէն կը յիշեմ թէ
հայրս Ֆէրարի դուքսը զիս Ձեր վսեմութեան քով բերած
ատեն դուք կը դողայիք ձեր անդրանիկ որդւոյն վրայ,
սր վենետիկցոց օգնելու համար Մանթուի դքսութեան
արի բանակաց գլուխն անցած էր, և ասկէ մեկնելուն հե-
տեւեալ օրը Հունգարացոց դէմ տարած այն մեծ յաղ-
թութեան լուրը առիք. այս անգամ ալ կը յուսանք թէ
այնպէս պիտի ըլլայ :

Լէօնօ.— Բայց մտածեցէք անգամ մը թէ՛ ամբողջ վեց
օր է իւր վրայօք լուր մը առած չենք. այս մասին ոչ պատ-
գամաւոր մը և ոչ ազդարարութիւն մը եկած է մեզ Ման-
թուէն. ընդհակառակն, մատնութեան և թշնամւոյն ծախ-
ուած ըլլալու տարածայնութիւն մը կը պտտի :

Պիան. — Սակայն, տիկին, տակաւին հաստատութիւն գտած չէ այս ազետարեր տարաձայնութիւնը երկինք, որ ուրիշ անգամներ օգնած է ձեզ այնչափ վտանգներէ ազատուելու համար, այս անգամ ալ չպիտի թողու որ զրրկուիք ձեր անդրանիկ զաւկէն՝ որ իւր մօրը անուանը պառնու և հօրը դահուն նեցուկն է:

Լէօնօ. — Երկինք . . . ահ ինչո՞ւ ինձ երկնից խօսքը կրնէք, որ թերևս իրեն դէմ մեղանշելուս համար հիմա իւր բարկութեան շինթերը գլխուս վրայ կիջեցնէ:

Պիան. — Երկինք զՁեզ պատուհասե՛ն . . . զՁեզ տիկին, որ այնչափ բարի և սիրամած էք. ի՞նչ ըսեւ կուզէք այդ խօսքերով:

Լէօնօ. — Աւա՛ղ, անարդարանալի յանձանք մը գործած եմ, Պիանիգա, խիստ անարդարանալի, այն է՝ կրտսեր զաւկէս աւելի անդրանիկ որդիս սիրելու: Մայր մը իւր սէրն ու գորովը հաւասարապէս պէտք է որ բաժնէ իւր ազոցը վրայ. բայց իմ մասին չգիտեմ թէ ինչո՞ւ համար այս նախապատուութիւնը հակառակ կամաց տեղի ունեցաւ: Ասկէց 17 տարի առաջ արիւնուու շտ Պօնաքօսի մարդկանց ձեռքէն փախչելու ատենս, բազկացումջ ունենալով Բաօլօս, իւր անմեղ գլուխն ալ իմ և հօրը նման վտանգի մէջ ըլլալը ինձ աւելի ցաւ և կսկիծ պատճառելուն համար է արգեօք որ զինքն աւելի կը սիրեմ. բայց ինչ որ ալ ըլլայ՝ երբոր դուքսը հեռու ինձմէ օտարականներէ սնուցեալ ծրանչէսգօ կրտսեր որդիս ինձ ներկայացուց, սիրտս իւր տեօլեան ամենին չզգաց այն համակրանքն ու զգացումը՝ որ կը յուսայի: Ահա այս է իմ յանցանքս, զոր ամօթալից կը խոստովանիմ քեզ Պիանիգա, տկամայ գործուած յանցանք մը, որոյ համար Աստուած զիս կը դատապարտէ և շատ անգամ կը պատժէ այնպիսի մայրերը, անոնց այն կոյր գորովանաց առարկայն շանթահարելով:

Պիան. — Սակայն Բաօլօ իշխանը իւր բարի յատկութիւններովը ձեր ամեն գորովանացը արժանի է :

Լէօնօ. — Այո, ազնիւ երիտասարդ մ'է Բաօլօս. այնչափ գեղեցիկ՝ որչափ քաջ. հաւատացէք մօր մը խօսքերուն Պիանգա, թէ երջանիկ նշանած մ'էք դուք :

Պիան. — Տի'կին .

Լէօնօ. — Ո՛հ, խիստ երջանիկ եղաւ այն օրը ինձ համար, երբ ընտանիքէս սերացած իշխանի մը հետ կնքելիք դաշնագրութեան գաղափարը յղացայ, որուն այնչափ քաջութեամբ օգնեց իմ ամուսինս և իւր գահը յաջողեցաւ ձեռք բերել . . . բայց ի՛նչ ունիք, գլուխնիդ անդին դարձուցեր խռոված կերեւիք . արդեօք ձեզ վախ կը պատճառէ այս ամուսնութիւնը .

Պիան. — Վախ կըսէք, տիկին, և ինչո՞ւ վախնամ, մինչ տակաւին երիտասարդ իշխանը ճանչելու պատիւն ունեցած չեմ, բայց եթէ միմայն իւր քաջասարտութեանց պատմութիւնները լսելու բարեբաղդութեանն արժանացած .

Լէօնօ. (Զոյն շէրեւէ) — Բայց դուք կը ճանչնաք անոր եղբայրը, այսինքն Ֆրանչէսքօ իշխանին վրայ ի՛նչ գաղափար ունիք .

Պիան. — Բոլոր աւագանին կը զարմանայ Ֆրանչէսքօ իշխանին գթասրտութեանը, բարերարութեանը և անխըռով քաղցրութեանը վրայ. ուրեմն արժանի է նորին վստահութիւնը իմ յարգանացս և վստահութեանս .

Լէօնօ. — Բայց անոր հետ աեծուած ատեննիդ իւր եղբորը վրայօք ի՛նչ կերպով խօսած է ձեզ .

Պիան. — Խանդակաթ և անկեղծ սիրով մը, ցաւելով միանգամայն իւր ամենասիրելի Բաօլօ եղբոր բացակայութեանը վրայ որ իրեն հաճելի երկցող մեր ամուսնութիւնը երկարաձգելու պատճառ եղած է, որով զիս իւր քոյրը պիտի անուանէր :

Լէօնօ.— Ուրեմն ի՛նչպէս կըլլայ որ Ֆրանչէսո֊ո իւր հօրը դքսին կիմացնէ թէ դուք այս ամուսնութեան ոչ հաճութիւն և ոչ ալ պատրաստութիւն ունիք:

Պիան. (Խռովեալ , յորս) — Ո՛վ երկինք . . . ատիկայ ըսած է :

Լէօնօ.— Երէկ իսկ :

Պիան.— Արդե֊օք սրտիս ամեն գաղտնեացն ալ տեղեակ է :

Լէօնօ.— Տեղեակ . . . ի՛նչ ըսել կուզէք , բացայայտ խօսեցէք :

Պիան.— Ոհ, տիկին, չպիտի կրնամ համարձակիլ :

Լէօնօ.— Վստահ եղիք , հոս մէկը չուզեր ձեր կամքը բռնաբարել , բայց ես իրաւունք ունիմ , ինչպէս որ դուք ալ կը վկայէք ճշմարտութիւնը իմանալու . տեսնենք , խօսեցէք . ի՛նչ կը նշանակէ ձեր այդ յուզմունքը . միթէ ազատ չէ՞ ձեր սիրտը Պիանգա :

Պիան.— Ուրեմն տիկին , ամեն բան իմացէք : Ասկէց քանի մը ամիս առաջ , նոր դքսին թագադրութեան հանդի֊ին ներկայ գանուելու համար մօրաքեռու էսթի դքսուսուհւոյն հետ վենետիկ գացած էի . իրիկուն մը մեծ ջրանցքին վրայ մեր նաւակը երիտասարդ պարօնի մը նաւակին հանդիպեցաւ , որ շուայասարանէ մը դուրս կ'ելլէր , և որ անամօթաբար զմեզ անարգեց . օգնութեան աղաղակ բարձանք , բայց աւանդ , մեր նաւովարներն առաջուց կաշառուած էին , երկու սրիկայներ դքսուհւոյն բռնած էին որ արգելք չըլլայ , և մինչդեռ թշուառականը զիս կը բռնադատէր իր նաւակն անցնելով պալատն երթալու , իմ հանած աղաղակներէս յանկարծ երիտասարդ ազնուական մը վրայ հասաւ իր ծառաներովը , զիս առեանդել ուզողին հետ սուրը խաչաձևելով զայն սպաննեց և զիս ազատեց . շնորհակալեաց յայտարար մի քանի խօսքեր թոթովելու և

անոր հետ նայուածք մը փոխանակելու հազիւ թէ ժամանակ ունեցայ, վասն զի զիս ազատելով մօրաքեռս գիրկը յանձնելէն ետքը շտապաւ հեռացաւ. անշուշտ խոհեմութիւնը ու աղնուասրտութիւնը զինքն ստիպած էր իւր ոլըլալը մեզմէ ծածկել, որովհետեւ այն վայրկեանէն վերջը ալ զինքը չի տեսայ. . . սակայն վայրկեան մը բաւական եղաւ ինձ նորա յիշատակը հոգւայս մէջ քանդելու, և կարծեմ թէ աւա՛ղ անկէց չպիտի սրբուի մինչև յաւիտեան, Կը ներէ՞ք հիմա ինձ տիկին:

Լէօնօ.— Այո՛, սիրելի զաւակս, կը ներեմք քեզ այդ բռնական ճշմարիտ զգացմանդ համար որ միմիայն այսպիսի դէպքէ մը կրնար յառաջ գալ, բայց թողէք ինձ յուսալ թէ ժամանակը և մեր խնամքները պիտի կարենան այդ յիշատակը ձեր սրտէն ջնջել և օր մը զձեզ իմ ազջիկս անուանել:

Պիան.— Տիկին.

Լէօն.— Այդ անծանօթը ա՛լ չպիտի տեսնէք, ուրեմն. . . բայց ահաւասիկ դուքսը . . . ամենեւին մի՛ վախնաք Պիանդա այն դաղտնեաց համար զոր ինձ հաղորդեցիք:

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք, Կուխտօ և Անթօնիօ

(Կուխտօ համբարայն յարտօժանայ մտազբող և քաց նամակ մը էայ յետքը. էսէ Անթօնիօ ինքը կենայ.)

Լէօնօ.— Ա՛հ, տէր իմ, ի՛նչ կը նշանակէ այդ նամակը Ձեր ձեռացը մէջ, արդեօք զաւկէս բարի լո՛ւր մը. . .

Կուխտօ.— Ո՛չ Լէօնօսա, միշտ միևնոյն անստղուածեան մէջ եմք, մեր զրկած պատգամաւորները տակաւին չի վերադարձան, ասիկա Ֆէրարի դքսին մէկ նամակն է:

Պիան. (Ձրգմանով) — Հօրմէ՛ս . . .

Կուրի. — Այո Պիանգա հօրմէդ, որ ձեր իւր գրկէն այս չափ ատեն հեռանալէն զգացած արտամութիւնը կը նկարագրէ, յայտնելով միանգամայն թէ ծերութենէ և հիւանդութենէ տկարացած մարմինը ձեր խնամոցը կը կարօտի, ասկէց զատ, կը խնդրէ նաև որ ձեր հարսանիքը իւր ներկայութեանը կատարուի խօսեցելոյդ Բաօլօ իշխանին վերագարձէն անմիջապէս ետքը, ուստի Ֆէրարի մէջ պիտի սպասէք իշխանին և այս երեկոյ ճամբայ պիտի ելնէք ձեզ վայել ուղեկից գնդով մը:

Լէօնօ. — Այո իրիկուն . . .

Կուրի. — Դքսին կամքը անդառնալի է. ուրեմն Լէօնօսա ձեր հաւատարիմ ազախիներէն մին ընտրեցէք որ դըբուհւոյն պիտի ընկերանայ:

Լէօնօ. — Եկուր ուրեմն դուստր իմ սիրեցեալ, ի միասին անցնենք այն վերջին վայրկեանները զոր տակաւին հոս պիտի անցնես: (Պեանգայի հետ մինչև)

ՏԵՍԻՆ Գ.

Կուրիսօ, Անթնիօ (Երբ) Պէբօ

Կուրի. — Խեղճ կին, որչա՛փ մեծ պիտի ըլլայ իւր ցաւը ըստ իմ համոզմանս . . . ո՛հ, այս լուութիւնը անբացատրելի է և անտանելի, եթէ տակաւին երիտասարդ ըլլայի՛ անձամբ կերթայի Բաօլօս տեսնելու: Անթօնիօ, Ֆրանչէսգօ իշխանը ինձ կանչեցէք: (Նորի է գահ)

Անթ. (Զանգուիլ զարնէ, Պէբօ վաղելով մտնէ)

Պէբօ. — Է՛, է՛, քիչ մը կամաց, ականջիս թմբուկը պիտի ճաթեցնէիր, գիտե՛ս:

Կուրի. — Անկիրթ . . .

Պէբօ. — (Ստորագահոց) Նորին վսեմութիւնը . . .

Անթ.— Տէր իմ, այս մարդը Պէթօ Քարօնին է, տեսակ մը խենդ՝ զոր Ֆրանչէսքօ իշխանը իւր ծառայութեանը կը գործածէ չգիտեմ ի՛նչ պատճառաւ:

Պէթօ.— Կարեկցութեան պատճառաւ տէր իմ, միմիայն կարեկցութեան պատճառաւ, կըսէ թէ ես խիստ պարզ մէկն եմ աշխատելու համար. . . և զիս կը գործածէ բան մը չընելու համար. . . հազիւ թէ աշխատութենէս կը դադրէի՛ երբ Տիար Անթօնիօ զիս ընդմիջեց:

Անթ.— Գնա՛ իշխանին իմացուր որ Նորին վսեմութիւնը կուզէ զինքը տեսնել:

Պէթ.— Ե՞ս, ե՞ս անոր իմացնեմ, լաւ. բայց եթէ շատ սախողական գործ մ'է, գացէք դուք անձամբ իմացուցէք:

Անթ.— Ի՞նչ կըսես, յի՛մար, ի՞նչ կըսես:

Պէթ.— Ներեցէք. . . ըսել կուզեմ թէ չենք կրնար այս միջոցիս անհանգիստ ընել իշխանը, որովհետեւ. . .
(Ա.Է իւրէ Գոռը Բայոն) Բայց անհաւաստիկ իշխանը:

ՏԵՍԻԼ Գ.

(Նոյնք, Ֆրանչէսքօ, որ խոնարհութեամբ մտնէ և պարզ զգեստներ հագած է. ետեւէն Սթօլէթթա կը օճաւորի զգեստով կը մտնէ:)

Ֆրան. (Սթօլէթթային) — Առէ՛ք այս քսակը հա՛յր, և իմ ամենասիրելի Բաօլօ եղբորս բարեյաջող վերադարձին համար աղօթքներ ըսել տուէք բոլոր վանքերուն մէջ:

(Սթօլէթթա Կանց Կոռն Դիւն Խորէն)

Կուի.— Շատ բարի գործ մ'է այդ ըրածդ որդեակ իմ:

Ֆրան. (Զօրեւոր) — Հայր իմ, դուք հո՞ս էիք:

Կուի.— Մեծ խնդրոյ մը վրայ խորհրդակցելու համար զքեզ հոս կանչեցի:

Փրան՝ — (Խնարհութեամբ) Աւա՛ղ հայր իմ, պատրաստ եմ յօժարակամ զձեզ մտիկ ընել ցորչափ ալ տխրութեանց մէջ լինիմ, բայց Ձեր վսեմութիւնը թող ի նկատի առնու այսպիսի գործերու մէջ իմ ունեցած անյարմարութիւնս, ոչ փառասիրութիւն ունիմ և ոչ ալ հանճար, Բաօլօ եղբայրս հռչակաւ որ հանդիսացած է թէ պատերազմի՝ և թէ Ձեր խորհրդոցը միջամտելու ունեցած յատկութիւններովը, իրեն համար են ամեն փառք և ձեզ յաջորդելու բաղդը . իսկ իմ բաժինո է առանձնութեան մէջ անցնել ժամերս և մանաւանդ Ձեր ամեն կամացը հնազանդիլ :

Կուի, — Եւ ես այդ հնազանդութեանդ համար զքեզ հոս կանչեցի :

Փրան՝ — Ուրեմն ի՞նչ կը հրամայէք հայր իմ :

Կուի. — Վերջին ծայր պարկեշտութիւնդ զքեզ կը կուրացնէ որդեակ իմ, բայց ես քեզմէ աւելի ճանչցած եմ քու արժանիքդ . Բաօլօի բացակայութեան ատեն պէտք է դու կատարես այն դերը՝ որ Կօնզակուէի տան մէկ իշխանին կը վերաբերի . պէտք է որ անձամբ Վենետիկ երթաս եղբօրդ վիճակէն ճշգրիտ տեղեկութիւններ սաանալու, հօն, եթէ դժբաղդութիւն մը պատահած է իրեն . . .

Փրան. — Ա՛հ, իցի՛ւ թէ Աստուած զմեզ այդպիսի դժբաղդութենէ մը զերծ պահեր :

Կուի. — Ես կ'երազեմ որդեակ իմ և չեմ ուզեր դժբաղդութիւններ նախագուշակել, սակայն եթէ եղբայրդ այս միջոցիս դժբաղդութեամբ մը իր բանակին գլուխը չի գտնուիր, պէտք է որ իմ անուամբս մեր դաշնակից զբարսութեանց մէջ պատուաւոր կերպով խաղաղութեան դաշնագիրն դու ստորագրես :

Փրան. — Կը հասկնամ տէր իմ :

Կուի. — Բայց տակաւին ամեն ընելիքներդ չիմացուցի :

Փրան. — Ուրեմն բարեհաճեցէք իմացնել :

Կուի.— Ֆէրարի դքսութեան պալատը գրեթէ ձեր ճամբուն վրայ կիյնայ, օրիորդ Պիանդան, ձեր եղբօր նը-
շանածը իւր հօրը վերագարձնէք :

Ֆրան.— Ա՛հ.

Կուի.— Սրդեօք այս պաշտօնը անհաճո՞յ կը թուի ձեզ.

Ֆրան.— Ոչ տէր իմ, ոչ, Ձեր այս հրամանն ալ պիտի
կատարեմ:

Կուի.— Պիտի բացատրեք դքսին այն աղետալի պատ-
ճառները, որ կ'երկարաձգեն այս ամուսնութիւնը, որուն
երկու դքսութեանց ալ մեծ օգուտ ունենալը հասկցած
եմք, վասն զի մենք երկու դաշնակիցքս միանալով կրնանք
բոլոր իտալիոյ իշխանութեանց թշնամութիւններէն ազատ
մնալ. Յայտնե՞մքեզ վերջապէս որդեակ իմ ինչ որ կը մը-
տածեմ, կուզեմ որ եթէ իմ անդրանիկ զաւակս, գահոյս
ժառանգորդը անագորոյն բաղդին հարուածոցը տակ ճըն-
շուած է . . .

Ֆրան.— Ա՛հ, տէր իմ, ես այդ կերպով ըլլալիք իշխա-
նութիւնը ամենեւին չեմ ընդունիր:

Կուի.— Հանդարտէ որդեակ իմ և ինձ մտիկ ըրէ, կու-
զեմ աշխարհի ցուցնել իմ արիւնէս իշխան մը՝ իբր հօրը և
եղբօրը արժանի յաջորդ: Առ այժմ ասկէց աւելի ըսելիք
մը չունիմքեզ: Այս իրիկուն պիտի մեկնիք, բայց մեկնե-
լէ առաջ պարտիք ինձ ներկայանալ վերջին հրամաններս
առնելու համար:

Ֆրան.— Հա՛յր իմ: (Կուիոյ յետք երկնցնէ, Ֆրանկոյ շոյ
համբուրելն ետք ծոած կը շոյ մնա որ Դաւոյն մնի:)

ՏԷՍԻԼ Ե .

Փրանչէսգօ (Ասայիս)

(Շփոհելով) Վերջապէս ամեն բան իմ շինած յատակա-
 դժիս համեմատ կընթանայ . . . հօրս պատգամաւորները
 մէկիկ մէկիկ ծուղակս ինկան . Բա՛սլօ եղբօրս նամակները
 իմ կողմնակիցներուս ձեռքը արգիլուեցան և կամ թըշ-
 նամուոյն ձեռքը հասան , ինքն ինկ վերջին պաաներազմին
 մէջ յաղթուած և իրեններուն մատնութեամբը թշնամուոյն
 ձեռքը գերի ինկած ըլլալով անշուշտ մինչև հիմա փառա-
 ւորապէս մեռած է , և այս բօթարեր լուրը շատ չի քշեր
 մեր ականջացը պիտի հասնի . սղբոց և վայոց սարսափելի
 աղաղակներով արձագանք պիտի առնուն պալատիս պա-
 տերը . . . այո՛ , Սբօլէթթա իւր դերը աղէկ կատարեց . .
 ինձմէ ընդունած ոսկիները իւր հաւատարիմ ընկերացը
 բաժնեց . . . և ես այսօր ի Ֆէրար պիտի տանիմ այն
 սքանչելի Պիանգան , եղբօրս նշանածը , այն երկնային գե-
 ղեցկութեան տիպարը՝ զոր ամեն անգամ տեսնելուս մար-
 մինս կը դողայ և ցուրտ քրտինք մը վրաս կը տարածուի :
 (Գիւ ճե Գրաթելէն Երգ) Աղէկ խաղացիր , աղէկ ներկայացու-
 ցիր քու դերդ . Փրանչէ՛սգօ . . . ինչո՞ւ համար բողբը զքեզ
 կրտսեր ծնած է , մինչդեռ անդրանիկ լինելու կոչումն ու-
 նէիր . բողբէն այնչափ սիրեցեալ և փառաւորեալ այդ
 անդրանիկը , մօրմէն ինձմէ նախապատիւ համարուած այդ
 զաւակը որ բողբաւոր ծնունդ , պատերազմի փառք և իշ-
 խանական պերճութիւնք անպակաս կը վայելէ՛ չգիտէ թէ
 ես . . . ես անգոսնեալս . . . ես այս խորխոր կօնդակուէի
 տան անարգուած կրտսեր որդին , ես ալ ատելութեան և
 շահու մեծ հանճար մը ունիմ . (Խնդրուով) այո՛ , այո՛ , հա-

լասար են մեր զէնքերը, վեր ի վերոյ չգիտեմ ի՞նչ տը-
ղայական երազ մը կը յիշեմ. . . եղբօրս դէմ բարկանա-
լով զինքը բռնեցի և խոր անդնդի մը մէջ գահավիժեցի,
ուսկից հանեցին իւր արիւննաթաթախ և անշնչացեալ մար-
մինը. միթէ ասիկայ իմ ապագայ բազդս չէ՞ր որ նախա-
գուշակ եղաւ ինձ, թող ուրեմն երազն իրականութեան
փոխուի, այլ ի՞նչ կըսեմ, կատարուած է արդէն ամեն
բան, զի Բաօլօ մեռած է անշուշտ :

ՏԵՍԻԼ 2.

Նոյն և Պէքօ

Պէք. — Տէր իմ. . . ինքը . . . բանը . . . այսինքն . . .
պատգամաբեր մը հասաւ :

Ֆրան. — Պատգամաբեր՞ մը . . . վենէտիկէ՞ն .

Պէք. — Այո տէր իմ, և Բաօլօ իշխանը, . . .

Ֆրան. — Յառաջ տար, խեղճ եղբայրս մեռած է .

Պէք. — Ոչ, կը վերադառնայ,

Ֆրան. (Երեք երկուք) — Կը վերադառնայ,

Պէք. — Ահ, ի՞նչպէս ալ Ձեր անոր բարեյաջող վերա-
դարձին համար ըսել տուած աղօթքները լսելի եղան ա-
ռաջի Աստուծայ :

Ֆրան. — Բայց անկարելի է այդ, կը խաբուիս. եղբայ-
րըս ազատած :

Պէք. — Մանաւանդ յաղթող հանդիսացած, կ'երևի թէ
առաջ ծուղակը ինկած է եղեր, բայց ետքը հրաշքով մը
ազատած ըլլալու է, իւր քաջասարաութիւնը և սուրը, . . .
երկնցներմ, երբոր ինքը վերադառնայ, ինձմէ աւելի կըլ-
նայ ձեզի բացատրել :

Ֆրան. (Մեկուսի) — Ահ, բոլոր ջանքերս ի դերն կ'ել-

լեն, և արդեօք մատնուեցա՞յ. . . (Բարձր) Պէ՛րօ, ինծի կանչէ Սբօլէթթան:

Պէր.— Ո՞ր Սբօլէթթան.

Ֆրան.— Քիչ մը առաջ ասկէց մեկնող մարդը:

պէր.— Հա՛, Սբօլէթթա՛ է անոր անունը. (Դրո՞ն էքն-բո՞ւնն և նոստաբանայ յայն,) ահաւասիկ տէր իմ, եղբայր-նիդ կը վերադառնայ. կը լսէ՞ք.

Ֆրան. (Մեկնո՞ն) — Ա՛հ, փոխանակ յուզարկաւորութեան հանդէսով դալու, յաղթական փառօք կը վերադառնայ. . . խաբեցին զիս, խաբեցին. . . սակայն չի վհատինք և դարձեալ գործենք:

ՑԵՍԻԼ Է.

Նոյնք, Կուխտօ, Լէօնօւա, Բաօլօ, Անթօնիօ և Ժողովուրդք

Ժողովուրդք.— Կեցցէ՛ Բաօլօ իշխան:

Լէօնօւա. (Գրէ՛ զԲաօլօ) — Բաօլօ՛, զաւակս:

Ֆրան. (Բաօլօն գրէ՛ Նեդոն) — Ա՛հ, սիրելի եղբայր, արդեօք իրա՛ւ է որ երկինք զքեզ իմ գորովանացս կը յանձնեն:

Բաօլօ.— Սիրելի Ֆրանչէսքօ, ասկէ աւելի նուազ գորով չէի սպասեր ձեզմէ. երբ մահը ի մօտոյ կը տեսնէի, զիտէ՞ք ի՞նչ բան էր զիս մխիթարողը, կը մտածէի թէ հօրըս դահուն նեցուկ եղբայր մ՛ալ տակաւին ունէի. որ. . .

Լէօնօ.— Ա՛հ, մի՛ այդպէս խօսիր, որդեակ իմ, եթէ դու մեռնէիր, ես ալ քեզմէ անմիջապէս ետքը պիտի մեռնէի. . .

Ֆրան. (Մեկնո՞ն) Կ'երևի թէ իւր կրտսեր զաւակը այնչափ բանի տեղ չի դներ:

Կուրի. — Անթօնիօ, որդւոյս Բաօլօի հետևող քաջ զինակցացս համար ընդունելութեան չքեղ հանդէս մը կատարել պատրաստուեցէք. բոլոր աւագանին թող յաղթական կամարներ կանգնէ անոնց անցնելիք ճամբուն վրայ և կանայք ծաղիկներ սփռեն, իսկ արքունիքս ինձ պիտի ընկերանայ պալատին դրան առջև դիրենք գլխաւորելու:

Ժողով. — Կեցցէ՛ Բաօլօ իշխան:

(Անթօնիօ, պէքօ և Ժողովուրդք մեկնին:)

ՏԵՍԻՆ Ը.

Կուրիօ, Լէօնօսա, Բաօլօ և Քրանչէսպօ

Կուրի. — Որդեակ իմ Բաօլօ, քու վերադարձիդ համար եղած խնդումներէն ու շնորհաւորութիւններէն վերջը կուզեմ ընտանեկան գործոց վրայօք խօսիլ քեզ, զոր արդէն նամակացս մէջ ալ յիշած եմ:

Բաօ. — Ձեր նամակները . . . բայց չգիտէ՞ք թէ անոնցմէ մէկն ալ իմ ձեռքս չի հասաւ:

Կուրի. — Ճշմարիտ է զաւակս, և այս վատութիւնը որ միմիայն պալատիս մէջէն մէկուն գարծն է, ամենասարսափելի կերպով պիտի պատժուի:

Բաօ. — Ներուի ինձ հարցնել հայր իմ, թէ ի՞նչ է ուրեմն Ձեր վսեմութեան նպատակը:

Կուրի. — Քու երջանիկ ամուսնութիւնդ փութացնել:

Բաօ. (Դողահար) — Ամուսնութիւն . . .

Լէօ. — Այո, Ֆերարի երիտասարդ դքսուհւոյն հետ, որոյ հայրը մեզ յանձնած էր զինքը:

Բաօ. — Բայց ես երբէք ճանչցած չեմ երիտասարդ դքսուհին:

Կուրի. — Կատարեալ աղջիկ մ'է, որոյ արժանիքն ու գեղեցկութիւնը մօրդ կողմանէ ստուգուած է, և որ ձեզ

Կուի. — Անթօնիօ, որդւոյս Բաօլօի հետևող քաջ զինակցացս համար ընդունելութեան չքեղ հանդէս մը կատարել պատրաստուեցէք. բոլոր աւագանին թող յաղթական կամարներ կանգնէ անոնց անցնելիք ճամբուն վրայ և կանայք ծաղիկներ սփռեն, իսկ արքունիքս ինձ պիտի ընկերանայ պայատին դրան առջև զիրենք գլխաւորելու: Ժողով. — Կեցցէ՛ Բաօլօ իշխան:

(Անթօնիօ, պէթօ և Ժողովուրդք մեկնին.)

ՏԵՍԻԼ Ը.

Կուիտօ, Լէօնօւա, Բաօլօ և Ֆրանչէսքօ

Կուի. — Որդեակ իմ Բաօլօ, քու վերադարձիդ համար եղած խնդումներէն ու շնորհաւորութիւններէն վերջը կուզեմ ընտանեկան գործոց վրայօք խօսիլ քեզ, զոր արդէն նամակացս մէջ ալ յիշած եմ:

Բաօ. — Ձեր նամակները . . . բայց չգիտէ՛ք թէ անոնցմէ մէկն ալ իմ ձեռքս չի հասաւ:

Կուի. — Ճշմարիտ է զաւակս, և այս վատութիւնը որ միմիայն պալատիս մէջէն մէկուն գործն է, ամենասարսափելի կերպով պիտի պատժուի:

Բաօ. — Ներուի ինձ հարցնել հայր իմ, թէ ի՞նչ է ուրեմն Ձեր վսեմութեան նպատակը:

Կուի. — Քու երջանիկ ամուսնութիւնդ փութացնել:

Բաօ. (Դողահար) — Ամուսնութիւն . . .

Լէօ. — Այո, ֆերարի երիտասարդ դքսուհւոյն հետ, որոյ հայրը մեզ յանձնած էր զինքը:

Բաօ. — Բայց ես երբէք ճանչցած չեմ երիտասարդ դքսուհին:

Կուի. — Կատարեալ աղջիկ մ'է, որոյ արժանիքն ու գեղեցկութիւնը մօրդ կողմանէ ստուղուած է, և որ ձեզ

բայակոյուծեանը միջոցին ունեցած վախերնուս ընկերացած է. թէ եւ կուզէի որ օրիորդ Պիանգա ալ ձեր վերագարձի ուրախութեանց մասնակցեր. . .

Լէօնօ. — Պիանգա ուզեց այս առաջին վայրկեանները ծնողացդ այլալլանացը թողուլ և իր մեկնելու պատրաստութիւնները . . .

Բաօ. — Մեկնելո՞ւ . . .

Կուի. — Հայրը իւր քով կը կանչէ զինքը, ուր Պիանգա պիտի սպասէ ձեզ, եթէ հաւանիք իմ անոնց տուած խօսքըս պահել.

Բաօ. — Հայր իմ, ամենեւին ամուսնանալ չէի մտածեր, բայց եթէ այս ամուսնութիւնը ձեր գահուն փառացն և հաստատութեանը պիտի նպաստէ, պատրաստ եմ ընդունելու :

Ֆրան. (Մեկտօ) — Ի՛նչ պող արիւն խօսուածք :

(Իբրեւ ինքուրեան յայտ)

Կուի. — Եկէք տիկին, պալատին պատշգամը երթանք, իշխան մը երբոր քաջ և օրինապահ հպատակացը իւր շնորհակալութիւնքը յայտնել կը պարտաւորի, պէտք չէ որ զանանք ընդ երկար սպասեցնէ : (Կտօնք և Լէօնուս Գրեյն :)

ՏԵՍԻԼ Թ.

Բաօլօ և Ֆրանչէսքօ

Ֆրան. (Մեկտօ) — Արդեօք ինչո՞ւ խռովեցու . (Բաբէ)

Բաօ. — Ի՛նչ կըսես Ֆրանչէսքօ, հոս ոչ իշխան կայ և ոչ վսեմութիւն, այլ երկու եղբայրներ . . . մինակ ենք, և պատերազմի հոգերէ վերջը ուրիշ բանի չեմ կարօտիր, բայց եթէ ընտանեկան քաղցը գորովանաց և ուրախութեանց.

Ֆրանս.— Ես հակառակը կը մտածէի, տեսնելով ձեր այնչափ զգուշաւոր դիրքը որ խիստ կը նեղուէիք չի մատուցուելու համար:

Բաօ.— Դուք նշմարեցի՞ք զայն .

Ֆրանս.— Այո, երբ հայրս այն ամուսնութեան վրայօք կը խօսէր ձեզ:

Բաօ.— Այդ ամուսնութի՛ւնը . . . այո՛, ճշմարիտ է, բայց ես ուրիշ պատճառաւ խռովեցայ:

Ֆրանս.— Եւ այդ պատճառը արդեօք քու եղբայրդ չի՞ կրնար իմանալ:

Բաօ.— Ինչո՞ւ չէ . ահա կիմացնեմ թէ այս ամուսնութեան պազ աչօք նայելուս պատճառը ոչ այլ ինչ է, բայց եթէ արդէն ուրիշի մը սիրոյն գերի ըլլալս:

Ֆրանս.— Ուրիշի՞ մը . (Ուրտի) ա՛հ խօսէ եղբայր իմ, խօսէ, չես կրնար երեւակայել թէ որչափ եռանդով ու սիրով կապուած եմ այդ (Յաշտէրե՞ս) ամեն բաներուն որ քեզ կը պատկանին:

Բաօ.— Ահ, եղբայր իմ, ըսէ ինձ թէ ես խենթ մ'եմ և թերևս յանցաւոր մը, որ անձա՛օթ ազնկան մը համար այսպիսի անյոյս զգացում մը սրտիս մէջ կը պահեմ. հըրեշտակի մը համար, զոր աւա՛ղ, մէկ մ'ալ տեսնելիք չունիմ. . . Ս'հ, օգնէ՛ ինձ եղբայր իմ այս սիրոյ դէմ բացած պատերազմիս յաղթող հանդիսանալս, ապա թէ ոչ նա պիտի փութացնէ իմ մահս և պիտի յաղթահարէ զիս:

Ֆրանս.— Ստուած չընէ որ ես քու երջանկութեանդ արդեւք ըլլամ. ե՞ս յաղթեմ քու սրտիդ այդ իրաւացի և մաքուր զգացմանը . . . ո՛հ, ճանչցիր զիս եղբայր իմ, Ֆրանչէսկօ ուրիշ բանի համար չպիտի օգնէ քեզ, բայց Եթէ քու անձա՛նօթ սիրուհիդ փնտուել գտնելու եթէ աչխարհիս մէկ ծայրն իսկ գացած ըլլայ:

Բաօ. — Դո՞ւն . . .

Պրան. — Եղբորդ հաւատարմութենէն կը կասկածի՞ս .

Բաօ. — Ո՛հ, երբէք, երբէք, սակայն հօրս արդար կամ-
քը ի՞նչպէս պիտի մերժեմ:

Պրան. — Բացէ ի բաց մի՛ մերժէք,

Բաօ. — Ի՞նչպէս .

Պրան. — Քիչ մը ետքը երիտասարդ դքսուհին պիտի
մեկնի, այս կողմէն ամենևին հակառակելու բան մը չկայ,
մենք ալ իրեն հետ կը մեկնինք և ուրիշ ճամբէ մը . . .

Բաօ. — Բայց վերջապէս ուչ կամ կանուխ պէտք է ուր
ըլլալնիս հօրերնուս իմացնենք, այնպէս չէ՞. (Յոգնած՝ նստի)
ոհ, ի՞նչ կրնանք ընել ուրեմն .

Պրան. (Անոր մօտեցած, տառապանքով) — Այո՛, ի՞նչ կրնանք ը-
նել, ոհ, եթէ ես ալ քեզի պէս գեղեցիկ ըլլայի, եթէ
դիմաց և խօսքերու պշտանք ունենայի, և մանաւանդ եթէ
կեանքս առանձնութեան նուիրած շըլլայի, կարելի էր որ
միջոց մը գտնէինք:

Բաօ. — Ի՞նչ միջոց:

Պրան. — Այն ատեն ես անձամբ այդ երիտասարդ Պի-
անդան իւր հօրը գիրկը կը վերադարձնէի, որ քու պաղ
շարժմունքներէդ միմիայն քեզ պիտի ճանչնար, և պիտի
սիրէր այն անձը՝ որ զինքը քու պաղ նայուածքներէդ ա-
զատել կուզէր, պիտի պաշտէր իւր աշատարօրը, որ աղ-
քատ մը կամ քեզ նման իշխան մը և կամ մինչև իսկ քեզ
արենակից մէկը եղած ըլլար:

Բաօ. — Ի՞նչ կըսէք. . . ուրեմն դուք կուզէք Պրան-
դայի հետ ամուսնանալ:

Պրան. — Բայց չէ՛, չէ՛. ահ, խենթ եմ ես, ներքե եղբայր
իմ յուսահատ և խռովեալ մտացս շփոթութեանը, քեզ ծա-
ռայելու համար ունեցած ջերմ փափաքս զիս խոտորե-
ռուց . . . Ե՞ս ամուսնանամ, ե՞ս, որ կենացս մէջ կնոջ

մը սիրոյն վրայ ամենեին չեմ խօսած . ա՛հ, ոչ, ոչ, անկարելի է . . . բայց ասկից, միթէ ֆէրարի դուքսը կը հաճի իւր ազջիկն ինձ տալու :

Բասօ .— Այո, դուքսը կը փափաքի այս երկու մեծ դրքսութեանց մէջ խնամութիւն մը հաստատել, որովհետեւ ինքը ձերացած է և գահուն արժանի յաջորդ փեսի մը կը կարօտի, ահա դու շատ յարմարութիւն ունիս իրեն փեսայանալու . իսկ իմ ստանձնած պարտաւորութիւններս զիս կ'ստիպեն միշտ ի Մաթիւս կենալ . մեր հայրն իսկ զայս կը վկայէ, և իւր Ֆրանչէսքօ որդւոյն այս մեծ նըպատակը ինդուլթեամբ պիտի ողջունէ . ա՛հ, եղբայր իմ, ընդունեցէք այս ամուսնութիւնը որով զիս պիտի ազատէք այս դժուարին կացութենէս :

Ֆրանս .— Բայց անկարելի է ըսի .

Բասօ .— Եւ ինչո՞ւ ըլլայ անկարելի .

Ֆրանս .— Վասն զի այն ատեն ամենէն պիտի բամբասուիմ :

Բասօ .— Եւ ես պիտի պաշտպանեմ զքեզ այն ամեն բամբասանաց ու հալածանաց դէմ, զքեզ՝ որ ինձի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաս . ա՛հ, Ֆրանչէսքօ, կը տարակուսի՞ս իմ վրաս .

Ֆրանս .— Ոչ, պիտի հնազանդիմ քու խօսքերուդ :

Բասօ .— Ահաւասիկ կրտսեր եղբօր մը արժանի խոստումը,
(Օրօն-Քեմօ Գրեթոննի .)

ՏԵՍԻՆ Ժ .

Նոյնք և Լէօնօսա

Բասօ .— Ո՛հ, եկէք մայր իմ, եկէք, լըջօրէն խոստովանանք մը ունիմ ձեզ . պիտի իմացնեմ իմ սրտիս գաղափարները, պիտի յայտնեմ նաև գաշինք մը՝ զոր քիչ մը ա-

ուսջ եղբորս հետ կնքեցի . . . ա՛հ, հաւատա՛ ինձ մայր
իմ, թէ Ֆրանչէսքօ իմ հաւատարիմ և անզուգական բա-
րեկամս է :

Լէօ. — Իրա՛ւ . . . ուրեմն շատ երջանիկ եմ Բաօլօ ,
Բաօ. (Մօրը յետք պահէ) — Այս գործին յաջողութեանը
համար ձեր օգնութիւնը շատ պիտի նպաստէ, թոյլ տուէք
ուրեմն այդ մայրական խանդաղատանքը ինձ օգնութեան
կանչել, որ երբէք ստած չէ :

Լէօ. — Եւ որ զքեզ չպիտի խտրէ երբէք որդեակ իմ,
քեզ, ինչպէս որ կը պարտիմ, Ֆէրարի իշխանուհւոյն ներ-
կայացնելէս անմիջապէս ետքը պատրաստ պիտի ըլլամ
մտիկ ընելու :

Բաօ. — Իշխանուհի՛ն կըսէք . . .

Լէօ. — Անոր կ'սպասեմ . (Պիանֆա երջաւանց ընկերայո՞ւ-
թեամբ խորէն կ'երևայ,) բայց ահա ինքը :

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նայնք և Պիանգա

Պիան. (Դասուհւոյն, որ էրէն ծոթեցած էր) — Ա՛հ, կը դողամ:
տիկին .

Լէօ. — Ահաւասիկ իմ անդրանիկս, Բաօլօն . . . աշխար-
հակալ իշխան մը՝ զոր Ձեզ կը ներկայացնեմ :

Բաօ. (Խնայողութեամբ) — Տիկին . . .

Պիան, (Չայն պիտիւնէ Դասուհւոյն) — Ա՛հ, տիկին ,

Լէօ. — Ի՞նչ ունիք,

Պիան. — Ո՛հ, տիկին, այն կենացս ազատարարը որոյ
համար քիչ մը առաջ խօսեցայ ձեզ, ահա ձեր զաւակն է
եղեր :

Բաօ. — Այո եղբայր իմ, այն անձանօթը, որոյ պատ-

կերը որտիս մէջ անջնջելի կերպով նկարուած է ըսի քեզ քիչ մը առաջ, ահա Պիանդա իշխանուհին է :

Ֆրան. (Մեկուսի) — Անէ՛ծք . . .

Լէօ. — Կը սիրէ՞ք ուրեմն զինքը, Քասօ՛ւօ :

Քասօ. — Կը հարցնէ՞ք մայր իմ, իմ բոլոր կեանքս իւր մէկ նայուածքին մէջ էր, ես իրեն համար, իւր յիշատակին համար ինքզինքէս դուրս ելած՝ քիչ մը առաջ անգիտաբար ֆէրարի դքսուհին կը մերժէի :

Լէօ. — Է ուրեմն երջանկացիր որդեակ իմ, վասն զի ինքըն ալ կաթողին կը սիրէ զքեզ. (Պիանդայի շարժումը) ա՛հ, դու խստալանեցար ինձ զայդ դուստր իմ :

Քասօ. — Ո՛վ երջանկութեանս, սիրելիդ իմ Պիանդա . . . (Ֆրանչէտի) բաժնե՛նք քեզի հետ այս երջանկութիւնը եղբայր իմ, . . . այլ եւս քու գորովանացդ կալօտ չեմ, բայց յաւիտեան երախտապարտ եմ քեզ :

ՏԵՍԻԼ Ժ Բ

Նոյնք, Կուխտօ, Անթօնիօ և Պալատականք

Քասօ. — Հայր իմ վեհազուն, Ձեր և բոլոր աւագանեաց ներկայութեանը կը խնդրեմ Պիանդա ա՛խթէ Ֆէրարի դքսուհիէն՝ որ բարեհաճի իւր ձեռքն ինձ նուիրել :

Լէօ. — Եւ ես Ֆէրարի և Էսթի դքսուհեայն Պիանդայի կողմանէ կը պատասխանեմ թէ՛ պատրաստ է յօժարակամ ընդունիլ իմ անդրանիկ որդւոյս Մանդուի իշխանին համբաւաւոր ձեռքը : (Պալատականք ծափահարեն)

Կուի. — Խիստ երջանիկ եմ որդեակ իմ Քասօ՛ւօ, տեսնելով որ երկու արքունեաց մտերմական կապերը աւելի կամբազնդես այս ամուսնութիւնը ընդունելով. ի պատիւ ձեր յաղթանակաւ վերագարձին, պատրաստել տուած խնճոյ-

քիս մէջ հարսանեկան մատանիները պիտի փոխանակէք :
 Բառ. — Եւ ես կը խնդրեմ պատիւ ունենալ իմ նշանա-
 ծըս Պիանդա դ. քսուհին անձամբ իւր ճօրը զերկը վերա-
 դարձնելու .

Կուի. — Արդէն հոն պիտի կատարուի ձեր ամուսնու-
 թեան հանդէսը, և այս դիշեր կատարելիք հանդէսնիս
 թող ձեր հարսանեաց սկզբնաւորութիւնն ըլլայ : (Պիանդայէ)
 եկուր աղջիկս, եկուր, ոհ, այնչափ ատենէ ի վեր որչափ
 կը փափաքէ՛լ այս քաղցր բառը արտասանել :

Բառ. (Ֆրանչեոզօն) — Դուք ալ պիտի ընկերանա՞ք մեզ,
 եղբայր իմ :

Ֆրան. — Կ'ընկերանամ : (Սթօլէթիան ցոյնելով որ խորը կ'երևայ)
 ահաւասիկ կրօնաւոր մը, որ զմեզ դիւթական կապով մը
 իրարու պիտի միացնէ :

(Սթօլէթայէ և Ֆրանչեոզօյէ զար ամենքն ալ յիշին :)

ՏԵՍԻԼ ԺԳ.

Ֆրանչեսգօ և Սթօլէթիան, որ կրօնաւորի զգեստով է

Ֆրան. (Մեկուսի) — Չ'գիտեմ, ինչպէ՛ս կրցայ ինքզինքս
 զսպել երբ այն մահացու հարուածը կուրծքիս դէմ շրտ-
 կուծցաւ . . . և ի՛նչ սոսկալի հարուած . . . Պիանդա
 իմն էր . Ֆէրարի դ. քսութեան դահուն կը մերձենայի, և
 այն ապագայ երջանկութիւնն ու պէրճութիւնը որ հազիւ
 նշմարած էի, մէկ վայրկեանի մէջ կը կորսնցնեմ : ամեն յոյս
 և ակնկալութիւնք ինձմէ կը բաժնուին յաւիտեան : Այլ ոչ,
 ոչ . . . դու որ գահ մը կը յափշտակես իմ ձեռքէս եղ-
 բայր իմ, ուրեմն աղէկ պաշտպանէ զայն . . . աղէկ
 պաշտպանէ . . . Սթօլէթիան .

Սթօլ. (կը յառաջանայ, և կնիւղը քշելն կը հանէ) — Լիխան .

Ֆրան. — Սթօլէթիան, յանցաւոր ես .

Սբօլ. — Ա՛հ . . .

Ֆրան — Ի՞նչ ըսիր ինձ երբ վենետիկէն վերադարձար, միթէ չիմացուցիր թէ եղբայրս թշնամւոյն ձեռքը դերի ինկած էր և իր շինած յատակագիծը յայտնուած, չըսիր նաև թէ մէկ շարժմամբ ծուղակը պիտի իյնար, և թէ վերջապէս կորսուած էր, . . . կորսուած էր անդառնալի կերպով:

Սբօլ. — Պէտք էր որ այդպէս հաւատայի:

Ֆրան, — Այդպէս մի հաւատայիր . . .

Սբօլ. — Այո՛:

Ֆրան, — Քայց ահա յաղթանակաւ կը վերադառնայ, կը վերադառնայ գեղանի Պիանգայի հետ ամուսնանալու և իմ ամեն յոյս ու ակնկալութիւնքս ձեռքէս չորթելու համար: Ա՛հ, խաբեցիր զիս Սբօլէ՛թթա, խաբեցիր:

Սբօլ. — Նա ինքն էր որ զմեզ խաբեց, իւր առիւծային քաջութիւնը ամեն բան տակնուվերայ ըրաւ և յաղթող հանդիսացաւ:

Ֆրան, — Եւ ի՞նչպէս եղաւ այդ բանը.

Սբօլ. — Մինչդեռ յուսահատ վերջին ճգնաժամուն հասած մահուան կ'սպասէր, չգիտեմ ո՞ւսկից օգնութիւն գաւաւ նոր և անընկճելի զօրութիւն մը, որոյ առջև թըրշնամւոյն խրոխտ ամբարտակները կործանեցան և ամեն ճարպիկ թելադրութիւնք անօգուտ եղան:

Ֆրան, — Այլ այսուհետև ինքզինքէս ուրիշ մէկու մը չի պիտի վստահիմ, Սբօլէթթա: Հիմա վեց մարդու կը կարօտիմ, վեց քաջաբազուկ մարդկանց, որք կարենան ուզածիս պէս շարժելու և ամեն բան ընելու, կը հասկնամ, ամեն բան ընելու. խօսէ՛, պիտի յաջողի՞ս գտնել այդ մարդիկը.

Սբօլ. — Ես մէկը կը ճաննամ, որ արդէն վեց մարդ կ'արժէ, որոյ օժանդակ պիտի տամ նաև ուրիշ չորս քաջեր:

Ֆրանս. — Վազը արշալուսոյ մթնշաղ առաջին լոյսը երևելի սկսելուն պէս՝ պէտք է որ այդ մարդիկը Սանթո Յիւազոսօ արբայարանին ետևի կողմը գտնուին,

Սբօ. — Ձեր ամեն հրամանները պիտի կատարուին, իշխանդ վեհազուն :

Ֆրանս. — Եթէ քեզ հարցնեն թէ որո՞ւ համար զիրենք կը վարձես, Իւպէոս դքսին համար է, ըսէ, Ֆէրարի դքսին եղբայրը և Պիանգայի հօրեղբայրը :

Սբօ. — Բաւական է :

Ֆրանս. — Անշուշտ կը յիշես իմ քեզի տուած խոստումս, երբ այս գահուն բազմականը լինել յաջողիմ, խոստումս անմիջապէս պիտի կատարեմ. . . տակաւին խօսք մ'ալ, վանքին բժիշկը, եղբայրդ, ինձ զրկէ :

Սբօ. — Ինձ նման Ձեր վսեմութեան անձնուէր ծառայն,

Ֆրանս. — Այո՛, . . . բայց ոտքի ձայն կը լսեմ, կարծեմ թէ մէկը կուգայ : (Սբօյնն Գոսաւը կ'ըսէր քնէ) Երթայք բարեաւ հայր իմ, թո՛ղ երկնից կամքը կատարուի (Պէքօ որ ներս հրած էր, պնտոն-իւտօր ու զլանէ ՎՍԵՄԵՐՆԱՅ, ու յիշէ)

ՏԵՍԻԼ ԺԻ.

Ֆրանչէսզօ և Պէքօ

Ֆրանս. — Ի՞նչ է ան, Պէքօ :

Պէք. — Տէր իմ, բոլոր աւագանիին ցնծութեան և ուրախութեան մէջ է, մանաւանդ երկու սիրահարեալները, տեսնելու արժանի բան մ'է տէր իմ, մինակ դուք կը պակսիք որ այդ ուրախութիւնը կատարեալ ըլլայ :

Ֆրանս. — Լաւ, ահա կերթամ, բայց նախ ինձ մտիկ ըրէ, կը յիշե՞ս այն օրը, որ գրեզ ծովահէնէ մը ծախու առի՛, մինչդեռ նա կը պատրաստուէր քու սկիորներդ դաւաղանին տակ կոտորտել :

Պէք. (Լաւ) — Ա՛հ, այ՛ո՛, կը յիշեմ տէր իմ, և այն կոտորտելիք դաւազանին նշանները տակաւին մարմնոյս վրայ կեցած են :

Ֆրան. — Ա, յն ատեն ի՞նչ երդմնացար ինձ :

Պէք. — Ամեն պարագայի մէջ կուրաբար հնազանդել ձեր խօսքերուն :

Ֆրան. — Առանց հրամանացս իմաստն իսկ հասկնալ ուզելու, անանկ չէ՞ .

Պէք. — Ա, յո՛, առանց հետաքրքրութեան . . . նախ . . . բայց ինչո՞ւ պէտք :

Ֆրան. — Ահա ասոր համար քու վրադ կը վստահիմ. դիտե՛ս, հոս զքեզ խենթի տեղ դրած են .

Պէք. — Ամենքն ալ անանկ կը կարծեն :

Ֆրան. — Լաւ . ուրեմն կը հրամայեմ որ միշտ խենթ ձեանաս, հասկցա՛ր .

Պէք. — Արդէն երդմնած եմ ձեզ հնազանդել :

Ֆրան. — Մտիկ ըրէ, վաղն առաւօտ առանձին իմ սենեակս պիտի մտնես, զիս հոն դանես՝ կամ ոչ, պէտք է ամենուն իմացնես թէ՛ ես քիչ մը ակարութիւն ունենալէս հանդստութեան կը կարօտիմ. և չեմ ուզեր որ այս հանդստութիւնս խանդարի ինչ որ ալ պատահելու ըլլայ :

Պէք. — Շատ աղէկ .

Ֆրան. — Դրացի վանքին բժիշկը, որ կանչել տուած եմ, առաջուց պիտի իմացնէ քեզ քու խօսելիքներդ, կը հասկընա՛ս, պէ՛րբօ .

Պէք. — Բան մը չեմ հասկնար .

Ֆրան. — Բայց կը լսե՛ս .

Պէք. — Առանց բառ մը իսկ կորսնցնելու .

Ֆրան. — Ահա իմ ուղածս ալ այդ է . վերջապէս կու գեմ որ ամենէն ալ անտեսանելի ըլլամ :

Պէք. — Բաց ի ինձմէ, այնպէս չէ՞ .

Ֆրան. — Բայց եթէ ես հոս չդանուիմ. . .

Պէք. — Այն ատեն ես ալ զձեզ տեսնելիք չունիմ.

Ֆրան. — Ազէկ պիտի կատարես քու պարտաւորութիւնը, կամ հարիւր տուգատ ոսկի, և կամ ծովահէնին հըռ. չակուօր գաւազանը. որուն համը տակաւին բերնէդ ելած չէ. ահա կը մեկնիմ, դարձեալ իմացնելով թէ, այս գաղանիքը մեր երկուրին մէջ պէտք է մնայ. (Մեջէ)

ՏԵՍԻԼ ԺԵ.

Պէքքօ (Աւանջին)

Այսինքն վաղն առաւօտ հիւանդապահ պիտի ըլլամ . . . առանց հիւանդի . . . հասկցանք. առ է նէ՛ բան մը ըսել չէ, հիմակու հիմա երթանք սա հանդէսը տեսնենք : (Իբրն զանգառէ և նախաբանայ յայնտ, Պէքքօ լալելով յինն)

ՉԴԻ ՎԱՐԱԳՅՈՐՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐ Գ.


(ԼՈՒՌ ՅԱՂԹԱՆԱԿ ԲԱՕԻՕԻ)

(Տեսարանը կը ներկայացնէ պալատան մեծ գաւիթը, որ յաղթական կամարներով և դրօշակներով դարդարուած է: Խորը պատշգամ մը, ուր նստած են Դուքսը, Դ.բոուհին, Ֆրանչէսգօ, Պիանգա, Անթօնիօ, Իշխանք և Տիկնայք:)

— 0 —

(Վարազդորին բացուելու ժամանակ նուագարանը քայլերգ (Մօր) մը պիտի սկսի, որ կը յայտարարէ թէ թափօրը պիտի գայ: Կարգ կարգ զինւորներ յաջէն կը մտնեն և ձախէն մեկնին. անոնց կը հետեւին աղջկունք, որք ճամբուն վրայ ծաղիկներ կը սփռեն. ասոնցմէ ետքը կուգան զօրավարք և նուագածուք, շրջապատած զԲաօլօ, որ ձիով կը յառաջանայ. զօրականք և ժողովուրդք միաբերան « Հուռու՛ա . . . կեցցէ՛ Բաօլօ Իշխան, » կաղաղակեն. Բաօլօ ձիէն վար կիջնէ, և խորի դռնէն պատշգամ ելնելով Պիանգայի քով կը նստի. ժողովուրդը գարձեալ « Հուռու՛ա . . . կեցցէ՛ Բաօլօ Իշխան և պիանգա Իշխանուհին, » կաղաղակէ. ապա պալէթը կ'սկսի, որ տասը վայրկեան կը տեւէ: Նուագարանը սոյն արարուածին ըսկիզբէն մինչև վերջը անընդհատ կը շարունակուի: պարուհիք պարելով կը մեկնին տեսարանէն:)

ԶԳԻ ՎԱՐԱԳՆՈՅՐՆ



ՊԱՏԿԵՐ Դ.

(ԱՌԵԻԱՆԳՈՒԹԻՒՆ ՊԻԱՆԳԱՅԻ)

— 0 —

(Տեսարանն է ձկնորսի մը տնակին ներսի կողմը, խորի դուռը Մինչիօ գետակին ափանցը վրայ կը բացուի : Աջ կողմը պլատիկ և մէկ քանի սաքով սանդուղ մը որ սենեակ մը կը տանի : Մէջ տեղը սեղան և աթոռներ :)

ՏԵՍԻՆ Ա.

Լինտա և Բիէթոօ

(Լինտա սառչաններ կը կարդի, Բիէթոօ սանդուղէն նկնի,)

Բիէթոօ. — Է՛ ուրեմն քոյր իմ, այդ ուռկանները դեռ չի լինցա՞ն :

Լինտա. — Մէկ վայրկենէն կը լինան :

Բիէթ. — Մեկնելու ժամանակ է, օգը պայծառ է և Գոչերուան համար գեղեցիկ որս մը կը խօստանայ մեզ : Կ'մտածեմ թէ մինչև վաղը մէկը չպիտի գայ Մինչիօի Դիմացի եզերքը անցնելու, այսու ամենայնիւ, դուն հասեալ

Լին. — Է՛հ, դարձեալ մինակ պիտի մնամ :

Բիէթ. — Կը վախնա՞ս :

Լին. — Օ՛, ոչ, կուրտօ տը կանդակու է գրսին Մանթուի կլան ըլլալէն ի վեր, երկիրը առաջընէ տելի ապահով է, բայց ինչ որ ալ ըլլայ, ես խիտա ախար կեանք մը ու-

նիմ, ի՞նչ պիտի ըլլայի առանց քեզի : ասաւասիկ տասը տարի է որ ամուսինս զիս ձգած է :

Բիէթ.— Լուիճի՞ն . չելլաս նորէն ուզես այդ ծոյլ թշուառական գինովը :

Լին.— Է՛հ, եղբայր իմ, խեղճ պիտիկ Ֆրանչէսգինօի մահուանէն վերջը Լուիճի աղէկ տուժեց ինձ, զինքը համոզեցի որ մեր պզտիկ պանդօկը ծախելով, մեծ և աւելի յաճախորդ ունեցող պանդօկ մը գնենք, վասն զի այնու հետև աւելի պարկեշտութեամբ ապրիլ կուզէր, և կարծես բոլորովին իւր կնոջն յարած էր, բայց ինչպէս որ գիտես, գիշեր մը Մինչիօ գետը հորթելով՝ ջուրը մեր պանդօկը իւր ամեն կարասիներովը յռեց տարաւ, ասոր վրա Լուիճի վհատեալ օտար երկիր գնաց իր բազուր բընտաւու :

Բիէթ.— Ահա այսպէս կը կորսուի արդարութեամբ չի վաստկուած օտակը. միթէ հազար տուգաթ ոսկիի ծախու առած այն պանդօկը այնչափ վատութեամբ Ասթօլֆօն խաբելով նորա ձեռքէն շոքձած ստակովը չէ՞ր, որ փոխանակ խեղճին հարագատ զաւկին՝ անոր դահիճը յանձներ էր :

Լին.— Ա՛հ, աւա՛ղ ճշմարիտ է այդ, բայց կ'երզնում թէ իմ կամքիս հակառակ էր ասի Բիէթնօ :

Բիէթ.— Այո՛, ամեն բան գիտեմ, գիտեմ թէ դու անմեղ ես, իսկ Լուիճիիդ գալով, անշուշտ հիմա իւր հին աւազակի և մարդասպանի արհեստը նորէն ձեռք առած ըլլալու է, և եթէ մեռած ալ է՝ քաջայոյս եմ թէ կաղախանին վրայ մեռած է :

Լին.— Ո՛հ, Բիէթնօ, ի՞նչ կըսես :

Բիէթ — Լաւ . քոյր իմ, ասա զքեզ առանձին կը թողում որ անոր հօգուոյն փրկութեանը համար պիտի ես բայց ոչ թէ կորստեանը վրայ լաս : Առ այժմ ուղկաններս տար :

վաղը կը տեսնուինք դարձեալ: (Ուսումները ստանալու համար)
 Լին. — (Առաջին) Ի՞նչ դառն յիշատակ . . . այո՛, գի-
 տէի թէ այս գործը զմեզ պիտի ապերձանկացնէր . . .
 զոհին աեղ դահիճն յանձնե՛լ . . . ասիկայ սճիւր մ'է ,
 որու համար ամեն օր երկնից ներողութիւնը կը խնդրեմ ,
 կարծես թէ ես իմ ձեռքս գործած և կամ մեղսակից եմ :
 Քայց միթէ Լուիսիի մեղսակիցը չպիտի՞ համարուէի երբ
 այս սարսափելի սխալմունքը չ'ուզուէի . . . աւա՛ղ, մինչև
 ցարգ չի փնտռեցի . . . վասն զի ո՞ւր կրնայի գտնել ա-
 նանկ ընտանիք մը՝ որուն ծոցը օտարական մը յանձնուած
 ըլլար . . . : Արդեօք ի՞նչ եղած է հիմա այն չար Ֆրան-
 չէսգօն . անշուշտ կատարեալ մարդ մը, Աստուած տայ որ
 այդ կատարեալ մարդը բարի և սիրմած ըլլար . սրչափ
 իր սողայութեանը չար և ոխակալ մ'էր : (Սենտ-Էլ Երջու-
 համար սանդուղէն ելած միջոցին Ֆրանչէսքօ իորէն մտնէ դիմակաւոր և վե-
 բարձրի մը մեջ փախուած :)

ՏԵՍԻԼ Բ.

Լինտա և Ֆրանչէսքօ

Ֆրան. (Մտած աղէնը) — Տիկի՛ն, խօսք մը . . .
 Լին. (Սարսափահար) — Մե՛ծդ Աստուած . . . դիմակա-
 լոր մա՛րդ մը . . .
 Ֆրան. — Մի՛ վախնար, հանդարտէ՛ . կեանքիս ապահո-
 վութեանն համար դիմակաւորեալ ճամբորդել ստիպուած
 եմ. այս դիւղին անունը ի՞նչ է :
 Լին. — Վարտէզէն .
 Ֆրան. — Լաւ . . . մէկը չիկա՞յ . . . միթէ հոս չի՞ բնա-
 կեր ճամբորդները Մինչիօ գետին դիմացը անցնող նաւա-
 վարը .
 Լին. — Այո՛ պարոն, բայց հիմա ձկնորսութեամբ պա-

բապերու համար մեկնեցաւ և վաղը կը վերադառնայ:

Ֆրանս. — Ըսել է որ այս գիշերուան համար մէկը չիկայ զմեզ գետակին գիմացի կողմը անցնող .

Լին. — Ոչ պարոն, ուրիշ նաւակ մ'ալ ունինք:

Ֆրանս. — Ընդ ամենը մէկ հատ.

Լին. — Այո պարոն :

Ֆրանս. — Ո՞ւր է :

Լին. — Դուրսը ձախ կողմի ժայռին կապուած է:

Ֆրանս. — Շատ աղէկ, ես կուզեմ զայն վարձել .

Լին. — Հիմա անցնելու համար .

Ֆրանս. — Հիմա կամ վերջը, ատիկայ իմ կամքէս կախեալ է, բաւական է որ այն նաւակը այս գիշեր իմս ըլլայ և . . . մնացածը ինձ կը վերաբերի, դուք անհոգ եղիք . ահաւասիկ անոր գինը կը վճարեմ . (Բովը Էսթրաստ Կոնիստի Կոնի Կոնի) գոհ էք այսչափով .

Լին. — Խիստ գոհ . . . բայց

Ֆրանս. — Ալ ուրիշ հարցմունքներ չեմ ուզեր, գնա՛ քանի մը շիշ գինի բեր ընկերացս համար՝ որոց կ'սպասեմ:

Լին. — Ինչ որ տանս մէջ ունիմ, յոժարակամ պիտի տամ ձեզ պարոն, որովհետև հոս պանդոկ մը չէ: (Մեկտի) արդեօք ո՞վ է այս մարդը . (Չորհման Կոնի Ե Կոնի):

Ֆրանս. (Մեկտի) — Պէտք է որ հոս հանգիստ առնունք , վասն զի այս ձկնորսի հիւղը այս գիշերուան համար մանթուի իշխանաց պալատը պիտի ըլլայ :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյն և Սթուէթթա, որ շօրապետի հագուստով է.

Սթու. (Չորհման Կոնի Ե Կոնի) — Կարծեմ թէ հոս պիտի ըլլայ:

Ֆրանս. (Կոնի Ե Կոնի) — Չի՞նք կը վնասուես, մինակ եմ, և կրնաս խօսիլ ազատօրէն :

Մբօլ.— Ձեր ամեն հրամանները ճշգուծեամբ կատարած են, տէր իմ։ Կրօնաւորի հանդերձանքս մէկդի շեմաւորը, իշխանը հրամայեց որ ես ալ մինչև ի Ֆէրար առնոց ընկերանամ։ Քիչ մը առաջ, քաղքէն քանի մը մղոն տուգելու համար թէ, նորին վսեմութիւնը հոս գալ, ըսանցընելու համար Մինչիօի վրայ պատրաստ նաւակ մը կ'արդեօք։

Ֆրան.— Հոս, ժայռին ետեւը կ'պառուած նաւակ մը կայ եղեր, զոր ես վարձեցի, եթէ պէտք ըլլայ՝ կրնանք ընկնել անոնց հետ ի միասին։ Տակաւին շատ հեռուն ձրգեցիր զիրենք։

Մբօ.— Գրեթէ մէկ ժամուան ճամբայ հեռու են։ տիկնայք ոսկիէ Արծուի պանդոկը հանգիստ կ'առնուին։

Ֆրան.— Ինձ խոստացած քաջասիրտ ընկերներդ ո՛ր են։

Մբօ.— Հոս են, բայց իրենց մեծաւորը առանց ձեզի հետ տեսնուելու չուզեր գործել։

Ֆրան.— Ի՞նչ պիտի ըսէ։

Մբօ.— Չեմ գիտեր։

Ֆրան.— Կանչէ՛, թող գայ. (Դիմալը եւ գն)

Մբօ. (խորէն) — Ասկէց բարեկամ, աս կողմէն։

Լուիճի. (Մոռելով) — Բարեւ, տէր իմ։

ՏԵՄԻԼ Դ.

Նոյնք և Լուիճի

Ֆրան.— Մբօլէ՛ թթա, զգուշացիր որ մէկը վրայ չի հասնի. (Մտնելով) Ի՞նչ է ալ կողմէ գոտու ինչ հոյն, իմացուցին քեզ ընկերացդ հետ ընելիքներդ։

Լուի.— Ուղեկից խմբէ մը, որ հոս պիտի գայ, կին մը առեւանգել:

Փրան.— Եւ մահացու հարուած մը իջեցնել երիտասարդ իշխանի մը, որ կ'ընկերանայ վերոյիշեալ կնոջ. կը հասկընաս, մահացու պիտի ըլլայ կշռելիք հարուածդ:

Լուի.— Հոկոյցայ. նախանձոտ սիրահար մը. . . կամ մերժուած ամուսին մը. . . և կամ անմեղութեան ազատարար մ'էք. . . այլ ի՛նչ կըսեմ, ասիկայ ձեր գիտնալիք բանն է և ես իրաւունք չունիմ խտրուելու. ասոր հետ մեկտեղ, երկու երեք պզտիկ դժուարութիւններ կան. . .

Փրան.— Եւ որո՞նք են այդ դժուարութիւնները:

Լուի.— Ինչպէս որ Սբօլէթթա բարեկամը ինձ իմացուց, այն ուղեկից խումբը ութը մարդիկներէ կը բաղկանայ եղեր, առանց երիտասարդ իշխանը հաշուելու, և մենք ընդամենը հինգ հոգի ենք. այս հաշուով մեզմէ մէկը երկուքի գէմ պիտի կռուի:

Փրան.— Միթէ կը վախնաս. բայց և այնպէս իմացուցին ինձ թէ դու մինակդ արդէն վեց հոգի կարժես եղեր:

Լուի.— Ատիկոյ պարագային համեմատ է:

Փրան.— Ի՞նչպէս, պարագային համեմատ. . .

Լուի.— Այո, եթէ վարձատրութիւնը վտանգին մեծութեանը կը հաւասարի:

Փրան.— Այոնքն, եթէ քեզ խօստացեալ գումարը վեց անգամ կրկնուի:

Լուի.— Այդպէս է, վասն զի իմ քաջութիւնս ալ վեց անգամ պիտի կրկնուի. . . ասիկայ թուաբանական կլորիկ հաշիւ մ'է:

Փրան. (Բովէ Կախառած Կասկէն Կասի Տը ոսկէ կը հանէ) — Ա՛ռ ուրեմն:

Լուի. (Խօսաբանելով) — Ձեր վստահութիւնը այսպիսի գոր-

ձերէ աղէկ կը հասկնայ եզեր.

Փրան.— Է ուրեմն լմնցա՞ւ .

Լուի.— Դեռ ոչ:

Փրան.— Ի՞նչպէս .

Լուի.— Ես չեմ ուզեր սպաննելիք մարդուս անունը իմանալ, այլ գործի սկսելէ առաջ պէտք է իմանամ թէ որո՞ւ համար կաշխատիմ .

Փրան.— Սբօլէթթան ձեզ իմացուցած ըլլալու է .

Լուի.— Այո, բայց ես այնչափով չեմ բաւականանար:

Սբօլ.— Ի՞նչպէս, չե՞ս հաւատար ինձ:

Լուի.— Այդ ալ հարցնելիք բա՞ն է, բարեկամ, (Փրան-էֆօն) այո՛ւ աէր իմ, կուզեմ իմանալ թէ որո՞ւ հետ կը խօսիմ, երբոր մէկը Մինչիօի ափանցը վրայ գիմակաւորեալ կը պտտի, ասիկայ երկու պատճառներէ կրնայ յառաջ գալ .

Փրան.— Եւ որո՞նք են այդ պատճառները .

Լուի.— Կամ իւր գէմբը մտեղներու խայթուածներէն ազատ պահելու և կամ աւելի ուշ ինքզինքը յայտնելու համար:

Փրան.— Երկուքէն մին կրնաս որոշել:

Լուի.— Է ուրեմն, լաւ .

Փրան.— Ահաւասիկ յանդուգն ստայակ մը .

Լուի.— Մտիկ ըրէք ուրեմն, ես գաղտնապահ ըլլալու համար կաշառուած եմ տասը տարի կայ որ այս աւազակի արհեստը ձգած էի, հանգիստ կ'ապրէի ձեռքերս գրբպանս և խեղճ կնկանս հետ մաքառօնեա ուտելով, երբ սատանան նորէն զիս կործանելով իմ խաղաղ վիճակս խանգարեց, վերջապէս ստիպեց դարձեալ դաշոյնը ձեռք խանգարեց, վերջապէս ստիպեց դարձեալ դաշոյնը, Հազիւ թէ առած այս վտանգալից արհեստով զբաղիլ, Հազիւ թէ ճամբու վրայի գողերու խմբի մը մէջ մտած էի, ահա ինձի գեղեցիկ գործ մը կ'առաջարկեն, այն ալ այսպէս կը

նոյ մը առևանգութիւնն էր, բայց չկրցանք յաջողիլ, և իւր ամուսինք, Վենետիկի տասնից ժողովոյն անդամ, իշխան մը, զիս և երկու ընկերներս մութ բանտի մը մէջնետեց . հոն պիտի մնայի, մինչև որ զիս թելադրողին անունը իմացնեմ, սակայն ասիկայ անկարելի բան մ'էր, որովհետև ոչ իւր անունը գիտէի և ոչ դէմքը տեսած էի. Այս չգիտնալս ինձ շատ սուղի նստաւ, այսինքն տասը խոշոր տարիներ բանտին մէջ անդամալուծացեալ մնալու պատճառ եղաւ. ընկերներս հոն մեռան, ես ալ երկու ամիս չըներ որ ազատեցայ . Հիմա կը հասկնամք տէր իմ թէ նորէն այն բանտը մտնելու աստիճանակ շուծիմ, և իրաւունք ունիմ ըսելու թէ, վար առէ՛ք դիմակնիդ:

Պրան.— Այս անգամ վախնալու բան մը չի կայ, երբ կիմացնեմ քեզ թէ Ուպէնթօ իշխանին, այսինքն Ֆէրարի դքսին եղբորը հաշտոյն համար պիտի աշխատիս . . .

Լուի.— Կը ճանչնամ իշխանը և սուրիչ անգամ իրեն համար աշխատած եմ, խարբբայ յաճախորդ մ'է թշուառականը, զիս աշխատցնելէն ետքը փոխանակ վարձատրելու քիչ մնաց կախաղան պիտի հանէր:

Պրան.— Բայց քանի որ աշխատութեանդ վարձքը կանխաւ կառնուս:

Լուի.— Իրաւունք ունիք . . . է ուրեմն գտնեմ (Մեկուսի) հիմակու հիմայ . (Բարչ) տեսնենք, ի՞նչ են ձեր հրամանները.

Պրան.— Սրօլէթթա պիտի իմացնէ . առ այժմ արեւկ զգուշութիւն ըրէ որ մէկէ մը չի տեսնուիս .

Լուի.— Անհոգ եղիք .

Պրան.— Ո՛ր պիտի պահուրտիս .

Լուի.— Փայռի մը ճեղքին մէջ պահուրտելու արեւկ տեղ մը գտայ, հիմա մարդկանցս հետ հոն պիտի երթամ կծկտիլ և մինչև որ յարձակման նշանը չի սրուի, տեղէս

երերալիք չունիմ . . . դուք հանգիստ եղէք տէր իմ, ես
տուած սաակնիդ կարժեմ, ես խղճմտանք ունիմ (Երեմ)

ՏԵՍԻԼ 2,

Փրանչէնդօ և Սրօլէթթա

Փրան. — Սրօլէթթա, դու հոս պիտի սպասես մինչև
որ ուղեկից խումբը հասնի. ես, զեալին դիմացի կողմը
պիտի անցնիմ նաւակը անոնց աչքէն հեռացնելու համար,
և վերադարձիս . . .

Սրօ. — Թշնամիներնէդ ազատած պիտի ըլլաք.

Փրան. — Հոս պատրաստ ձի մը ունի՞ս զիս ի Մանթու
տանելու:

Սրօ. — Դուրսը պատրաստ է, և արեւուն ծագելէն ա-
ռաջ պիտի կարենաք հոն հասնիլ:

Փրան. — Ուրեմն ի կրկին տեսութիւն և յաջողութիւն.
(Մէլի)

ՏԵՍԻԼ Է.

Սրօլէթթա, Լինտա, (Երեմ) Անթօնեօ

Լինտա. (Գառնները սեղանին վրայ դնելով) — Ահաւասիկ
պարոն . . . բայց հոս չէ՞.

Սրօ. — Զո՞վ կուզէք.

Լին. — Դիմակաւոր պարոնի արդեօք դո՞ւք էք, բայց
անոր հասակը և ձայնը չունիք.

Սրօ. — Ես կամ ուրիշ մ'է եղեր, հոգ չէ, բարի կին,
բաւական է որ պիտի վճարեմ, գնա զինի բեր. (Լինտա
Դիմ, ՍԲօլէթթա Երեմ երեւալ) ահաւասիկ ուղեկից խմբին
յառաջապահները կերական, բայց ի՞նչ կը տեսնեմ, Անթօն-

եօ՛ն , դքսին ամենահաւատարիմ ծառաներէն մին , որ Մանթուէն մեկնած ատեննիս ի միասին չէր, ի՞նչ կը նշանակէ այս . (Անթոնիօ Կոնստանտինոպոլ)

Անթ.— Հոս ըլլալու է, վասն զի ահա Սբօլէթթան :

Սբօլ.— Ի՛նչպէս, դո՞ւք էք Անթօնիօ, բայց դուք իշխանին ուղեկիցներուն ընկերացած չէիք :

Անթ.— Կօնզակուէ դքսին վերջին մէկ հրամանաւ ընկերացայ, իմանալով որ քանի մը աւազակաց խումբեր մօտերս երկրին մէջ երևան ելած են, ուզեց այն պղտիկ ուղեկից խումբը զօրացնել . մեր մարդիկներէն չորս կորովի քաջեր ոսկիէ արծուի պանդուկը կեցած են տիկիները պաշտպանելու համար, որք կառքով կը ճամբորդեն , իսկ երիտասարդ դքսուհին փափաքեցաւ ձի հեծնել և այնպէս ընկերանալ Բաօլօ իշխանին :

Սբօ.— Ուրեմն հիմա ուղեկից խումբը քանի՞ մարդիկներէ կը բաղկանայ :

Անթ.— Տասը ճարպիկ քաջամարտիկներէ :

Սբօ. (Մեծաւ) — Տասը մա՛րդ . . . դժօխք կը յաղթանակեն, ուրեմն դեմերնիս ելնելիք բանակը մերինէն կրկնապատիկ է :

Անթ.— Բայց ահաւասիկ իշխանը հասաւ :

ՏԵՍԻԼ Ը .

Նոյնք, Բաօլօ, Պիանզա, հետևորդք, (երէք) Լինտա

Բաօ. (Պիանզային) — Որչա՛փ երջանիկ եմ, չքնաղդ Ամազոնուհի, զքեզ իմ քովս ունենայով, բայց կը վախնամ որ հոգնութիւնը այս ամենուն սիրելի և ինձ համար թանկագին եղող քու գեղեզիկ կենացդ վնաս մը հասցնէ :

Պիան.— Այդ մասին անդորր եղիք, իշխանդ վեհագուն ,

ես քաջատիրա եմ և երջանիկ կը համարիմ զիս ձեզի ար-
ժանի ուղեկից մը ըլլալս ցուցնելով, այն երջանկութիւնը
որ ապագայն մեզ համար կը պատրաստէ, միթէ կեանքի
մը բոլոր արկածից հաւասար մի բաժանումը չէ՞, կեանքի
մը, սիրելի իշխան, որ կը յուսամ թէ երկինք վառաւոր
և երկար պիտի հանդիսացնէ:

Բառ.— Միթէ կրնայ երկինք չի լսել քեզ նման անմեղ
հրեշտակի մը աղօթիցը:

Լինտա. (Գիտէ քեզ) — Ա՛հ, ահաւասիկ այն ճամբորդ-
ները որոց կ'սպասուէր. (Պէտքայն) արդեօք տիրուհիս իմ
ինամոցս կամ ծառայութեանս կը կարօտի:

— Բառ.— Է ուրեմն Սբօլէթթա, Մինչիօ գետին գի-
մացի կողմը անցնելու համար նաւակ մը կամ մակոյկ մը
կըցա՞ր ճարել:

Սբօ.— Դժբաղդաբար շատ ուշ հասայ տէր իմ, այս կի-
նը կրնայ խոստովանիլ թէ իր ունեցած մէկ նաւակը իմ
հոս հասնելէս առաջ ուրիշի մը վարձեր էր:

Լին,— Ի՛նչպէս . . . ձեզի համար չէ՞ր ուրեմն . . . ո՛հ,
որչա՛փ կը զղձամ . . . գեղեցիկ պարոն մը և աղնիւ կին
մը, . . . մինչդեռ միւսը այնչափ գէշ կերպարանք մը ու-
նէր. բայց կերպարանք ըսելով չկըցայ զայն տեսնել վա-
սըն զի գիմակաւոր էր:

Անթօ.— Դիմակաւոր մարդ մը. ի՞նչ կը նշանակէ,

Սբօ,— Թերևս վենետիկցի աղնուական մը . . .
Անթօ.— Ինչ որ ալ ըլլայ, պէտք է որ նորին վտեմու-
թիւնը իւր ճամբան շարունակէ, և եթէ նաւակը տակա-
ւին հոս է . . .

Սբօ.— Հոս չէ, որով իշխան վաղուրնէ առաջ չպիտի
կարենայ ճամբան շարունակել:

Բառ.— Միայն ձեզի համար է սիրելիդ իմ Պլյանդա, որ

այս յապաղումը զիս կը տրտմեցնէ . գիշեր մը ամբողջ այս խրճիթին մէջ անցնել . . .

Պիան.— Ո՛հ, ես երբէք ինքզինքս չեմ մտածեր , վասն զի ձեր պաշտպանութեանը ներքեւ միշտ անդօրր և երջանիկ եմ, բայց աւա՛ղ, իմ խեղճ հայրս որ հիւանդ կը տառապի, արդեօք ո՞րպիսի կասկածներով պիտի տանջուի մեր այս յապաղման պատճառաւ :

Բաօ.— Ուրեմն պէտք է իմացնել հօրերնուդ մեր այս յապաղման պատճառը. (Սքօլէկթօյն) արդեօք մօտերս ուրիշ նաւակ մը չի՞ գտնուիր :

Սքօ. (Մեկտի) — Ա՛հ, ի՛նչ դազաւիար , (Բօքս) այո՛, տէր իմ, ասկէց մէկ ու կէս մղոն հեռու :

Լին,— Հայր Յովակիմի՞ն նաւակը :

Սքօ,— Հայր Յովակիմի՛ն , , այո, աղէկ ըսիր, բայց կը վախնամ որ ան ալ վերջին յորդումէն վնասուած ըլլայ , Ձեր վսեմութիւնը կրնայ քանի մը մարդ զրկել ճամբուն ապահովութիւնը ստուգելու համար :

Բաօ,— Ես ինքս պիտի երթամ :

Սքօ,— Դո՛ւք աէր իմ :

Բաօ,— Այո : ես աւելի աղէկ կրնամ դատել թէ պիտի կարենա՞նք անվնաս նաւարկել :

Պիան,— Ձեզի պիտի ընկերանամ, այնպէս չէ՞ :

Բաօ,— Ոչ, սիրելիդ իմ Պիանդա, եթէ անցքը անկարելի է, պէտք է նորէն հոս վերադառնալ, և այս ալ պարապ հոգնութիւն մը պիտի ըլլայ ձեզ նման փափկատուն օրիորդի մը համար, (Լիպոյն) տիրուհոյն համար յատուկ սենեակ մը ունի՞ք :

Լին, իմ կուտամ, քաջայոյս լինելով թէ տիկինը շատ պիտի գոհանայ և հանգիստ ընէ :

Բաօ,— Շատ աղէկ :

Սքօ,— (Մեկտի) Գործը կարգին է :

Սբօ.— Է՛ ուրեմն բարեկամք, այ կին չի կայ հոս, եկէք, տնկենք, խմենք և վարձկան աւազակաց երգը երգենք :

Ա. Զին. — Ի՞նչպէս, ուրեմն այդ աւազակները դուք կը ճանչնա՞ք, տէր հրամանատար .

Սբօ.— Ա. յո՛, զանոնք խիստ մօտէն տեսած եմ պատերազմին մէջ .

Բ. Զօր.— Է՛ ուրեմն երգենք .

Սբօ. (Երգէ)

Բարեյուսոյ ազնիւ գլինին

Եւ Սէյլօնի շաքարօղին,

Հնդկահաւի խորովածով

Միշտ ոյժ կուտայ աւազակին .

(Զօրականք միաձայն կրկնեն, և գաւաթնին պարպելէ ետքը իրենցմէ մին կը քնանայ.)

Սբօ.— Մէ՛կ . (Երգէ)

Երբ աւարի համար մեկնի,

Գրպանին մէջ կուտ մը չունի,

Բայց փոյթ չընէր, քիչ մը ետքը

Գրպանները պիտի լեցուի,

(Զօրականք կրկնեն ու խմեն, իրենցմէ մէկն ալ կը քնանայ .)

Սբօ.— Երկո՛ւ . (Երգէ)

Աւազակն է յոյժ երջանիկ,

Ապրանք չի տար, կառնէ կանխիկ,

Եւ կը ծաղրէ խանութպանը,

Որ վարժած է տալ ապառիկ .

(Զօրականք կրկնեն և գաւաթնին պարպելէ ետքը կը քնանան .)

Սբօ.— Ահաւասիկ գործելու ժամն հասած է . (Խորհրդով երեւ ածած ծառի վրէպնէ :)

ՏԵՍԻՆ Թ.

Նոյնք, Լուիճի և չարս Աւազակք (Դաշոյն ի ձեռին)

Լուի, — Յառաջ, յառաջ, ինքզինքնիդ աղէկ բռնեցէք, է՛ ուրեմն Սբօլէթթա, ո՛ւր են մեր թշնամիները .
Սբօ, — Ահաւասիկ, կը քնանան .

Լուի, — Ա՞յս վիճակին մէջ . . . ի՛նչ աղւար տեսարան, բայց թշուառական, դուն զիս անպատուեցիր . միթէ բան մը չընե՞ս համար վարձատրեցիր .

Սբօ, — Ի՛նչ կըլլայ, բաւական է որ նպատակնուս հասնինք .

Ա. Աւազ, — Աւելի ապահով ըլլալու համար կրնանք զանոնք սպաններ :

Լուի, — Պարապ տեղը մարդու մը արիւն թափե՛լ . . կը տեսներմ թէ գոռոզ սրիկայ մ'ես դու :

Սբօ, — Եթէ իրենց վրայի զէնքերը ժողուենք . . .

Աւազ, — Ատով վնաս մը հասուցած չենք ըլլար իրենց :

Սբօ, — Ինչպէս նաև մեղի. (Բնայողներան ղեները ժողուն)

Լուի, — Օրիորդը ո՛ւր է .

Սբօ, — Հոն, խրճթին մէջ .

Լուի, — Մտներնք ուրեմն :

Աւազ, — Կեցէք, ջահ մը կը տեսներմ :

Սբօ, — Անէ՛ծք, ահաւասիկ իշխանը կը վերադառնայ :

Լուի, — Իւր ուղեկիցներովը .

Սբօ, — Ոչ, մինակ մէկ մարդու ընկերութեամբ .

Լուի, — Ուրեմն վրան յարձակինք .

Սբօ, — Դուրսը աղմուկ յարուցանելու համար, աւելի

աղէկ կըլլայ եթէ հոս բռնենք,

Լուի, Ինչպէս որ կուզէք, Օն ուրեմն ընկերք, գա սե-

զանին շուրջը նստեցէք :

Սբօ. Է, աս քնացողները ի՞նչ պիտի ընէք:

Լուի, — Աւելի հանգիստ պիտի քնանան տակը քան թէ վրան. եկէք, զանոնք սեղանին տակը խոթենք և մենք իրենց տեղը նստելով՝ քնանալ ձեւացնենք: (Նոյն իննի)

Սբօ, — Ձգուչացէք, ահա կուգան:

ՏԵՍԻԼ Ժ.

Նոյնք, Բաօլօ և Ջինւոր մը ձեռքը ջահով:

Սբօ. (Բաօլէ ընդ յառաջ ելնալ և իրի գոտե զոյն.) Է՛ ուրեմն աէր իմ, ի՞նչ ըրիք նաւակը .

Բաօ. — Փառք երկնից, գործը կարգին է և նաւավարը մեզ կ'սպասէ, Անթօնիօն հոն ձգեցի որ ամեն բան կարգադրէ, բայց ի՞նչ կը տեսնեմ, մեր մարդիկը քնացեր են, ի՞նչ կը նշանակէ այս . է՛ բարեկամք, ելէ՛ք .

Սբօ, — Այո, ելէ՛ք .

(Չորս գողերէն երեքը Լուիճիի հետ Բաօլօի վրայ կը յարձակին, Սբօլէթթա և միւս գողը զինւորին վրայ իջնալով ջահը կը մարեն, Տեսարանը կը մթննայ.)

Բաօ. — Մատնութի՛ւն . . . օգնութի՛ւն . . . (Ինչպէս որ զուգորդելով աստիճան մը կը ձեռնորդի)

Աւազակը, — Դժո՛խք . . . վիրաւորեցայ .

Ա. Աւազ. (Բաօլէ շօշուիւմ) — Մեռի՛ր ուրեմն.

Բաօ. — Ա՛հ. (Կի՛նայ)

Սբօ. — Ի՞նչ ըրիք, Լուիճի, լմնցա՛ւ .

Լուի. — Ահաւասիկ փոռուեցաւ .

Սբօ. — Սպաննեցիր .

Լուի. — Ես չէ՛, այլ սա մարդը:

Սբօ. — Գետակը նետեցէք այդ մարմինը,
 (Լուսնի առաջին և երկրորդ Բաբլոնի մարմինը առաջ՝ Իսրայելի մարմինը)
 Բ. Աւաղ. — Հիմա կարգը օրիորդինն է :

(Սբօլէթթա ծափ կը զարնէ, և խորէն մտնող երկու
 աւաղակին նշանացի կը ցուցնէ սենեակը, աւաղակը սենեակ
 մտնեն, ուսկից օգնութեան կանչելու ձայներ կը լըսուին,
 աւաղակը Պիանգան զրկած տեւարան բերեն, որ
 միշտ կը պողայ և կը տապալտկի. վերջապէս բերանը դաշ-
 կինակով կը գոցեն և խորէն կը տանին.)

ՏԵՍԻԼ ԺԱ.

Սբօլէթթա և Լինտա

Լին. — (Խրճիթէն ելնելով) Օգնութիւն. . . օգնութիւն .
 Սբօ. (Իտալից բարձրացնելով) — Լուէ՛ թշուառական կին,
 ապա թէ ոչ մեղած ես:
 Լին. (Ի շուք, սարսփահար) Յիսո՛ւս, Աստուած իմ:

ՁԳԻ ՎԱՐՍԳՈՅՐՆ



ՊԱՏԿԵՐ Ե .

(ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՈՃՐՈՅՆ)

Տեսարանն է Մանթուի պալատին մէկ սրահը

ՏԵՍԻԼ Ա .

Կուխտօ և Լէօնօւա (Տրքոս՝ նորած էն,) Անթօնիօ կեցած ,
Ծառայք և Աղախինք անոնց շուրջը առած են :

Լէօնօւա ,— Զաւա՛կս , խեղճ ղաւակս . (Աչերը սրբե .)

Կուխտօ .— Սիրելիդ իմ Լէօնօւա , (Անթօնիօն) այն աղե-
տալի յուրը առնելէն ի վեր , խեղճ կինը լալու անգամ
կարողութիւն չունի . ո՛հ , բոլոր քաջասրտութիւնս այս-
պիսի սոսկալի վշտէ մը կը յաղթուի . (Քէշ ճը Լուսինն) .
այսպէս ուրեմն Անթօնիօ , այդ պատմած սարսափելի ար-
կածդ . . .

Անթ .— Կուզէի Ձեր վստմութենէն ծածկել ղայն , բայց
աւա՛ղ սր շատ իրաւ է . . .

Լէօ .— Զաւակս , ո՛հ , ղաւակս . . .

Անթ .— Այն թշուառականներէն մին , զոր Բաօլօ իշխա-
նը ինքզինքը պաշտպանած առենջ վիրաւորած էր , չկրնա-
լով իւր ընկերացը պէս շուտ մը փախչիլ , ձկնորսին խըր-
ճիթին մօտ մահամերձ վիճակի մը մէջ դտայ , և անկէ
յսեցի այս սպաննութեան և առեւանգութեան սարսափե-
լի պատմութիւնը :

Կուրի.— Այս ոճրին հեղինակացը անունները չի տուա՞ւ:

Անթ.— Դժբաղդաբար զանոնք չի ճանչնար եղեր, բոլոր գիտցածը սա է որ, ինքը և իւր ընկերները այս սպանանութիւնը գործելու համար վարձուեր են, և այն ձեռքը, որ սակուով լեցուն քսակ մը տուեր է իրենց, խաւարին մէջ կը կենայ:

Կուրի.— Լրագրաց միջոցաւ հրատարակել տուէք թէ՛ իշխանին սպաննիչները մատնողը 500 ռուսկի սկուզ պիտի ընդունի ի վարձատրութիւն: Ֆրանչէսգօ իմացած է այս թոթաբեր լուրը:

Անթ.— Այո, տէր իմ, այն միջոցին իշխանը հիւանդ էր, և այս լուր այնպիսի սաստիկ ներգործած է իրեն, որ այս առաւօտ արթնցած ժամանակ յուսահատութեան և վրէժխնդրութեան ճիչեր կ'արձակեր . . . շատ կը վախնամ թէ այս բարկութիւնը իւր վրայ . . . բայց ահաւասիկ իշխանը որ կուրայ:

ՏԵՍԻԼ Գ:

Նոյնք և Ֆրանչէսգօ, որ անյարգար և խռովեալ է, աջ կողմի սենեակէն դուրս կը նետուի գոչելով:

Ֆրան.— Արդարութիւն, տէր իմ, արդարութիւն . . . Ինչ ընթացող զարթնումն, սարսափելի տենդէ մը բռնուած կարծէի թէ կերպով, ո՛հ, եղբայր իմ, սիրեցեալ Բաօ, ո՛հ, թող իմացնեն ինձ մարդասպանին անունը, որ գոնէ անոր մահը փութացնելով ամենուս ալ վրէժը տւծեմ:

Կուրի.— Ֆրանչէսգօ,
Ֆրան.— Մարդասպանը կուզեմ:

Կուի. — Քայց փարատեցէք ձեր արտամութիւնը որդեակ իմ, որպէս զի մօրերնուդ սիրտը աւելի չի վիրաւորի:

Փրան. — Ո՛հ, այս վիճակին մէջ որ կը գտնուիմ, ինչ ընելիքս չգիտեմ: Դո՞ւք էք Անթօնիօ, որ այս բօթաբեր լուրը հաղորդեցիք, ո՛հ, ինչո՞ւ չի պաշտպանեցիք զինքը, ո՛ր էիք և ի՞նչ կընէիք այն միջոցին:

Անթ. — Իշխանը հրամայեր էր որ իրմէն քիչ մը հեռան կենանք:

Փրան, — Բայց դուք պարտաւոր էիք անոր հետեիլ և իրեն կամայն հակառակ զինքը պաշտպանել: Ահա այսպէս մեր մարդիկները հեծեւազօրաց դաշոյնը և սուրը կը կրեն, բայց իշխաննին պաշտպանելու համար զանոնք գործածելու կերպը չգիտեն:

Անթ, (Զեռե սրտի տարած) — Տէր իմ, այդպիսի յանդիմանութիւն մը. . .

Կուի, — Փրանչէսգօ, վիշտը կը մոլորեցնէ զքեզ:

Փրան, — Ներեցէք հայր իմ, այո՛, վիշտն է զիս մուրեցնողը, բայց այս դաւադրութեան շանձանօթ հեղինակին վրայ չի յարձակիլ և զայն չի խողխուղե՛լ. . . ա՛հ, ո՞ւր է հիմա, ո՞ւր պահուըտած է. թողէ՛ք զիս, թողէ՛ք որ երթամ զինքը փնտռեմ:

Կուի, — Դու Փրանչէսգօ, կուզես մեկնիլ այս վայրկենիս և զրկել զիս իմ վերջին նեցուկէս, զրկել նաև մայրդ այս իրեն մնացող վերջին զաւկի մը ներկայութենէն:

Փրան, (Գտնուեալ յարեցած) — Մայր իմ, այո՛, միայն քեզ կը վերաբերի իմ պարտականութիւնս ինձ յիշեցնել, և եթէ իմ խնամոցս կը կարօտիս, եթէ զաւկի մը քաղցր մը խիթարանքը կընդունիս, . . . (Ի ծոռեք անոր տէլ.)

Լէօ, (Երեսն անգին տարջոցած՝ ու բուլ) — Զաւակս, իսօլօս, ոհ, չապրիր այլ եւս (Փրանչ. սրտ ելէ ինքս զայրօցեալ):

Կուրի. — Եկուր որդեակ իմ, այս կակիծը կենացս անց-
եալ հողնութեանց հետ խառնուելով հողւոյս բոլոր ըզ-
գացումները ջախջախեց, և տիրապետութիւնը իմ վրայ
սլինչափ ծանր պարտականութիւններ դրած է, զորս ա՛լ
քու հետդ բաժնելու պէտքը կ'զգամ. խեղճ Լէօնուա,
եթէ զքեզ կը թողում՝ քիչ մը ետքը իմ արամութիւնս
ալ ձերինին հետ խառնելու համար է. թեւդ, Ֆրանչէսքօ.
« Լէօնուա Անթօնիօն նշան կընէ որ կենայ, Ֆայտաւ + Ֆինին »

ՏԵՍԻԼ Գ.

Լէօնուա, Անթօնիօ, ետքը Մանկրուիկ մը

Լէօ, — Անթօնիօ, իշխանին անարդարութեանը վրայնե-
րողամիտ եզիք, իւր եզրայրը անչա՛փ համարում ունէր
ձեր վրայ. այո, դուք անոր հուատարիմն էիք և անչա՛յս
եմ թէ կը սիրէիք իմ զաւակս. « Զեւը անոր Գաւլ » ուստի
իւր մայրը խորին շնորհակալիքը քեզ կը յայայնէ.

Անթ. « Խնամբահել » — Ահ, տիկին . . .

Լէօնուա, — Եւ սրովհետեւ դու էիր որ զինքը վերջին ան-
գամ անսար, ուրեմն նորէն պատմէ այդ սարսափելի ար-
կածին բոլոր պարագաները, արդեօք մեռնելու ատենը
կապանիք մը հաղորդե՛ց քեզ. . . բայց ոչ, ո՛չ նա եր-
ջապանիք մը հաղորդե՛ց քեզ. . . բան մը չիմացուց ինձ, և սակայն
լանիկ էր ինձ նման. . . բան մը չիմացուց ինձ, և սակայն
այն հարուածը որ զինքը ոչնչացուց, պէտք չէ՞ր որ նախ
և առաջ զիս ոչնչացներ:

Մանկրուիկը « Գաւլ » — Տիկին, ժողորդենէ կին մը Զեզ
ներկայանալ կը խնդրէ. Ֆերարի երվտասարդ գրասահայն
քանի մը ագամանդները յանձնելու համար:

Լէօ. — Պիտնգայի՞ն . . . ազգիկա՛նս . . . ոհ, թող գայ.

ՏԵՍԻՒԼ Դ.

Նոյնք և Լինատ

Լէօ.— Մօտեցէք տիկին :

Անթ.— Ո՛հ, տիկին, ես կը ճանչնամ այս կինը, այս է այն պանդոկապետուհին, որուն պանդոկը պիտի անցնէինք այն սոսկալի գիշերը :

Լէօ.— Աստուած իմ, արդեօք զաւակս տեսած է .

Լին.— Զինքը տեսայ՝ երբ դուք տակաւին՝ երջանիկ մայր մ'էիք, և հիմայ . . . (Ի ծոռը իջնէ)

Լէօ.— Ի՛նչ կընէք :

Լին.— Յաւակցեալ մօր մը առջև ի ծունր պէտք է խօսինք :

Լէօ.— Ո՛հ, ելէ՛ք : Անթօնիօ, քիչ մը ատեն առանձին թողէք զմեզ : (Անթօնիօ և Մանկա-էլը ձեկնէ) ըսէք տեսնեմ, ուրեմն ձեր տո՞ւնը կը գտնուէր :

Լին.— Այո տիկին, երէկ գիշեր, Մինչիօ գետը անցնելու համար նաւակի մը սպասելով :

Լէօ.— Քու հետդ խօսեցա՞ւ .

Լին.— Ամենայն բարութեամբ..... խեղճ երիտասարդ իշխան քանի մը վայրկեանէն խորճիճա իւր նշնաածն առեւանգող աւազակներով լեցուեցաւ :

Լէօ.— Իւր նշանա՞ծն,

Լին.— Իւր այրի կինը գրեթէ աւա՛ղ

Լէօ.— Այո՛, պէտք էր որ զաւակս մեռցնէին, անոր ձեռքէն յափշտակելու համար խեղճ Պիանդան և գաւաքանի մը կտոր գոհարեղենները բերեր ես :

Լին, (Մտքը ինքնին) — Այս ապարանջանը և այս մանեակը, զոր երիտասարդ դքսուհին ձգած էր

Լէօն, — Որդւոյս ընծաները, ո՛հ, ես էի որ այս մանեակով Պիանգայի պարանոցը զարդարեցի և այս ապարանջանը իւր ձեռքը դրի, բայց ի՛նչ ուրախութեամբ Աստուած իմ և իմ աղօթքներս այս սիրեցեալ զաւակաց երջանկութեան և սիրոյն երկար կեանք մը կը խոստանային. Ահաւասիկ դորա առհաւատչեոյք, կըսէի ինքնիրենս, և այսպէ՞ս պէտք էր որ զանոնք տեսնէի, (Լաւ) ո՛հ սիրեցեալդ իմ Պիանգա, խեղճ զաւակ, արդեօք պիտի կարենամ օր մը այս նուիրական յիշատակները քեզ վերադարձնել, եթէ թշուառականները քու թանկագին կենացդ վնաս մը չեն հասուցած, քու ինչպէս իմ Բաօլօ որդւոյս. Բայց քեզ իմ շնորհակալիքս յայտնելու համար բոլոր դասերս կը մոռնամ, քեզ կըսեմ, որոյ մտերմութիւնը զիս երախտապարտ պիտի կացուցանէ :

Լին, — Ահ տիկին, յիշատակ մը որ հետոս պիտի տանիմ, բաւական է ինձ :

Լէօ, — Բայց կեցէք, դուքսը ձեզ պիտի տեսնէ իւր շնորհակալութիւնը անձամբ յայտնելու համար, բայց ահա ինքն տը կուգայ :

ՏԵՍԻԼ Ե.

Նոյնք և Կուխտօ

Կուխ. — Ի՛նչ էր լսածս, սիրելիդ իմ Լէօնուտ, հոս կին մը կայ եղեր, որ ոճրոյն անանատես վկայ մ'է եղեր,

Լէօ, — Եւ որ ինձ բերած է մեր սիրելի Պիանգային ադամանդները :

Կուխ. — Կ'ողջունեմ ձեր գալուստը տիկին, վասն զի բարձր շնչապատող այս վշտաց և տարակուսանաց պարագաները պիտի պատմէք անշուշտ, ո՛վ էք դուք տիկին :

Լին, — Խեղճ այրի կին մը, որ իւր եղբօրը, հին ծովային զինուորի մը քով կը բնակի, որ այժմ Մինչիօ դեալին վրայ ձկնորսութեամբ կը պարապի :

Կուի, — Ձեր անո՞ւնը .

Լին, — Լինտա :

Կուի, — Լինտա՞, (Մեկուսի, շայն Դիպեւի) բայց իւր դէմքը . . . կը խաբուի՞մ արդեօք, (Բարձր) դուք միշտ այն հիւզը կը բնակէիք,

Լին, — Ոչ տէր իմ :

Կուի, — Դքսութեանց սահմանագլխոյն վրայ, պանդոկ մը ունէիք :

Լին, — Բէշիէրայէն կէս մղոն հեռու :

Կուի, — Եւ ձեր ամուսինը Լուիճի՞ կը կոչուէր .

Լին, Այո տէր իմ :

Կուի, — Բայց ուրեմն ձեզի՞ էր որ ասկէց 2՝ տարի առաջ տղայ մը յանձնուեցաւ :

Լին. (Մեկուսի) — Աստուած իմ, ի՞նչ յիշատակ, (Բարձր) աղա՞յ մը .

Կուի, — Ձոր դուք խնամեցիք և մեծցուցիք :

Լին, — Մեծցուցի՞ . . . այո՛ .

Կուի, — Եւ զոր օր մը իւր հայրը եկաւ ետ առնելու :

Լին, — Իւր հայրը . . . ո՞վ, Ասթօլֆօ՞ն .

Կուի, — Աղէկ մը նկատեցէք զիս . . . ուրեմն չէ՞ք ճանչնար .

Լին. (Նկատեւի) — Դ՛՛ւր . . . ո՞վ երկինք . . . Մանթուի դ՛՛ւրսը, իւր հայրը, այո, նոյն ինքն է : (Դեպք և ճանի .)

Լէօն. — Ա՛հ, տիկին, ձեր խնամքները մոռցած չենք, բայց դուք աներեւոյթ եղած էիք այն միջոցին հակառակ մեր այնչափ փնտռելներուն, (Լինտա և Խուսի) բայց ի՞նչ ունիք. ի՞նչ կըլլաք .

Լին. — Ոհ, ոչինչ, տիկին. այն տղան որ ես . . . , որ իմ
ամուսինս նորին վսեմութեան յանձնեց՝ իշխան մը եղած
է այսօր, և թերեւս այս հզօր գըսութեան ժառանգորդը,
Լէօ, — Աւա՛ղ . . .

Լին. — Կը հասկնամ, այս գիշեր իմ պանդոկիս մէջ ըս-
պաննուած գժբազդ իշխանը ինքն էր թերեւս . . .

Կուի. — Ոյ, իւր անդրանիկ եղբայրն էր որ մեռաւ,
Լէօ. — Իմ սիրեցեալ Բաօթօս.

Կուի. — Փրանչէսքօն քու սնուցած զաւակս է, որ միայն
ինձ կը մնայ, և հիմա պիտի տեսնես զինքը,

Լին. (Մեկուք) — Զինքը տեսնե՛լ ինքը, որ խարդաւա-
նօք այս իշխանական ընտանեաց մէջ մտած է, զանի տես-
նե՛լ . . . ոչ, չեմ ուզեր, անկարելի է.

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք և Փրանչէսքօ

Փրան. — Հայր իմ, մարդասպանաց գլուխը ի դրաւ
հանող հրովարտակը հրատարակուեցաւ, անշուշտ եմ թէ
քիչ ատենէն . . .

Կուի, (Լինոսն ցոցնելով) — Տեսէք որդեակ իմ, այս կինը.

Փրան. (Եր եր երեւում է Դեկուսի) — Խորճթին կի՛նը . . .

Լին, (Մեկուք) — Ի՛նքը . . . , այս տղա՞ն:

Փրան. (Նշուպես) — Արդեօք զիս ճանչցա՞ւ:

Կուի. — Ահաւասիկ այս կինն է որ զքեզ խնամեց ման-
կութեան ատենդ մեր վախստական պտտած օրերուն մէջ,
Կիտա է իւր անունը, զոր թերեւս կը յիշես:

Փրան, — (Չայն դեպքով) — Այո, հազիւ թէ կը յիշեմ .
(Լինոսի մօտեայ, Բայց անոր եր +աշուիւք դեմնելով Դեկուսի.) Ին-
չէ համար ինձմէ կը խորշի. (Բաքց) տիկին արդեօք ինձ

նման իշխանի մը ներկայութենէն զգացած երկիւղիդ պատճառաւն է որ այդպէս կ'ստիպուիս ետ քաշուիլ,

Կուի, — Խեղճ կնոջ սիրտը այս դիշերուան սարսափելի դէպքէն խռովեալ՝ տակաւին հանդարտած չէ:

Փրան. (Դաշահայ) — Ինքը պատմեց ձեզ զայն:

Կուի, — Թերեւս մեզ կարենայ օգնել յանցաւորները զանելու:

Փրան, — Կը կարծէք .

Կուի, — Պատրաստ է իւր սրտին դողտնիքը որդւոյ մը յայտնել անվախ սրտով, և թերևս մեր ներկայութենէն արդիւրի մանրամասնօրէն պատմելու, ուստի ահա մենք կը հեռանանք և ձեզ կը թողունք զինքը հարցաքննելու պաշտօնը, Եկէք Լէօնօսա, թերևս այս պատմութիւնը անհաճոյ պիտի թուի ձեզ և անսանելի ըլլայ: (Գլխի)

ՏԵՍԻԼ Է.

Փրանչէսզօ և Լինտա

Փրան, (Ինքնին) — Սրգեօք ամեն բանէ տեղեակ է և իմ վրայ կը կասկածի՞ .

Լին, (Նշողեալ) — Ի՞նչն է .

Փրան, — Ի՞նչպէս զիս կը դիտէ; «Բարձր» Ինչու՞ կը զարմանաք այդչափ զիս նկատելով բարի խնամած ու մայր,

Լին, — Ձեր դիմացը վրայ իմ խնամած Փրանչէսզօ տըղուս դէմքը կը փնտռեմ, և զարմացած եմ հոն այնչափ քաղցրութիւն տեսնելուս .

Փրան, — Միշտ քու զաւակդ է նա բարի Լինտա, կը կարծէք թէ ես երախտամուս ըլլամ ձեզ ոչ, ոչ, զիս այնչափ խնամով և սիրով սնուցանելդ իմացած եմ, բայց հիմա ի՞նչ պատճառաւ աչքերդ կը դարձնես ինձմէ:

Լին, — Ահ, պատճառը սա է որ, զքեզ իմ կարծածիս հակառակ տեսնելովս անցեալ դառն յիշատակ մը կը զարթնու սրտիս մէջ, աղետալի դէպք մը . . .

Փրան, — Ի՞նչ է այն դէպքը ,

Լին, — Փրանչէ՛ սգօ, այն սպաննութիւնը . . .

Փրան, (Խուսկալ) — Սպաննութի՛ւն մը . . .

Լին, — Այո, եղբօրդ վրայ գործուած .

Փրան, (Ինչպէ՛ս էր դուրս ելած) — Թշուառակա՛ն կին, ի՞նչ կըսես, ո՞ւրսկից իմացար , և ի՞նչպէս կը համարձակիս ինձ նկատմամբ այդպիսի բան մը մտաբերել .

Լին, — Աւա՛ղ, ինչ որ անո՞՞ս էմ .

Փրան, — Դու զիս տեսա՞ր, դո՞ւ . . . զգուշացիր, դու զիս տեսա՞ր, ե՞րբ, ո՞ւր և ի՞նչպէս .

Լին, — Երբ տղայ մ'էիր տակաւին :

Փրան, (Սեշտացեալ) Տղա՛յ . . . (Մեկտալ) Ի՞նչ ըսել կուզէ արդեօք .

Լին, — Այն ատեն տակաւին չարեաց ծանրութիւնը չի գիտնալով, բայց սոսկալի բնածին զգացմամբ մը . . . ասկէ տասնեւեօթը տարի առաջ ,

Փրան, (Մեկտալ) — Տասն և եօթը տարի՛ , , ո՛հ, շունչ կառնում, (Բարձր) է ուրեմն Լինաա .

Լին, — Այն պզտիկ Փրանչէսգինօն, որ քեզի հետ մեծցուցած էի, տակաւին աչքիս առջևէն հեռացած չէ պատշգամէն վար դահալիժեալ իւր վերաւոր և արիւնշախտող վիճակը :

Փրան, (Ինչպէ՛ս էր) — Ա՛հ, ուրեմն երազ չէ եղեր :

Լին, — Եւ կը զարմանա՞ք Փրանչէսգօ, որ զձեզ զրկելու համար չեմ բանար իմ բազուկներս :

Փրան, — Աւա՛ղ, ի՞նչ է այդ որ ինձ կիմացնես բարի կին, ո՛հ, կը տեսնեմ թէ կեանքս վտանգաց և դժբաղդու-

Թեանց ենթարկեալ է, և օրօրանէս մինչև հիմա անմեղ արիւնը ինձ դէմ բողոքած է:

Լին. — Դուք դժբա՞ղդ էք հիմա, և ինչո՞ւ համար.

Ֆրան. — Կը հարցնէ՞ք, երբ սիրելի եղբօր մը մահը զիս տրամուլթեամբ կը պաշարէ, երբ բոլոր սիրականներս չորս կողմս կուլան ու կ'ողբան, ահ Լինտա, պէ՞տք էր որ զքեզ նորէն դանելու բարեբաղդութիւնս այսչափ դառնակսկիծ ցաւերով թունաւորուած ըլլար:

Լին, (Ուրախութեամբ) — Փառք երկնից, ուրեմն աղօթքներս ընդունելի են եղեր, Տէրը Ֆրանչէսքօի անգուլթ սիրտը մեղմացուցած է, Ֆրանչէսքօ բարի է հիմա, գթասիրտ և այս ազնուական ընտանեաց արժանի սրդի:

Ֆրան. — Այո .

Լին. — Ոհ, ամուսնոյս գործած այս սճիրը կարծածէս աւելի պզտիկ է եղեր.

Ֆրան. — Ոճի՞ր մը, ի՞նչ սճիր:

Լին, (Ընդլինիք գաւազ) Այլ սակայն, Ֆրանչէսքօ, ձեր վրայ տարակուսելնուս . . .

Ֆրան. — Այո, շատ գէշ բան մ'է այդ բարի մայր, ներեցէք ինձ որ միշտ այս քաղցր անուամբ զձեզ կոչեմ, գիտեմթէ այս բարձր տատիճանին հասնողին, որուն բազմը զիս հասուց, վեսութիւնն ու հպարտութիւնը շատ սխալներ գործել կուտայ, բայց այս սեւ կիրքերը երբէք տիրած չեն իմ սրտիս, ոհ, եթէ պարզօրէն կեանք մը անցունելու համար ծնած ըլլայի, քու քովդ, բարի մայրս, հեռու այս պէրճութիւններէն, զոր մարդս կուզէ իւր ունեցածը վրայ տալով վայելելի հաւատացէք թէ աւելի երջանիկ պիտի ըլլայի:

Լին. — Կարելի՞ բան է այդպէս Ֆրանչէսքօ, սր եթէ դու աննշան ծնունդ մը ունենայիր . . .

Ֆրան. — Բազդս պիտի օրհնէի:

Լին. — Եւ այսպիսի երջանկութեանց չպիտի՞ փափաքէիր.
Փրան. — Եւ ոչ մէկուն. երկինք վկայ են իմ խօսքերուս:

Լին (Ուրախ) — Ո՛հ, ի՛նչ քաղցր յուսով մը կը միտ-
թարուիմ, տրտմութիւնը բաւական ատենէ ի վեր իմ վը-
տասխանատու կը կարծէի, բայց այսուհետեւ այս տրտ-
մութիւնը ես չպիտի ունենամ միայն, այլ եթէ ճշմար-
որ խղճմտանքնիդ պիտի ստիպէ: Այլ ևս ինքզինքս չպի-
տի յանդիմանեմ ամուսնոյս այս սարսափելի ստախօսու-
թիւնը յերևան չհանելու համար, և թերևս այս խոստո-
վանութիւնս իր հողուոյն փրկութեանը պիտի նպաստէ:

Փրան, (Մէկուսի) — Ի՛նչ ըսել կուզէ. (Բարձր) շարունա-
կեցէք:

Լին, (Չորս դէն նայելով չամաց մը) — Է ուրեմն Փրանչէսպօ,
Բաօլօ իշխանը իբրև քու հարազատ եղբայրդ լալէ դադրէ:

Փրան, — Ի՛նչպէս:

Լին, — Բաօլօի հարազատ եղբայրը դու չես:

Փրան, — Ես չեմ, ուրեմն ո՞վ է:

Լին, — Այն պզտիկ տարաբաղդը՝ զոր դու սպաննեցիր
տասնը եօթը տարի առաջ:

Փրան, — Ի՛նչ կըսես:

Լին, — Խեղճ տղուն մեռնելու վայրկեանին ամուսինս ըզ-
բեզ Ասթօլֆօյին յանձնեց որ իւր զաւակը առնել եկած
էր . . .

— Խենդեցա՞ր Լինտա, թէ ոչ ես չեմ կրնար հասկնալ
քու խօսքերդ. ես դուքսին տղան չեմ . . .

Լին, — Ոչ:

Փրան, — Ուրեմն ո՞վ եմ:

Լին, — Աւագակի մը տղայ, որուն մայրը իմ տունս մե-

Ֆրան, (Ինդիսիէն դուրս ելած) — Անկարելի՛ բան է . . կը ստես .

Լին . — Ե՞ս ստեմ .

Ֆրան, (Նայնդէն) — Եւ դու ո՞վ եո որ կը համարձակիս ինձ այդ խօսքերը ըսել . Լինտա , ո՞ր Լինտան , միթէ կը ճանչնամ դքեղ . . . և երէկ որ այլոց կենացը վրայ կը տարակուսէի , այսօր այս կինը կուգայ չգիտեմ ո՞ւսկից , աներկիւղ ինձ ըսել թէ՛ « վա՛ր իջի՛ր այդ դահէն , բաղդի իշխան , վասն զի դու աւազակի մը որդի ես . . . ա՛հ . կորի՛ր , կորի՛ր , թշուառական կին , թերևս յիմարանոցէն փախած խենդ մի ես դու :

Լին . — Ա՛հ Աստուած իմ , կը սոսկացնես զիս , ինչո՞ւ ուրեմն հոս եկայ . (Կուղէ Բիւն)

Ֆրան. (Թուէն բռնելով) — Ասկէց դուրս չպիտի ելնես թշուառական կին , կը հասկնամ .

Լին . — Ֆրանչէ՛սդօ , այդ խռովեալ դէմքդ . այդ կատաղութեամբ փայլող աչքերդ և այդ սպառնալից շարժմունքըդ . . . ահա , ահա ճշմարիտ Ֆրանչէսդօն ինձ կը ներկայացնէ :

Ֆրան. — Անամօ՛թ կին :

Լին . — Զիս սպաննե՛լ կուզես .

Ֆրան, (Ինդիսիէն դուրս յետևելով) — Ե՛ս . . . ոչ , ոչ , կարծեմ թէ կը խենդենամ , ոհ , դեռ այս առաւօտ որ սաստիկ վշտացած էի , հիմա աւելի կը վշտանամ և կը ստակամ , վասն զի սիրեցեալ հօր մը և մօր մը բազուկներէս մերժուիլ կ'ստիպէ զիս այս անիծեալ յայտնութիւնը , զի՞ն ծնողացս կապով կապերը որ ամեն մարդ հարազատ արեամբ յօդուած կը կարծեն , այսչափ շուտ խորտակուիլ ու սրբ և անտէրունջ մնալ աշխարհիս երեւոյր , ո՛հ , ո՞վ սարսափելի մտածմունք . և եթէ երկինք որոշած է քու ձեռօքդ

դիս պատուհասել՝ թող որ ինքզինքս պատրաստեմ այդ կրելիք պատժոյս. (Աբու-ի Բ Գրայ Կննայ)

Լին. — Ո՛հ, թերեւս աղէկ բան մը չըրի այս գաղտնիքը յայտնելով, բայց ի՞նչ ընէի, երկար ատենէ ի վեր խըղճի խայթը զիս կը նեղէր:

Փրան. — Կը ներեմ քեզ Լինտա, և քեզմէ ի զատ ուրիշ մայր մը չունիմ աշխարհիս երեսը. խեղճ կին . . . ասանը եօթը երկար տարիներ այս գաղտնիքը պահելու քաջարտութիւնը ունեցա՞ր.

Լին. — Այո, կերդնում.

Փրան. — Ընդ ամենը երկու հոգի՞ էին այս գաղտնիքը գիտցող.

Լին. — Այո, ամուսինս և ես:

Փրան. — Իսկ այսօր.

Լին. — Այսօր դարձեալ երկու, այսինքն դուք և ես:

Փրան. (Մէկուսի) — Մէկը աւելորդ է.

Լին. — Հիմա որ ամեն բանի տեղեկացար, կրնաս խըղճմանքդ քննել կամ ամօքել, իսկ իմս՝ հանդարտած է:

Փրան. — Ո՛հ, եթէ ինձ չի վերաբերէր այդ գաղտնիքը . . . բայց այն խեղճ մայրը որ իւր անգրանիկ զաւակը կորսնցնելէն ապագայ յոյսն ու մխիթարութիւնը ինձմէ կ'ոպասէ, այն իշխան հայրը որ զիս իւր դահուն միակ ժառանգորդը կ'անուանէ, պէտք է որ այս ամենը իրենց իմացնելու ժամանակ ունենամ, մինչև այն ատեն կը խոստանաս այս գաղտնիքը մէկու մը չիմացնել, այնպէս չէ՞ բարեմայր:

Լին. — Այո .

Փրան. — Կերդնո՞ւս.

Լին. — Հոգւոյս փրկութեանը վրայ: (Կուսիս Գրան)

Փրան. (Իողակաբ) — Դո՛ւքսը . . .

ՍԵՒ ԴՂԵԿԻ

ՏԵՍԻԼ Է.

Նոյնք և Կուխտօ

Կու. — Է ուրեմն որդեակ իմ,

Ֆրան, . Մեր բարի Լինտան բան մը չգիտեր :

Կուի. — Ուրեմն այս գիշերուան մարդասպանները տե.
սած չէ՞ .

Լին. — Այո տէր իմ, իրենց գլխաւորը տեսայո :

Կուի. — Իրենց գլխաւորը .

Ֆրան, (Կը սարսուռ) — Ա՛հ .

Լին, — Բայց դիմակով ծածկած էր իւր դէմքը :

Կուի, — Իսկ իւր հասակը ,

Լին, — Մթութիւնը աչքերուս արգիլեց զայն որոշելու :

Կուի. — Եւ իւր ձա՞յնը .

Լին. — Իւր ձա՞յնը . . . թէև անոր նմանող ձայներ
լսած եմ, բայց զինքը չեմ ճանչնար :

Ֆրան, — Կը տեսնէ՞ք հայր իմ, բան մը չգիտէ :

Կուի. — Ահաւասիկ դարձեալ անյուսութեան մէջ կիյ-
նանք, ցաւ ի սիրտ կերթամք ու մօրդ իմացնել զայս . Ը-
սեմ նաև թէ Լինտա կը հաճի իրեն ներկայանալ :

Ֆրան, — Հայր իմ, Լինտա շնորհակալ է ձեր և դքսու-
հի մօրս շնորհքներէն, բայց կը փափաքի հեռանալ .

Կուի. — Ա՛նմիջապէս .

Լին, — Այո տէր իմ, եղբայրս իմ խնամոցս կը կարօտի :

Կուի. — Բայց . . .

Ֆրան. — Ալ չստիպենք զինքը հայր իմ, քանի որ կաճա-
պարէ իւր խրճիթը երթալու :

Կուի, — Տիկին, մեր վարձատրութիւնները ձեզ պիտի
հասնին :

Ֆրանս. — Այո, սիրելիդ իմ Լինսա, քիչ մը ետքը պիտի գամ գրեզ գրկել քու խրճթիդ մէջ, ինչպէս որ հիմա կը գրկեմ: (Զայն գրկէ)

Կուի, (Մեծեւ Վրայ) — Երջանիկ ես Լինսա այսպիսի զաւակ մը գտնելուդ վրայ, այնպէս չէ:

Ֆրանս. — Հայր իմ, չի կրնար ինձի չափ երջանիկ ըլլալ. (Լինսա խորէն ճիւղի, Կուիսո աւ յտեւ կը հռնէ)

ՏԵՍԻԼ Ը.

Ֆրանչէսգո, ետքը Պէբօ

Ֆրանս. (Մեծեւ) — Ի՛նչ սոսկալի յայտնութիւն . . . ո՞վ . . . ես իշխանին զաւակը չե՛մ. . . ես որ և ոչ մէկ բանէ մը սոսկացած չեմ, ոչ իսկ արիւնէ . . . և ի՛նչ արիւն. . . իրենը, . . . իւր ժառանգորդը ըլլալու համար, ես բաղդախնդրի մը զաւակը եղած ըլլամ և զայն հիմա՛ իմանամ, հիմա որ ամեն բանի կարող ըլլալու կոչումն ունիմ: Ոտքերուս մին գահուն առաջին աստիճանին և միւսը անյատակ անդնդի մը եզերքին վրայ կը դողդղան. զի այն սարսափելի գաղտնիքը անիծեա՛լ կնոջ մը չորնալիք բերանը արտասանեց. ո՛հ, ինչո՞ւ թողուցի զինքը ասկէջ մեկնելու. . . եթէ պալատիս մէջ մինակ ըլլայի . . .

Պէբօ. (Մեծեւ) — Տէր իմ:

Ֆրանս, (Յուշափրկեալ) — Ի՞նչ կայ, ի՞նչ կուզես .

Պէբօ. — Բայց մի՛ բարկանաք, կուզէք նէ կերթամ,

(Մեծեւ Վրայ)

Ֆրանս, — Անկիրթ, ի՛նչ լուր կը բերես ինձի, խօսէ՛:

Պէբօ, — Վերջը:

Պէբօ, — Ձեր ողորմութեանը կարօտ խեղճ մարդ մը կայ, այսինքն ըսել կուզեմ թէ կը մուրայ, և գիտէ՞ք,

որչափ կօրհնէ զձեզ:

- Ֆրանս. — Թերեւս աւազակ մ'է:
- Պէք, — Պարկեշտ մորդ մը ըլլալը իւր գէմքէն յայտնի է, (Ֆէյսօն) այսինքն այնչափ գէշ գէմք ու կերպարանք մը ունի որ . . .
- Ֆրանս. — Քիչ մը ստակ տուր ու ճամբէ.
- Պէք, — Վրաս մանրուք չունիմ:
- Ֆրանս. — Քսակէս ա'ն:
- Պէք, — Եթէ քսակնիդ գտնէի, մէջէն պիտի տայի:
- Ֆրանս. — Ի՞նչպէս.
- Պէք. — Ձեր վսեմութիւնը այս առաւօտ իւր վերադարձին . . .
- Ֆրանս. — Լուէ՛ անպիտան .
- Պէք. (Կոճոյ) — Քսակնիդ հետերնիդ չէր:
- Ֆրանս. — Կարելի՞ է:
- Պէք, — Հիմա ի՛նչ ըսելու է այս մարդուն .
- Ֆրանս. — Թող կորսուի երթայ, (Լուիճի Իոյնի Կոնի)
- Լուիճի, — Ո՛չ տակաւին, եթէ կը հաճիք տէր իմ:
- Ֆրանս. (Ֆէյսօն) — Այս գիշերուան մա՛րդը . . .
- Պէք, (Նոյնպէս) — Ըսի և դարձեալ կըսեմ թէ աս մարդուն կերպարանքին ես չեմ հաւնիր կոր: (Երբայ)

ՏԵՍԻԼ Թ.

Ֆրանչէսկօ և Լուիճի

- Ֆրանս. (Մեյսօն) — Չգուշանանք, այս ալ փոթորիկ մ'է, (Նոյն քարձը) ո՞վ էք դուք, և ի՞նչ կը խնդրէք ինձմէ .
- Լուի, — Խաբուած է ձեր սպասաւորը եթէ իմացուց թէ ես ողորմութիւն խնդրելու համար կուգամ, մինչ ընդհանրապէս պարտք մ'է որ կը պահանջեմ:
- Ֆրանս. — Պա՛րտք մը .

Լուի,— Այո, թմբկի ձայներով լսեցի հիմա Կուլիսո տը Կոնզակուսէի որդւոյն Բաօլօ իշխանին սպաննիչները մատնողին 300 ոսկի սկուզ խոստացող հրովարտակը:

Ֆրան,— Ա՛հ, խեղճ եղբայրս .

Լուի,— Է՛ ուրեմն, ահա եկայ նոյն խոստացեալ վարձատրութիւնը պահանջելը:

Ֆրան,— Ի՛նչպէս, սպաննիչը կը ճանչնամ .

Լուի,— Եթէ զայն կը ճանչնամ, Աստուած վկայ ահա դ՛ո՛ւ ես :

Ֆրան, °(Յոօ) — Ե՞ն . . . թշուառական, կը համարձակի՞ս այդպէս . . .

Լուի,— Ձի բարկանանք տէր իմ, չի բարկանանք . դիմակի ու ծպտեալ հանդերձանքը մարդ մը միայն իւր ընկերոջը աչքերէն կրնայ ծածկել, բայց ոչ Լուիճիի աչքերէն՝ որ ունեցած արհեստին մէջ նորընծայ մը չէ, ես դադառ գողի գործելը չեմ սիրեր, ինչպէս որ ըսած ալ եմ ձեզ թէ առանց որու հետ գործ ունենալս դիտնալու ձեռքս դաշոյնիս չեմ տանիր:

Ֆրան,— Ի՛նչ վատ են թաղբու թիւն :

Լուի,— Ենթադրութիւն, հիմա պիտի տեսնէք . մարդու մը հանդերձանքին մէջ այնպիսի նշան մը կայ՝ որ առաջին անգամ իմ ուշադրութիւնս կը գրաւէ, այս նշանը քսակն է, չգիտեմ ինչո՞ւ համար իմ աչքերս շուտ մը այդ քսակին վրայ կը յառին: Դուք այս գիշեր մեծ տիարի մը պէս առանց սակարկութեան ձեր քսակը բացիք իմ վարձքըս վճարելու համար, դիտեցի որ թուշեայ և մետաքսէ էր, և ըսի ինքն իրենս, «գրաւ կը դնեմ թէ այդ քսակին մէջ ոսկի թելով բանուած թիւ մը և զինանշան մը պիտի դանեմ, » ուստի հետաքրքրութիւնս յագեցնելու համար զայն գողցայ, (Բառիչ քրդանէն հանէ) ահաւասիկ այն քսակը, որուն մէջ (Յ) մը և (Կ) մը կը տեսնենք, որ թարգմանի

Ֆրանչէսոօ տը կօնզակուէ, և դքսութեան թագ մը , զոր ձեզ կը վերադարձնեմ առանց մէջէն բան մը առնելու , գիտցիք որ ես գող չեմ :

Ֆրանս, — Շատ աղէկ, բայց գիտե՞ս թէ ես եմ այս տեղի իշխանը :

Լուի, — Բայց և այնպէս տակաւին ժամանակ ունիմ ձեզ խօսք մը ըսելու : (Մեջքէն դառնն ճը կը մերկայնէ)

Ֆրանս. (Կասօց) — Կսւզե՞ս ինքզինքդ մատնել մատնելով նաև զայն որուն համար ծառայեցին քու բազուկներդ :

Լուի. — Ճշմարիտ կըսեմ թէ՛ արդէն կեանքէս և ունեցած արհեստէս բոլորովին զզուած եմ , և եթէ ուշ կամ կանուխ պտրտաւորիմ կաղախան ելնել՝ ամենեւին չպիտի դժգոհանամ ձեր ընկերութեամբը հոն ելնելուս :

Ֆրանս, — Ինչո՞ւ լրջօրէն չէք խօսիր, գիտեմ թէ բան մը կուղէք ինձմէ :

Լուի, — Սրդէն ըսինք ձեզ թէ հրատարակած հրովարտակնուդ համամաձայն սպաննիչն յայտնողին խոստացուած վարձատրութիւնը կը պահանջեմ . ի՞նչպէս , աղէկ չի՞ յաջողեցայ՞ զայն շահելու , ճշմարիտ յանցաւորը ճանչցայ , և հաւաստի եմ որ եթէ ձեր դուքս հօրը ներկայանայի :

Ֆրանս. (Ուձգիչ) — Վաստկած կամ ոչ , այդ գումարը պիտի առնուք :

Լուի, «Ինչպէ՞ս» — Տէ՛ր իմ :

Ֆրանս, — Քու աներկիւղ համարձակութիւնդ հաճոյ թուեցաւ ինձ, եւ քանի որ գաղտնիքը չես սիրեր, քանի որ քու հետդ բացայայտ խօսելու է , քեզ մէ ուրիշ ծառայութիւն մը պիտի խնդրեմ :

Լուի, — Սատանա՛ , , , կերևի թէ աղէկ վճարող մ'էք :

Ֆրանս, — Դու պիտի որոշես գինը ,

Լուի, — Հը՛մ , ուրեմն մե՞ծ գործ մ'է :

Ֆրանս, — Սպաննուելիքը կին մ'է :

Լուի. — Կի ն մը:

Ֆրան. — Վասնդատոր դատարիքի մը ճանճճ կին մը:

Լուի. — Շնորհակալ եմ, պահեցէ՛ք ձեր ստակը, ես կի-
ները չեմ սպաններ:

Ֆրան. — Բայց եթէ դիտնայիր Լուիսի թէ . . .

Լուի. — Սրդէն ըսի ձեզ թէ այս արհեստէն աստիակա-
ցած եմ, մտաակայ գիւղերէն մեկուն մէջ կրօնաւոր մը
կայ որ այս քանին վրայ քանի մը խրատական խօսքեր ք-
սաւ ինձ որ մտքիս մէջ ազատ սրտեցաւ. կը տեսնէ՞ք ու-
րեմն, այն բազուկը որ կը գործէ՛ իրեն հրամայող բաղ-
կէն աւելի մագաղարտ չուզեր բլլալ. և ճշմարիտ շատ կս
վափաքիմ այ եւս այս արհեստէն հրամարիք, ուստի չեմ
ուզեր որ կնոջ մը սպաննութեամբը նորէն սկսիմ:

Ֆրան., — Բայց դու չե՞ս գիտեր ուրեմն թէ այս կինը
մեր ոճոյն ահանատես և մեզ սպառնալու վկայ մ'է, որ
քիչ մը առաջ եկած էր հոս մարդասպանը մտանելու:

Լուի. — Ի՛նչպէս,

Ֆրան. — Ամէն բան տեսած է այս զիշեր Մինչիօ գե-
տին ափանցը վրայի խրճիթին մէջ, մարդասպանաց մէկ եր-
կուքն ալ ճանչցած է:

Լուի. — Ա՛յ սատանայ:

Ֆրան. Ես անձամբ զինքը հարցարնների և այսօրուան
համար անոր լուսթիւնը վարձեցի, բայց վաղը կրնայ խօ-
սիլ դարձեալ, եթէ մենք դանդաղինք զինքն այսօրուքնէ
մեռցնելու, հիմա կը հասկնամ Լուիսի, թէ , ,

Լուի. — Ա՛յդ ուրիշ խնդիր, քանի որ ամենուս ապահո-
վութեանը կը վնասէ:

Ֆրան. — Կընդունի՞ս ուրեմն

Լուի. — Է՛հ, հազար տուգատը շա՞տ է արդեօք,

Փրան, — Կուտամ, թող հազար ըլլայ:

Լուի, — Բայց երբ պիտի. . .

Փրան, — Վաղը պիտի առնուս, յուսամ թէ իմ վրայ ան-
վտան չէք:

Լուի, — Ո՛չ, սա իրաւամբ թէ՛ ձեզի այդ գումարը հա-
տուցանել տալու միջոցները դեռ ձեռքիս մէջն են ,

(Մեկնելու շէտ չընէ)

Փրան. (Մեկնուի) — Եւ իմ ձեռքիս մէջն է քու ձեռքէդ
ազատելուն միջոցները երբ հրամաններս կատարես:

Լուի, (Խռահուի) — Տէ՛ր իմ : (Մեկնէ)

ՋԻՒ ՎԱՐԱԳՈՅՐՆ



ՊԱՏԿԵՐ Զ . 1

(Զ Ղ Զ Ո Ի Մ Ն)

(Տեասարանն է Գ. Պատկերին մէջ տեսնուած խրճիթի գրտի կողմը, Չախ կողմը, յարգանոց մը, որուն մօտ տակառներ գրուած են. Աջ կողմը դէպ ի խորը պզտիկ լեռ մը, Խորը Մինչիօ գետը կերեւայ, Երբորդ բեմատախտակին վրայ քարէ նստարան մը)

ՏԵՍԻՒԼ Ա.

Բիէթուօ (Ուոլմը գրեւել) Լինտա (Խբիւն էնէ,) ետքը Բաօլօ

Բիէթ. — Է՛ ուրեմն քոյր իմ, այս առաւօտ ի նչպէս ես՝ Լին. — Խիստ լաւ, թէև տակաւին քիչ մը տկարութիւն ունիմ. . . ս'վ Աստուած իմ, արդեօք ի՛նքն է այս երիտասարդ իշխանը, որուն ծնողքը Մանթուի մէջ կուլան ու

Բիէթ. — Ես ալ այս առաւօտ քիչ մը իմացայ. դեղագործ Ժէրօնիմօ եղբայրը, որուն տունը փոխադրած էին իշխանը, արգիլեց ինծի այս բանին վրայօք աւելի բացատրութիւն ուզելու. կ'երեւի թէ առած վերքը այն ատեն մահացու պիտի ըլլար՝ երբ ջրոյն պաղութիւնը արեան հոսումը չի դադրեցնէր, Ըսի՛ր իրեն թէ ընտանիքը զինքը մեռած կը կարծէ.

Լին. — Այո՛ :

Բիէթ, — Պէտք չէր որ ըսէիր, վասն զի շատ անհանդիստ

պիտի ըլլայ, բայց ահաւասիկ ինքը, որ խրճթէն դուրս ելնել կ'աշխատի, թէև տակաւին քաշելու կարողութիւն չունի: (Բառն էլ գրեմարտն) ո՛հ, իշխանդ իմ, ձեր այդ վարձանքը մեծ յանգգնութիւն մ'է, (Ձեռնն էլ բռն) հազիւ թէ վտանգէն ազատեցար և . . .

Բառ. — Քիչ մը օգտանուլ կուզեմ, վասն զի հոն խրճթին մէջ կը խեղդուէի:

Լին. ա. (Թե՛ւ ներհայցն է գեղ է նորոգան որանել) — Հանգիստ ըրէք . . . սա արևուն դիմացը նստեցէք, որ ձեզի համար շատ առողջարար է:

Բառ. «Նորել» — Բարի մարդիկ, ս'ըքան պարտական եմ ձեզ ինձ մատուցած այս ամեն ծառայութեանց և խընամբնեքնուդ համար:

Ինչի՛ք. — Ա՛, ոչ իշխանդ իմ, մենք վարձատրութեան արժանի բան մը ըրած չենք, եթէ դուք պարտք մը ունիք կատարելիք՝ այն ալ մեր ձկնորսաց պաշտպան Սրբոյն Մատի պատկերն առաջը գեղեցիկ ճրագ մը վառել է, որոն բարեխօսութեամբը ազատեցար, վասն զի երբոր առգակք զրեզ գեար նետեցին, եթէ ճիշդ այն տեղը ինկած չըլլայիք՝ որ ուսկաններս պարզած էի, անշուշտ պիտի խեղդուէիք:

Բառ. — Շատ իրաւացի են ձեր խօսքերը, այս՝ գիտեմ թէ հրաշքով ազատեցայ:

Ինչի՛ք. — Այս հրաշքով երկու ժամէ ի վեր իմ Քառլօ ընկերոջն հետ առաւ որս մը ձեռք ձեռք համար կ'աշխատէիք, բայց յայտնուեալի գերեւ ելնելէն երբ կը պատրաստուէիք ետ դառնալ յանկարծ պո՛ւժ՝ ձայն մը լսեցինք է՛, ի՞նչ է սա. ըսինք իրարու, թերևս հրաշալի որս մ'է, միմտացի, ուստի անսխալօքս գէպ ի հոն վազեցինք՝ որ ձանրութիւնը ասկաներս կը քաշէք, և մարդ մը տեսանք՝ անա այս մարդը դուք էիք խեղոյն ազատեցինք ուսկա-

նէն, բայց ձեր վրայ կենդանութեան նշոյլ մը չի տեսնու-
ելէն՝ պարտաւորեցանք նաւակնիս կապել և զձեզ մեր
դիւզին գեղազործ ժէրօթիս եղբօր խրճիթը տանիլ, ուր
տասն օրի չափ մնացիր, և այս ատան օրուան մէջ բաւա-
կան առողջանալուդ համար հոս փոխադրեցինք, կարծեմ
թէ զո՛հ էք այս տեղերէն և թերեւս կը փափաքիք մեր-
ձակայ դաշտերը երբեմն պտըտելու ելնել:

Բաօ. — Իտրեկամք, զիս ամենէ աւելի տանջող բանը
իմ այս անդործութեան դատապարտուիլս է, ո՛հ, չկրցա՞ք
ուրեմն նեղեկանալ թէ ի՛նչ եղաւ այն երիտասարդուհին,
որ ինձ ընկերացած էր: Ո՛հ, արիւնս երակացս մէջ կը սա-
ռի, մտածելով որ արդեօք այդ թշուառականները կրկին
մարդասպանութիւն մը գործեցին:

Լին. — Օ, ոչ, այդ մասին անհոգ եղիր, արդէն ըսի և
դարձեալ կը կրկնեմ թէ Խիրուհույն կենացը վնաս մը հա-
սուցած չեն. գոյն կառք մը գրեր և ձեր հօտևորդաց ձի-
երը այն կառքին լծեր են, ասիկայ վիրաւորեայ աւազակէ
մը խնայայ որ խրճիթիս մէջ մեռաւ, բայց չկրցի հասկնալ
թէ ո՛ւր գացին:

Բաօ, (Գրք.) — Ո՛հ, անշուշտ պիտի դանեմ այս անո-
ղորմ առեւանդութեան հեղինակը: Սը կսանտանելի է ինձ
այս վիշտը և մտածմանքը, պիտի իմանամ իմ սիրելի Պի-
անդախս ո՞ւր և ի՛նչ ըլլալը, (Հո-ձի-տ) պէտք է մեկնիմ:
Եթէ կեանքս ալ վրայ տալ հարկ է՝ պէտք է որ բնտուեմ
և զինքը գանեմ (Նոր-բնէն զոս) կէնս ուր-ցեւ,) ա՛հ.
ուր մնացին իմ նախնի զօրութիւնս և ուժս, արդեօք Աստ-
ուած չո՞ւզիր գանոնք դարձեալ ինձ պարգեւել:

Լին. — Ինչզինքն ի՛նչ այսպէս վրդովելով զանոնք ձեռք
ձգելու միջոց մը գտած չէք բլլար ո՛ն տէր իմ խոհեմու-
թեանը գործերը, որչափ որ իշխան մ'էք իմ ալ հիւանդս
էք և կուզեմ որ բժշկուիք:

Բաօ, — Բարի Ահնատ.

Բիէթ, — Եւ իրաւունք ունի . զձեզ թողուլը կեանքերնիդ ամեն կերպով վտանգի ենթարկել ըսել է, եթէ թըշնամիրդ վերատին զքեզ գտնէին, արդեօք պիտի կարողանայիր ինքզինքդ պաշտպանել ընդհակառակն հոս ու է վտանգէ ազաս էք, քանի որ թշնամիներնիդ զձեզ մեռած կը կարծեն :

Բաօ, — Ոհ, ահա այդ մտածմունքն է զիս յուսահատեցընողը, երբ ծնողացս զգացած տրտմութիւնը կը մտաբերեմ, որ կարելի է իրենց մահը պիտի փութացնէ,

Բիէթ, — Ուրեմն ես յանձն կառնում զանոնք հանդարտեցնել, գուք նամակ մը տուէք ինձ, զոր խօսյն հօրերնուդ կը յանձնեմ :

Բաօ, — Ահ, Բիէթաօ, կեանքս կրկին անդամ կազատես, այո, իմ Ֆրանչէսքօ եղբօրս պիտի գրեմ որ գուքս հօրս և դքսուհի մօրս խոհեմութեամբ խմայնէ իմ այս հրաշքով ազատիլս :

Բիէթ, — Այդ աղէկ է, հիմա ինձ կը մնայ երթալ ձի մը գտնել, զոր օրինակ, Սպանիացի նաւապետինը, որ ասկէ մղտնի մը չափ հեռի է, և վերադարձիս նամակդ պատրաստ գտնելու եմ :

Բաօ, — Խեղճ եղբայրս ս'ըչափ պիտի տրտամնայ արդեօք . . . երթամ նամակս պատրաստեմ :

Բիէթ, — Է տրեմն քոյր իմ, մնաս բարեաւ, բայց ի՞նչ բանի վրայ կը մտածես գլխակօր :

Ահն. — Ես . . . սչինչ, (Մէկուրի) իւր եղբայրը :

Բաօ. — Բարի Ահնատ, ընկերացիր ինձ, վասն զի տակալին քու բազկադդ օդնութեանը կը կարօտիս (Այնպէս օչն-օչն-օչն երջնէ մտնէ, Բիէթ-օ ու Բարի կը ճիւղն)

ՏԵՆԻԼ Բ.

Լուիճի (Բաշխ)

(Երբ Լինասա և Ռիէթաօ կ'աներևութանան՝ Լուիճի բարակին վրայ տեսնուել վերաբերկաով ծածկուած և ընդարձակ դատակով մր. համարայլ կիջնէ և ապահով ըլլալու համար չորս կողմը կը նայի .)

Լուի. (Մինչ) — Ճիշդ այս տեղն է. ահա տակ անցորդաց խրճիթը. հոս էր որ այս գիշերը, և ահա ասիկ այն գետը. է՛հ, ներս չի մտած յիջ մը հանգստանանք. (Ետէ) Ուր որ առաջ այս դռնը կատարուելու էր, իսկ ես ուր օրէ ի վեր առանց սրոշում մը ապու մէկ տեղէն միւս տեղ կը թափառիմ, և սակայն ա՛լ կ'ստիպուիմ գործել . . . Ֆրանչէսո այս կնոջմէն կը վախնայ . . . այն վա՛ւր . բոյց վերջապէս եղածը եղած է. Ահ, բանտէն երած ատենս ինչո՛ւ համար Սբօղէթի ման դիմաորեցի . . . ա՛հ, ի՛նչ ստտանայական դող մը կուգայ վրաս. (Ետ) ուրիշ անգամներ ասանկ տկարութիւն մը զգացած չէի . արդէն անցեալ աւուր դէպքը խղճիս վրայ ծանրացած է, թէ և երիտասարդը ես չ'սպաննեցի, այլ միայն մարմինը դետը նետելով աւականացայ . իսկ հիմա, կենացս մէջ երբէք դէմքը չե տեսած կնոջ մը վրայ դաշոյնս բարձրացնելու մտածմունքը այնչա՛փ կը խռովէ զիս, որ եթէ առաջ ոչ վասնած ջրլայի խոստացեալ գումարին մէկ մասը, կարծեմ պիտի մերժէի այս սպաննութիւնը: Օ՛ն, օն, արդէն ուշացար, չատարէ այս պաշտօնը թշուա՛ն Լուիճի, բանի որ ուրիշ կատարելիք պաշտօն մը չունիս . Այս վերջին սպաննութեան ոսկիներով ա՛լ պիտի հարստանամ և անցորդութիւնըս պիտի ապահովեմ: Ամեն տեղ իմ խեղճ Լինասա կը

բնառեմ, որ եթէ տակաւին կապրի՛ իրեն հետ պիտի բաժնեմ այս հարստութիւնը, առանց տակից ձեռք բերած ըլլալս իրեն իմացնելու . վերջապէս զիս դարձած ոչ բոլոր թշուառականաց զոհերուն հոգւոց քառթեանը համար վանքին քահանային պատարագ մը ըսել տամ, այո, այո վերջին անգամուան զոհիս համար ալ և ամեն բան պիտի լիննայ :

ՏԵՍԻԼ Գ.

Նոյն և Լինտա

Լին. (Մտնալով իր ինքն ինքն) — Ֆրանչէսկոն իր եղբայրը, . . . ո՛հ, ճշմարիտն ըսելով այս մտածմունքը զիս շատ կը նեղէ . տակէց զատ, այս դաշտնիքը տակաւին խոստովանած չեմ .

Լուի. (Մեկտնալով) — Կին մը՛ . . . անտարուկոյս ինքն է, (Ձեռքը դնելով գոտի) տակաւին վայրկեան մ'ալ և . . . բայց սխալ քայլ մը չառնուինք, նախ և առաջ ստուգենք թէ մեր բնառածը ա՞յս է . (Վերադառնալով ինքն ինքն) . . .)

Լին. — Բիէթրուսն ո՞ւր մնաց արդեօք . . . բայց հասարակ մը կը տեսնեմ . . . ո՛վ կրնայ ըլլալ . . . եղբայրըս չէ՛ :

Լուի. — (Մեկտնալով) Ձեմ ուղեր իր երեսը տեսնել, զի դուքէ վհատիմ, (Ելելու անդին դուրսէն) ալիկին, դուք էք այս խրճիթին տանտիկինը .

Լին. — Այո՛ :

Լուի, — (Այո, ալ չեմ տարակուսիր, ինքն է) :

Լին. — Ի՞նչ կուզէք, պարոն .

Լուի, (Դաշտնե քարտեայն) — Կուզեմ, կուզեմ . . . Բաօլո, (Ներսն ինքն ինքն) — Լինտա, Լինտա :

Լուի. (Դուշմբը Յուէն էէյնոյ) — Հէ՞. Լինտա կըսէ .

Լին. — Այո, պարոն, Լինտան ես եմ:

Լուի. (Եր Կուրեւել) — Դո՞ւք . . . ո՛հ, եղո՛ւկ ինձ:

Լին. — Այդ ձայնը, այդ շարժմո՛ւնքը. . . ո՛վ երկինք:

Լուի. (Կուրեւել) — Կի՛նս . . .

Լին. — Լուի՛ճի .

Լուի. (Դէ՛հը ծածկելով) — Ո՛հ, թշուա՛ռ, ես եմ:

Լին, — Այո, դուն ես. բայց տասը տարիէն ետքը երբ մէկզմէկ կը գտնենք, փոխանակ զիս գրկե՛լու կը խորշիս ինձմէ, ինչո՞ւ զարմանօք ինձ կը նայիս, գրեթէ ամօթալի, ուրեմն զիս բնուելու մտօք հոս եկած չես:

Լուի. — Ո՛հ, ոչ. ամենին չէի գիտեր թէ դու հոս ես, դէպք մը զիս հոս առաջնորդեց, իմ խեղճ և բարի՛ Լինտաս. աշխատի տառապաղին օրերէ վերջը ահա զքեզ անգնաս կը գտնեմ. (Մէկտեսէ) ոհ, սատանա՛ն տանի զիս, ի՛նչ պիտի ընէի:

Լին. — Ըսէ՛ ինձ, ճամբուդ վրայ եղբայրս գիմաւորեց՞ր, արգեօք այսուհետև պիտի երջանկացնե՞ս զիս, թէ ոչ դարձեալ ամօթալի պիտի մնամ աշխարհի առջև. խօսէ՛, ո՞ւսկից կուգաս .

Լուի. — Վէնէսի բանտերէն, ուր տասը երկար տարիներ մնացի:

Լին. — Անշուշտ ի պատիժ նոր գործած մէկ չարութեանըդ համար:

Լուի. (Մեղմբով) — Այո, ամէն բան պիտի պատմեմ քեզի, ալ վարժուեցայ բանտերու մէջ ճգնելու և պատրաստ եմ ուրիշ չարութիւններ գործել դարձեալ, (Լինոյ շարժում է ինչ) ըսել կուզեմ թէ տասը տարուան բանտարգելութեամբս չգործած չարութիւններս հիմա մէկ վայրկեանի մէջ գործելու կարող եմ. բայց մի՛ վախնար Լինտա, ալ այսուհետև բնութիւնս փոխեցի, բարիք պիտի գործեմ:

Լին. — Ձեմ հասկնար, ի՞նչ ըսել կուզես .

Լուի. — Եւ չես կրնար հասկնալ, ա՛հ, խեղճ Լինտա, զքեզ տեսնելովս, զրկիս վրայ սեղմելու և գգուելու փափաք մը կ'զգամ սրտիս մէջ . . . բայց աւա՛ղ որ արժանի չեմ . . . ալ զքեզ չպիտի թողում, միանգամայն ամեն արկածից դէմ պիտի պաշտպանեմ, այո, կ'երդնում թէ մինչև վերջին շունչս զքեզ պիտի պաշտպանեմ սա դաշոյնովս, աեսնենք, ո՞վ պիտի համարձակի դէմս ելնել .

Լին. — Ես պաշտպանութեան կարօտ չեմ Լուիճի, բայց հոս հիւր մը ունիմ, որ քու բազկացդ օգնութեանը կը կարօտի .

Լուի. — Եւ ո՞վ է .

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք և Բասօ

Բասօ. — Ահաւասիկ Լինտա, եղբօրս զրկելիք նամակս Լուի. (Եւ +ուրեւի) Ո՞վ երկինք, ի՞նչ կը տեսնեմ :

Լին. — Արդեօք ի՞նչ ունի .

Բասօ. — Լինտա, ո՞վ է այս օտարական անձը .

Լին. — Մի՛ վախնաք, ամուսինս է . (Լուիճի) ի՞նչ ունիս Լուիճի. ինչո՞ւ այդչափ ապուշ կրթեալ կը նայիս .

Լուի. (Նուրեւ) — Հոս . . . հոս . . . այս տեղս . արդեօք կերպով մ'Աստուած իմ :

Լուի. (Նոյնք) — Ուրեմն մեռեալք կը վերակենդանանան . . .

Լին. — Խե՞նդ ես Լուիճի .

Լուի. — Գրեթէ տասն օր առաջ . . . այս տեղ . . . դէ՛րս լսը ջախջախեցին և գետը նետեցին, և . . .

Լին. — Եւ զօր ետքը եղբայրս ազա տեց .

Լուի. — Աղաաեց. իրա՞ւ . . . այո, այո. ա՛հ, ներէ՛ ինձ
Բասօյ իշխանն .

Բասօ. — Ներեւէ քեզի՛, ի՞նչպէս .

Լին. — Թշուա՛ւ, ուրեմն դո՞ւ ալ մարդասպաններուն
հետ էիր .

Լուի. — Բայց ես չի զարկի, թէև նոյն մարդասպանու-
թեան համար մեծ գումար մը խոստացուած էր ինձ :

Լին. (Եր + աշտեւի) — Գաւաճանութիւն, նենդութիւն :

Բասօ. — Իմ մահուանս համար գումար մը խոստացեր
էին քեզի, ուրեմն կը ճանչնաս այդ դժոխային խմբին
պարագլուխը :

Լին. — Այո կը ճանչնամ, և դուք ալ կը ճանչնաք :

Բասօ. — Ո՞վ է .

Լուի. — Կերդնում թէ ձեր կրօսեր եղբայր Ֆրանչէս-
գօ աը կօնզակուէն է :

Բասօ. — Եղբա՛յրս .

Լին. — Ֆրանչէսգօ՛,

Բասօ. (Զայրացեալ) — Ա՛հ, թշուառ կը սխալիս :

Լուի. — Ոչ, չեմ սխալիր, Լուիճի երբէք սուտ խօսած չէ
և այսուհետեւ ալ չպիտի խօսի :

Բասօ. — Ուրեմն խարուած ես .

Լուի. — Այո, նախ իւր դիմակէն, բայց յետոյ իւր
պալատին մէջ ստիպեցի զինքը դէմքը ցուցնելու և ձայնը
լսելու :

Լին. — Ա՛հ, կը յիշեմ իւր ձայնը :

Բասօ. — Սակայն անկարելի՛ բան է այո, չեմ ուզեր և
չեմ կրնար հաւատալ թէ եղբայր մը իր հարազատ եղբօրը
դէմ դաւաճանութիւն նիւթէ, ո՛հ, ամենեւին մաքէս չանց-
նիր ատանկ բան մը, մարդկային բնութեան սարսափ կազ-
մէ այդ ըսածդ :

Լին. — Տէ՛ր իմ, ձեր հարազատ եղբօր վրայ ատանկ կաս-

կած մը մի՛ ունենաք, փառք Ասատուծոյ, այս վատութիւնը
գործողը եղբայր մը չէ՛ :

Լուի.— Ի՞նչ կըսես կնիկ :

Քաս.— Ֆրանչէսքօն չէ՞ ան :

Լին.— Ֆրանչէսքօն քու եղբայրդ չէ՛ :

Քաս.— Իմ եղբայրս չէ՛ :

Լուի.— Ինչպէ՞ս . . . այն իշխանը, որ . . .

Լին.— Իշխան չէ, ԿՅ տարի է որ ինքզինքը եղբայրդ
կուզէ կարծեցնել, այն եղբորդ տեղ՝ դ՛ր ազայութեան ա-
տենը իր ձեռօքը սպաննեց. կը յիշե՞ս Լուիճի :

Լուի.— Այո, այո, մուրացկան աւաղակի մը տղայն, զոր
Պարոն Աթօլֆօի հարազատ դուկին հետ փոխանակեցի :

Լին.— Ահա ինքն է այն Ֆրանչէսքօն, որ թէև Կուիաս
տը Կօնզակուէի պալատը կը գտնուի, բայց ես զինքը ճանչ-
ցայ, ճանչցաւ զիս նաև Կուիաս տը Կօնզակուէ գուբսը, որ
ժամանակաւ խեղճ Ֆրանչէսքինօն ինձ յանձնած էր :

Քաս.— Եւ ի՞նչ, տյսպիսի յանդուգն խաբէութիւն մը :

Լուի.— Ակամայ գործեցի աէր իմ, բայց պատիժն ալ
լիովին կրեցի :

Քաս.— Արդեօք ծնողքս իմացա՞ն :

Լուի.— Ոչ, անոնք ալ ինձի պէս մեռած կը կարծեն
Ֆրանչէսքինօն, բայց քանի որ գաղտնիքն հիմա երեւան
ելաւ, աճապարենք երթալ ի Մանթու :

Լուի.— Ո՛ր գուբս հօրդ պալատին մէջ Ֆրանչէսքօ կ'իշ-
խէ, և ուր հօրդ ներկայանալէ առաջ անոր պիտի ներ-
կայանաս :

Քաս.— Ես որ զայն կը սիրէի և իբր հարազատ եղբայ-
րըս կը պատուէի, ես որ անոր օգնութիւնը կ'ակնկալէի
այս նամակաւ՝ Պիանդա նշանածս նորէն գտնելու համար :

Լուի.— Ինքն է որ գրեց իւր եղբայրը կարծելով խոզ-
խողեց, միանգամայն ժառանգութիւնդ և կ'ինդ Պիանդան
կուզէր յափշտակել :

Բառ, — Խեղճ Պիանդառ . . . բայց պէտք է գիտնաս
դու Լուիճի, թէ ո՞ւր տարաւ գայն Պրանչէսոյ:

Լուի. — Դժբաղդաբար չգիտեմ, բայց կուղեմ գիտնալ
և կը խոստանամ ալ գտնել:

Բառ. — Ո՛հ, ի՞նչպէս կրնամ վստահիլ քեզ, քանի որ
այն սարսափեցի արհեստին տէրն ես, ինչպէ՛ս կրնամ հա-
ւատալ թէ այսուհետեւ բարիք պիտի գործես:

Լուի. — Ժամոռնակին թշուառութեան բերմունքն էր որ
դիտ նախ՝ սրիկայ, յետոյ՝ դինեմնը և աւաղակ ըրաւ, սա-
կայն ալ պէտք է վերջ տամ այս ընթացքիս, ինչպէս վանա-
հայրն ալ կէս մը համուզեց, թէպէտեւ քիչ մը առաջ հոս
եկած ատենս զքեզ մեռցնել կը պատրաստուէի, խեղճ
կին, (ԼԵՒԻՍ ԳՐԵՅ) այն գազան Պրանչէսոյն հրամանաւք՝
զոր դու անուցեր, մեծցուցեր և աղէկ աշակերտ մը հա-
սուցեր էիր: Բայց ալ ևս անցեալը մոռնանք, այսուհետեւ
միշտ բարիք պիտի գործեմ և կրնամ ըսել թէ մինչև ցարդ
գործած չարութիւններէս շատ աւելի բարիքներ:

Բառ, — Ե՛րբ:

Լուի. — Հի՛մա, անմիջապէս, երբոր Լինտա ինձ ներէ:

Լին. — Ե՛ս:

Լուի. — Այո, դուն, քու ներումդ ինձ քաջալերութիւն
պիտի տայ այս երիտասարդ իշխանին ծառայութիւն մը
մատուցանելու:

Լին. — Ուրեմն սա պայմանաւ կը ներեմ քեզ՝ որ երի-
տասա զդքսուհին չար Պրանչէսոյի ճիրաններէն ազատե-
լով իւր սիրահարին գիրկը յանձնես: (Նոյն ժամանակ ներքէն լե-
զոն իւրէն յոյնք ինչ ւրէն)

Սբօլէթթա. (Ներքէն) — Ձեզ կըսեմ, այս կողմէն, ահա
ւասիկ ճամբանիս:

Լուի. — Հը՛ն . . . այդ ձայնը կը ճանչնամ, (Խեղճ
անդուզին լրջ, ելնէ և ինչոյն) ինքն է, Սբօլէթթա սրիկան՝

Ֆրանչէսոյ օր գործիքը . . . բայց մինակ չէ:

Բառ.— Այդ մարդիկը ի՞նչ ընելու համար հոս կուգան, ալ դեռ օր ինչ կը բնառեն:

Լուի.— Այ, որովհետեւ զձեզ մեռած կը կարծեն, բայց գուցէ խրճիթ մտէք իշխանդ իմ. Լուիճին է որ ձեզի կըսէ, հաւատացէք խօսքիս թէ ես ձեր վրէժխնդիրն եմ:

Լին.— Այո տէր իմ, եկէք, ձեր ապահովութիւնը մերն է: (Բառն հետ իրենց մտնէ.)

ՏԵՍԻՍ Ե.

Լուիճի, (եղբ.) Սթուէթթա և երկու Աւազակք

Լուի, (Մինչ) — Ո՞վ կը բնառեն արդեօք . . . անշուշտ զիս. թերևս իմ վրայ իշխելու պաշտօնը Ֆրանչէսոյ ասոնց յանձնած է, և կամ ինձ վճարելիք հազար տուգալթը կը բերեն, ինչ ալ ըլլայ՝ պէտք է որ արթուն կենանք: (Աղբիւրն և գլխովն ինչ, Սթուէթթա և ինչ մտնէ ընկերացի հետ.)

Սթու.— Ընկերք, ինչպէս որ ըսի՝ ահա առիկ այն խրճիթը, (ցնն) ահա մեր բնառած մարդն ալ, (Բառն) Բարեւ լուիճի բարեկամ:

Լուի.— Ա՛, մեր բարի Սթուէթթան է, զոր այն դէպքէն ի վեր տեսած չեմ:

Սթու.— Դու լու գիտես թէ ես Ֆէրարի կոմսութեան զնդերէն մէկուն մէջ մտած էի իբր՝ զնդապետ, և ահա միևնոյն պաշտօնով կերթամ Ֆէրարի դքսին իմացնել երեսասարք աղջկանը գլխուն եկած պատահարը:

Լուի.— Այդէկ խարէութիւն, բայց ինչո՞ւ հոս եկար:

Սթու.— Տիրոջ հրամանաւը զքեզ բնառելու համար:

Լուի.— Ա՛, ըսել է որ օձիքս տիրոջ ձեռքէն ազատելիք չունիմ:

Սթու.— Դուն անոր օջ բողուկն ես:



Լուի, — Դու ալ ձախ բազուկը . (Մէկուսի) կը կասկածիմ այս պատուոյ պահնորդներէն, (Բարձր) դուք հիմա Մանթուէն կուգաք :

Սբօ. — Ոչ, այլ Սեւ գղեկէն :

Լուի . — Այդ հին ու աւերակ դարձած աշտարակին գղեակ անձնը կուտաք, որ բուերու և գիշատիչ թըռչուններու բոյն մ'է դարձած, և ուր շատ անդամ ես ալ պահուըտած եմ :

Սբօ. — Պիանդա իշխանուհւոյն բնակավայր սրոշուելուն համար Ծրանչէսգօի հրամանաւ նորոգուեցաւ :

Լուի, — Կարծեմ այն դքսուհին՝ զոր դու առեւանդեցիր սակէց :

Սբօ. — Նոյն ինքը :

Լուի. — Ուրեմն, Սեւ գղեկին մէջն է հիմա :

Սբօ. — Կնոջս, աիկին Սբօլէթթայի ընկերակցութեամբը :

Լուի, — Եւ դու ալ իբր պահապան կը հսկես .

Սբօ . — Այո, կերևի թէ իմ տեղս բռնել կուգես :

Լուի . — Ա՛, ոչ, ատո՞նկ կը կարծես .

Սբօ, — Այո, քանի որ տէրս հրաման տուած է ինձ գրեց հոն առաջնորդել :

Լուի . — Ըսել է որ տէրդ Սեւ գղեակին է :

Սբօ . — Ոչ տակաւին, բայց վաղը կամ միւս օրը հոն պիտի գայ :

Լուի . (Մէկուսի) — Թշուառակա՛ն, (Բարձր) Շատ աղէկ, ըսէք իրեն թէ իրմէ առաջ պիտի գտնուիմ ի Սեւ գղեակ :

Սբօ . — Ուրեմն մեզի չե՞ս ընկերանար հիմա :

Լուի . — Ոչ, քու ընկերութիւնդ ալ ևս ձանձրալի է ինձ սիրելի Սբօլէթթա :

Սբօ . — Սա կնոջ գործը լմնցուցի՞ր :

Լուի, — Ա՛, դու գիտե՞ս :

Սբօ. — Դիտեմ նաև որ զմեզ կը նեղէ և դու ալ խոստացար . . .

Լուի, — Շիտակն ըսելով՝ տակաւին առիթ մը չունեցայ զայն աեսնելու, որով հետև դեռ հիմա հոս հասայ:

Սրօ, — Անպիտան մարդ, զքեզ կարծածէս աւելի աշխոյժ գիտէի, մինչև հիմա լմնցնելու էիր, կուզե՞ս որ զայն հիմա սպտնենեմ, (կօղէ երջէ՞ր յոնեւ)

Լուի, (Մտէնելով) — Կամաց, մ'աճապարեր:

Սրօ, — Ինչո՞ւ համար,

Լուի, — Մինակ չէ,

Սրօ, — Եղբա՞յրը հոս է,

Լուի, — Այո, նաև ամուսինը:

Սրօ, — Հոգ չէ, ի՞նչ կըլլայ, անոնք երկու հոգի են, իսկ մենք չորս, պէտք է ուրեմն մտնենք: (Իտշնը Գրիօնէ, Երջը Կէն Ընկերէն օւ)

Լուի, (Արէնելով) — Բարց ոչ կըսեմ ձեզի. կիմանա՞ք, կնոջ հանելիք օգնութեան աղաղակները գիւղիս մերձակայ պահականոցէն պիտի իմացուի, երիտասարդ իշխանը սպաննող աւազակը ամեն բան տարաձայնած է, քու անոր եղբօր Փրանչէսգօի հետ պտըտելդ տեսած են, և եթէ ճանչցուիս՝ կորսուած ես:

Սրօ, — Իրաւունք ունիս, զգուշութեամբ գործելու է, բայց ես ուրիշ միջոց մը գիտեմ, ոչով մէկը չպիտի կասկածի վրաս:

Լուի, — Ի՞նչ է նայինք,

Սրօ, — Տեղի ունենալիք կուռոյն աղմուկէն գլուխնիս շատ մարդ չի հաւաքելու համար մենք հոս սա յարդի ըլտեմարանին մէջ կը պահուըտինք, ուր թերևս խոտ ալ կայ (Երջոյ Երջ) ճիշդ գուշակածիս պէս, բաւական խոտ կայ:

Լուի, (Մտնելով) — Արդեօք ի՞նչ է միտքը:

Սրօ, — Այս շտեմարանը որ փայտաշէն է, խրճթին շատ մօտ է, քիչ ատենէն գիշերը վրայ պիտի հասնի, շտեմարանին կրակ կուտանք և դուռը կը պաշարենք:

Լուի . (Մեկուսի) — Այ անպիտան սրիկայ :

Սբօ . — Ի՞նչ կըսես .

Լուի . — Կըսեմ թէ ատիկայ շատ աղէկ խելք մ'է .

Սբօ . — Մեղի համար ամենևին վախ չի կայ , ահա գիշերին ալ վրայ հասաւ . (Տեսարանը էջ միսնայ)

Լուի . — Սպասենք որ քնանան , դուք սա յարգի շատ մարանը մտէք ես ալ դրանը առջև կը կենամ , և երբ յարմար առիթը գտնելով բուռի ձայնով նշան մը տամ՝ անմիջապէս հասէք .

Սբօ . — Ուրեմն որոշուեցաւ :

Լուր . — Խօտը այրելու համար կրակ ունի՞ք քովերնիդ :

Սբօ . — Ունիմ . ատանկ բաները չեմ մոռնար .

Լուի . — (Ազնուի լսածի պէս յետոյնս) — Ո՛հ , ահա կուգան շուտ ըրէք շտեմարան մտէք . (Մթնօրէն եւ ընկերս Գլխարկնիս փերսիսանին հոն յգնէ եւ շտեմարան մտնէ :

Լուի . (Կամայ ճշ շտեմարանին նիգը դնէ եւ իրմէն դուռը կ'աւել)

— Լինտա . Լինտա և դու իշխանդ Բաօյօ , շուտ եկէք :

(Լինտա եւ Բաօյօ մտնեն)

Լին , — Ի՞նչ կայ որ ,

Լուի . — Սո՛ղ , կամայ խօսէ աւագակները հոս շտեմարանին մէջ փակեցի , պէտք ասկէց մեկնինք շուտ .

Լին . — Մեկնի՛՛ր , գիշեր ատեն . ասէր Աստուած , և ինչո՞ւ .

Լուի . — Պիանդա իշխանուհին երթալ ազատելու համար

Բաօ . — Ուրեմն ուր ըլլալը գիտես :

Լուի , — Սեւ գղեակը , ուր անպատճառ մինչև վաղն առաւօտ հասնելու ենք օն շուտ ըրէք :

Բաօ . — Երթանք , երթանք ուրեմն :

— Լին . — Բայց դուք դեռ տկար էք և քայլելու կարողութիւն չունինք :

Բաօ . — Ո՛հ , Պիանդան ազատելու համար տուած այս որոշումնիս արդէն զիս զօրացուց :

Լուի . — Շատ աղէկ , բայց նախ ըսէ ինձ Լինտա , թէ խրճիթին մէջէն դիւրաւ փախցնելիք թանկագին բաներ ունի՞ս , վասն զի աւազակք մէկ վայրկեանէն կրակի պիտի տան խրճիթնիս :

Լին , — Ո՛վ Ատաւած իմ , մեր խեղճ պատասպարանը :

Լուի . — Ամենևին ցաւելու չէ , վասն զի ասկէ աղէկ բնակարան մը պիտի արուի սեղ , հիմա ըսէ ինձ թէ ըշտեմարանէն խրճիթ ասնոյ ճամբայ մը կա՞յ :

Լին . — Ա՛յ ,

Լուի . — Ուրեմն օգնէ ինձ սա տակառները դրանը առջեւ դնելու , (Կընչն) հիմա սա աւազակաց վերարկունները վրանիդ առէք և ճամբայ ելլանք երբոր նշան մը տամ : (Ձայս ըսել է ետքը Լուիճի բուի պէս ձայն մը կը հանէ , Լինտա և Բաօլօ ժայռէն վեր ելնեն , քիչ մը ետքը շտեմարանէն բարակ մուխ մը կ'ենէ , յետոյ բոցեր)

Լուի . — Ահաւասիկ խտաբը կրակ տուին :

Սբօլէթթա , (Ներսէն) — Լուիճի , Լուիճի դուռը բաց վրանուս գոցուած է (Աստղիտ պատնէ կանչէն) օգնու՛թիւն :

Լուի , — Ի՞նչ ազուր կրակ մը կը շինեն սա խտաբը և կը յիշեցնեն ինձ սա ճամարտութիւնը թէ՛ «Պուբն զարբորեաց և պեղեաց՝ ի նոյն անկցի ի խորխորատ զոր և դորձեաց :» ուրեմն մնայք բարեա՛ւ . (Մեկն)

(Բոցերը կը սաստկանան , առատաղին մէկ մասը կ'ելնայ , Սբօլէթթա և ընկերք տեսնուին՝ սրոց դեմքերը սևցած և հագուստնին այրած է , կատաղաբար գերանի մը կը փաթտուին , բայց գերանը կը կոարի և երեքն ալ բոցերուն մէջ կաների ոյթանան , Այն ատեն Բաօլօի ժայռին բարձրէն հեռանալը կը տեսնուի , Լուիճի վրէժխնդիր ոգւով սիրտը կը ծեծէ և Լինտա ի ծունր կաղօթէ :

ՊԱՏԻՆԵՐ Է

(ՍԵՒ ԴՂԵԿԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ)

(Տեսարանն է Սև դղեկի աւերակները, խորը խրամ մը, խրամէն քիչ մը անդին դաշտ մը: Աշտարակ մը, աշտարակին տակը դուռ մը, աջ կողմը խորտակեալ կամարներ)

ՏԵՍԻՒՆ Ա .

Պէրբօ և Զինուորք

Պէրբօ. — Աղէկ հսկեցէք ընկերք իմ, վերջապէս իմ վերապատուելի տիրոջս Փրանչէստօի հրամանաւը Ֆէրարի Պիանգա գ.քուհին, իւր հօրեղբօր Իւպէսթօ դ.քսին անձնապահ զինուորաց հսկողութեանը յանձնուեցաւ:

Ա.Զինուոր, — ձյմարիտ է, Պէրբօ բարեկամ, ասկէց զատ դու ամեն արհեստէ տեղեակ մէկն ըլլալու ես, որ հիմա ալ այս խմբին հրամանատարութիւնը կը վարես:

Պէր. — Էհ, ի՞նչ կըլլայ եղեր, այս ալ բա՞ն մ'է որ... երբ մէկը ինձ կը հրամայէ, զոր օրինակ, Փրանչէստօ իշխանը ինձ հրամայած է այս աւերակաց մէջ զէնքեր բընտըռել, վասն զի այս տեղերը ատենօք աւաղակաց որջ եղած է. եւ ես ալ հիմա կը հրամայեմ քեզի այս ամեն խորշերը աչքէ անցնել, հասկնալու համար թէ արդեօք աւաղակները այն խորշերուն մէջ զէնք և տակառով վառօթ ձգած են:

Զին .— Սատանան տանի քու այդ հրամանդ , այս հաշ-
ւով բոլոր դղեակը աչքէ անցնելու է :

Պէք .— Այո . ամեն ծակերը ծուկերը աչքէ պիտի ան-
ցունէք : (Ներսէն Քոբոնի յայն) աս ի՞նչ է :

Զօր . (Դուրս նայելով) — Երեք հոգի կը բերեն :

ՏԵՍԻԼ Բ .

Նոյնք , Լուիճի , Բաօլօ , Լինտա (Որդ Վերաբլաներո քա-
րոսած եւ Էլեարբլաներ դրած են) և Զօրական մը :

Զօր .— (Մտած արեւը) Այս մարդիկը դադտնի պղտիկ դրան
մօտ ձերբակալելով հոս բերինք որ հարցաքննէք .

Պէք .— Այո , հարցաքննենք , (Լուիճի) խօսէ , դուք ալ
այն դժոխալին խմբէն էք , որ Պիանդա իշխանուհին առե-
ւանդելով իւր սիրահարը սպաննեցին , եթէ անոնցմէ էք
կամ չէք ըսէք , վասն զի չպիտի թողում զձեզ :

Լուի .— Տիրոջս հրամանաւը հոս եկայ , որ զիս Սբօլէթ
թային զրկած է :

Պէք .— Անունդ ի՞նչ է :

Լուի . (Վերաբլան քանաւ) — Լուիճի .

Պէք . (Մէկուսէ) — Աստուած իմ , ներէ ինձ , այս այն
մուրացկանն է որ դքսական պալատը եկաւ ողորմութիւն
խնդրելու (Բարչք) երթամ հասկնամ թէ տէրս ձեզի հա-
մար ի՞նչ հրաման ունի :

Լուի .— Ի՞նչ Թրանչիսգօ իշխանը հո՞ս է :

Պէք .— Ժամէ մ՛ իվեր , դուք ալ ժամանակին հասաք
մեր սիրելի տիրոջ եղբօրը . Բաօլօի սպաննիչներու ձեռքէն
Պիանդա իշխանուհին ազատելու համար , Ասկէց զատ , Թը-
րանչէսգօ իշխանին հրամանն է թափառական ճամբորդ-
ները ջրբեակալելով իրեն ներկայացնել (Շոտոյա Գիլի)

ՏԵՍԻԼ Գ .

Լուիճի , Լինտա , Բաօլօ , խորը պահապանք .

Լուիճի . — Մեզմէ առաջ կը յաջողին . . . կարծես թէ սատանան արգելք կը յարուցանէ մեզի .

Լին . — Ի՞նչ պիտի ընենք հիմա .

Բաօլ . — Յանդգնութիւն պետք է , հօրս զինուորականներէն շատերը հոս կը տեսնեմ .

Լուի . — Դ՛յո , բայց ես ալ թշնամուոյն խմբին մէջ նոր մտած աւազակներ և վարպետ խորամանկներ կը տեսնեմ :

Լին . — Ուրեմն ի՞նչ պիտի ընենք :

Լուիճ . — Աստուծով պիտի ազատեմ զձեզ այս մկանց ծուղակէն ուր ես առաջնորդեցի ,

Բաօլ . — Պիանդայի շատ մօտ եմք ըսիր , բայց մինչեւ ցարդ չկրցինք զինքը տեսնել :

Լուի . — Համբերեցէք տէր իմ . համբերեցէք , զայն տեսնելու ժամանակը կուգայ , մենք հիմա զգուշանանք ինքզինքնիս չի մասնելու , ուստի սա անկիւնը մտէք պահուրտեցէք , ես այս աւերակները շատ ազէկ կը ճանչնամ ստորերկրեայ գաղտնի այրիներ կան՝ ուր կրնանք . . . բայց ահաւասիկ կուգան , պահուրտեցէք կըսեմ , պետք է որ նախ ես իմ խորագիտութիւնս ՚ի գործ դնեմ և եթէ յաջողիմ

Բայօ . — Ես ալ պիտի օգնեմ քեզ :

Լուիճ . — Բայց պահուրտեցէ՛ք , ահա կուգան : (Բաօլօ և Լինտա աջ կողմը պահուրտին)

ՏԵՍԻԼ Դ .

Լուիճի , Փրանչէսքօ , Պէրբօ , Զօրականք .

Փրանչ . — (Լուիճին տեսնելով մէկուսի) Նոյն ինքն է

անպիտան Սբօլէթթան ի՞նչու արդեօք այս թշուառականը չսպաննեց (Պէբբօյին) Պէբբօ՝ դ՛նա իշխանուհւոյն ըսէ որ հոս դայ .

(Պէբբօ ձախ կողմի աշտարակը մտնէ)

Լուիճ .—Մառայ եմ ձեր բարձր հրամանացը տէր իմ և Ձերան (Ընդմիջէ խստո-թեամբ) Գիտե՞ս թէ քեզի համար ինչե՛ր կը լսեմ թշուառական . . . դու իմ սիրելի եղբորս մարդասպաններուն խմբէն ես եղեր :

Լուիճ .—(Շուարեալ) Ե՞ս ի՞նչպէս .

Ձերանչ .—Լուէ՛ , դո՛ղ աւազակ (Զինւորաց) զէնքերը տուէք վրայէն . (Զէնքերը կտանուն զօրականք)

Լուիճ .—(Մէկուսի)Ո՞րչափ ապուշ եմ եղեր որ ասոնք չեմ դուշակեր :

Ձերանչ .—[Զօրաց] Հիմա զմեզ մինակ թողուցէք : (Զօրականք մեկնին)

Ձերանչ .—(Քաղցրութեամբ Լուիճին)Մօտեցի՛ր , ալ բանէ մը չեմ վախնար , չե՞ս գիտեր թէ այս բրածս կատակ մէ :

Լուիճ .—Հը՛մ ի՞նչպէս կատակ , ինչ որ է շնորհակալ եմ , դուք կարծածէս աւելի զօրաւոր էք եղեր

Ձերանչ .—(Մեղմօրէն) Այն ըսած կինս ի՞նչ ըրիր :

Լուիճ .— Երիտասարդ իշխանին քովը զրկեցի :

Ձերանչ .—Մինչիօի խո՞րը :

Լուիճ .— Այս՛ , քանի որ մեկն հոն է միւսն ալ պետք է անոր ընկերանայ :

Ձերանչ .—Եւ Սբօլէթթա՛ն

Լուիճ .—Զդէ՛ գինեմոլը . . .

Ձերանչ .—Ըսել է որ ճամբան թողուցիր զայն . . .

Լուիճ .—Այնչափ արբեալ էր որ . . .

Ձերանչ .— Պէբբօ ըսաւ ինձ թէ հետդ երկու մարդիկ կան եղեր :

Լուիճ .— Այո՛ :

Ֆրանչ .— Ո՞վ ե՛ն .

Լուիճ ,— Բայց . . Սբօլէթթային երկու ընկերներն են :

Ֆրանչ ,— Լաւ (Քոսէ Տը Կալվ) Ահաւասիկ քեզ խոստաց-
եալ գումարը :

Լուիճ ,— Ա՛հ տէր իմ , որչա՞փ բարեսիրտ էք . . տակաւին
պէտք ունի՞ք ինձի :

Ֆրանչ ,— Անշո՛ւշա :

Լուիճ ,— Ուրեմն կատարելիք պաշտօնս իմացուցէք :

Ֆրանչ ,— Պիանդա դքսուհին հիմա հոս պիտի գայ ,
անոր ներկայութեանը պիտի խոստովանիս այն յանձան-
քը որ ես քեզի գործել տուի :

Լուիճ ,— Ի՛նչ :

Ֆրանչ ,— Պիտի ըսես թէ դու իւպէտթօ դքսին հաւա-
տարիմներէն էիր և անոր թելաթրութեամբը Քառօրի իշխա-
նը սպաննելով Պիանդան առւանգեցիր , կը հասկընաս :

Լուիճ ,— Կը հասկընամ , . թէ այս խոստովանութեամբս
մտքերնիդ զիս կազախան հանել տալ է :

Ֆրանչ ,— Կորսուէ՛ թշուառական , ամենին ատանկ
նպատակ մը չունիմ :

Լուիճ ,— Թերեւս ճշմարիտ է .

Ֆրանչ ,— Եթէ ինձ հնազանդիս՝ ընդ հակառակն դքեզ
պիտի ազատեմ և միայն երկու ընկերներդ պիտի պատժեմ :

Լուիճ ,— Ծնորհակալ եմ տէրիմ , սակայն

Ֆրանչ ,— Ս՛ոթ , լսէ , ահաւասիկ իշխանուհին կուգայ
(Կիանդա Խոբ աշտարակին դռնէն երեսայ , Ֆրանչեոքօ լայն դիմաւորէ)

Լուիճ ,— (Մէկօտի) Եթէ յաջողիմ գործը անգամ մը ի-
րեն հասկցնել :

ՏԵՍԻԼ Ե ,

Նոյնք Եւ Պիանգա

Ֆրանչ , — Եկուր սիրեցեալդ իմ Պիանգա , աւա՛ղ , ձեզ ազատելովս զգացած ուրախութենէս վերջը այնպիսի ցաւալի լուր մը կիմանամ որ պիտի տրտմեցնէ նաև զձեզ . Պիանգա , — Երկինք . . իշխանը .

Ֆրան , — Ժամ մը առաջ տակաւին կը կասկածէի , բայց հիմա չեմ տարակուսիր թէ Բաօլօ եղբայրս սպաննուեր է :

Պիան . — Սպաննուե՞ր է , ա՛հ :

Ֆրանչ , — Իմ քաջերուս փութաջանութեամբը այս դղեկին շրջականերէն ձերփակալեալ մարդասպանները խոստովանեցան :

Պիանգա . — Բաօլօ՛ . . ա՛հ սուրբ մն ճշմարիտ է որ այլևս աշխարհիս վրայ ապրելէ դադրեցար , ա՛հ , աւա՛ղ :

Լուիճ , — (Մէկո՞ր) Խեղճ իշխանուհի :

Պիանգա , — Ա՛հ սնխի՛ղճ գազաններ , ի՞նչ ըրաւ ձեզ իմ Բաօլօս որ յանդգնեցաք զինքը խողխողել .

Ֆրանչ . — (աւա՛ղ) Մօտեցի՛ր թշուառական , մօտեցի՛ր և ինձ պատմածդ վերստին կրկնէ :

պիան , — (Ետ քաջուի և դէմքը ծածկէ) [Բաօլօիս մարդասպանը հոս իմ ներկայութեանս , անոր արեամբը շաղախեալ

Լուիճ : — (Իճծունը) Այն որ այս ոճիրը գործելու համար ինձ վճարած էր , այն մարդը ո՛հ իշխանուհի , երևելի անձ մ'է , այն մարդը անդուլթ մ'է և այսօրուան օրս գահ մը բարձրանալու փառասիրութիւնը զայն կուրացուցած է :

Ֆրան , — (Ոտքովը զարնելով) Այդ ոչնչաբանութիւնները մեկդի թող , քեզմէ մի միայն Իւպէնթօ դքսին անունը կուզենք իմանալ :

պիան , — Իւպէնթօ՛ . . . հօրեղբայրս , ո՛հ , չի կրնար

ըլլալ, անկարելի է այդ, հօրեղբայրս կը զրպարտեն:

Փրանչ, — Ես ալ այդպէս կը յուսամ (առ Լուսին) հիմայ սակեց դուրս ելիր, կորի՛ր, ապա թէ ոչ այս խոստովանութեանդ փոխարէն զքեզ չպատժելուս համար պիտի զղջամ:

Լուսին, — (Մէկտէ) Երթամ տեսնեմ թէ Մանթուի դուքսին կուրտո տը կօնզակուէի զինւորներէն մարդ կա՞յ դուրսը: Մէկէ

ՏԵՍԻՒՆ Զ.

Փրանչ, Պիանգա, յետոյ Լինտա, յետոյ Բաօլօ.

Փրանչ, (Առ պիանգա, որ հրաժե գլխակէ) — Ճշմարտութիւնը յերևան հանելէ առաջ կուզեմ զքեզ այս սոսկալի բնակարանէն ազատել սիրելիդ իմ Պիանգա, իմ միակ փափաքս առանց ժամանակ կորսնցնելու ՚ի Ֆէրար երթալնիս է, զի մի գուցէ ճամբուն վրայ թշնամի խմբի մը հանդպինք:

Պիան, — Ոչ, ալ չեմ կրնար հաւատալ:

Փրանչ, — Ի՞նչ պէս համոզելու է զձեզ ուրեմն, պէտք է որ Մանթուի մէջ բնակիս ուր մայր մը քեզ կսպասէ:

Պիան, — Այո՛ ինձ պէս խեղճ և առանձնացեալ մայր մը:

Փրանչ, — Հաճեցէք ուրեմն երթալու պատրաստութիւն տեսնել (Պէթօն, որ կերտայ իորէն) պէ՛րբօ, գըսուհւոյն գահաւորակը պատրաստ է:

Պէթ — Այո տէր, և քաջարի զօրականք ձեր հրամանին կ'սպասեն:

Փրան, — Այո՛, անոնք՝ որոց լաւ կը վստահիմ: (Պէթօյին մօտեցած հրամաններ կուտայ, այս միջոցին Լինտա աւերակներէն ելլէ և առանց մէկէ մը տեսնուելու մօտենայ Պիանգայի, որ ցնորեալ՝ տեղեկի մը կը լսնած էր.) 15

Լինտա. — (Կամաց, Պիանդային) Յանուն երկնից իշխանունհի, այս մարդուն հետ մի մեկնիք :

Պիան, — Ո՞վ է որ ինձ կը խօսի, (Լինտայի նայի, որ իւր դէմքը բացած է.) Այս կի՛նը . . . այս դէմքը՝ Ի՛նչ յիշատակ :

Լինտ, (Փրանչիսքօի մօտենալը տեսնելով) — Լուսթի՛ն (Նորէն պահուրտի .)

Պիան, — Աստուած իմ, ի՞նչ կը նշանակէ այս. (Պէքօ մեկնի)

Փրան, — (Պիանդայի) Եկէ՛ք սիրեցեալք իմ Պիանդա, մեկնելու ժամն հասաւ. (Թեքը ներկայացնէ)

Պիան, (Մերժելով) — Տէր իմ :

Փրանչ, — Ինչո՞ւ կը վարանիք :

Պիան, — (Խռովեալ) Չեմ գիտէր, բայց կուզեմ քիչ մը ատեն մնալ :

Փրանչ, — Բայց պէտք է որ զձեզ տանիմ, այո, պէտք է և այս վայրկեանիս :

Պիան, — Սակայն :

Փրան, — Կը հրամայեմ, պէտք է որ հնազանդիս եւ հետս գաս կըսեմ քեզի : (Չայն քաշըշելով տանելու վրայ կըլլայ .)

Բաօլօ (Որ աւաղակաց մանթօին մէջ ծածկուած էր, ճամբանին կտրելով) — Ո՛չ, դուրս չպիտի ելլայ :

Փրանչ, — Ի՞նչ կը նշանակէ այս, և ով կը համարձակի Բաօլ, — Դուրս չպիտի ելլաք կըսեմ, կիմանա՞ք :

Պիան, — Ո՛հ, այս ձայնը :

Փրան, — Ո՞վ ես դու ուրեմն. (Բաօլօ վերարկուն և զըլ-խարկը նետէ .)

Բաօլօ. — Ես եմ այն՝ որ տակաւին իրաւունք ունի քու վրադ իշխելու և հրամայելու :

Ֆրան, — (Ետ քաշուելով) Բաօլօն

Պիան, — Ինքն է, ա՛հ Բաօլօ :

Բաօլօ, — Պիանդա, սէրդ իմ: (Գրկախառնին)

Ֆրան, — Դեռ կենդանի՛, ուրեմն խաբած են զիս :

Բաօլօ, — Այո՛ կենդանի եմ զքեզ յաղթահարելու հա-
մար :

Ֆրանչ, — Այոպէ՞ս ուրեմն, բայց իշխանդ Բաօլօ, որչափ տխմար էք եղեր որ ինքզինքնիդ վազրին ճերանը ձգեցիք. Օն ուրեմն հասէ՛ք իմ հաւատարիմ զօրականներս. (Զօրա-
կանք ձախէն մտնեն.)

Պիան, — (զՖրանչիսօգօ ցուցնելով) Չերբակալեցէ՛ք.

Ֆրան, — Բռնեցէք այս կինը. (Զօրականք Պիանդան քա-
շքելով խորի աշտարակին մէջ կը տանին :)

Բաօլօ, — (Պոռալով) Ո՞ր էք իմ հօրս քաջ զօրականնե-
րը, հասէ՛ք, օգնեցէք ինձ :

Լուիճ, — (Աջ կողմէն մտնէ սուր ի ձեռին, ետեւէն շատ
մը զօրականներ .) Ահաւասիկ եմք տէր իմ: (Կսկսին կըռ-
ուիլ, Լուիճի և Բաօլօ յաղթող հանդիսանան, Ֆրանչիս-
քօի զօրքերէն շատերը վիրաւորեալ կիշնան :)

Լուիճ. — Քաջալերութիւն տէր իմ, քաջալերութիւն,
ասա կը նուաղին: (Պէբօ մտնէ)

Ֆրան. — (Պէբօյին) Գնա շուտ մը պատնէչին առկե-
կեցող մարդիկներս կանչէ՛. (Պէբօ մեկնի)

Լուիճ, — Անձնատուր եղիր,

Ֆրանչ, — Ո՛չ տակաւին: (Պիանդան տարած աշտարակին
դրանը մէջ ինքզինքը պաշտպանէ,)

Լուիճ, — Հալածենք նենգաւորը տէր իմ.

(Լուիճի և իւր զօրականք դէպ ՚ի աշտարակ երթան,
բայց Պէբօյի բերած մարդիկները շատուր ըլլալէն աջ
կողմ փախչին և պաշտպանողական դիրք մը առնեն: Բաօլօ

և իրենները իրարու քով կայնին .)

Բաօլ, — (Լուիճիի) Ահա կը դօրանան . . . մնայք բարեհաւ. Լինտան ազատէ Լուիճի, ահա ես կը մեռնիմ .

Լուի, — Ոչ տակաւին, ստորերկեայ ճամբայ մը դիտեմ որ այս աշտարակին մէջը կը տանի .

Բաօլ, — Պիանգայի քով .

Լուիճ, — Այ՛ո, եկուր . . . (Ճամբայ մը դտնէ և խորէն մեկնի, ծակն ալ կը գոցէ .)

Փրանչ, — (Աշտարակէն դուրս ելլելով) Ո՛ւր գացին .

Պէք, — Աշտարակներուն մէջէն աներևութացան .

Փրանչ — Ուրիմն իրենց դադանիքը գիացողին հետ թող կորնչին, եկո՛ւր Պէքբօ սա խրամասին վառօթը բռնկցո՛ւր, որպէս զի այս աշտարակը հիմնայատակ կործանի անոնց հետ .

Պէք, — Ինչ՞ կըսէք տէր իմ .

Փրանչ, — Պետք է որ հրամանս կատարուի և անմիջապէս ճամբայ ելլուի, ի Մանթո՛ւ ի Մանթո՛ւ . . . (Ամենքը մէկ բերան կեցցէ պռուալով մեկնին, Պէքբօ աշտարակին դրանը առջև երթալով ձեռքի ջահովը վառօթը բռնկցնէ եւ փախչի, մեկ վայրկենէն սրտման ձայն մը կը լսուի, աշտարակը կը կործանի, և հեռուն կը տեսնուի Պիանգա քարէ խաչի մը ոտքը ՚ի ծունր իջեալ, Բաօլօ կերկայ, որ դէպ ՚ի Պիանգա կը յառաջանայ .)

ՊԱՏՊԵՐ Ը

(ՃԲԱՆՁԷՍՔՕ ԴՈՒՔՍ ՄԱՆԴՈՒԹԻ)

(Տեսարանն է պալատան մեծ սրահը)

ՏԵՍԻԼ Ա .

Անթոնեօ , Բիէթուօ ,

Անթոն, — Ինչ որ պատմեցիք , ճշմարիտ է :

Բիէթ, — Այս տէր իմ , և ասոր մէկ ապացոյցն է խոր-
ճիթիս մոխրակոյտը , Լինտա և երիտասարդ Բաօլօ իշ-
խանը աներևութացած են :

Անթոն , — Զարմանալի հակապատկեր , մինչդեռ Ֆը-
րանչէսքօ իշխանը այս միջոցիս երիտասարդ դքսուհւոյն
Պիանգայի յափշտակիչներուն հետքը բնտուելով կզրաղի ,
այս երկուքէն որո՞ւն հաւատալու է :

(Դրսէն ուրախական ձայնք) Ի՞նչ է այս աղաղակը (խորը
երթայ) Ինքը . . . Ֆրանչէսքօ իշխանն է որ պալատան
զաւիթը կը մտնէ : Օրհնեալ ըլլան երկինք որ անվտանգ
կը վերագառնայ այսպէս :

ՏԵՍԻԼ Բ ,

Նոյնք , Ֆրանչէսքօ , Պէրբօ և մի քանի Զօրականք :

Ֆրանչ, — (Կամաց մը Պէրբօյին) Բոլոր հետևորդացս ու-
կի բաժնեցէք առանց . . . և քնացածներուն սալառնացէք :

Պէր, — Շատ աղէկ տէր իմ , (Մէկուսի) ո՛հ կը սնս-
կամ իրմէ , ես որ զինքը այնչափ առաքինի կը կարծէի . . .
սակայն . . .

Ֆրանչ ,—(Խրոհոյ յայնչ) Անթօնե'օ . կողջունեմ զձեզ եւ
ցաւ 'ի սիրտ կիմացնեմ մեր ամէն ջանից և զօհողութեանց
'ի դերև ելնելը , միանգամայն ուրիշ բան չեմ բերեր հե-
տըս բայց եթէ աղետալի լուրեր :

Անթօ ,—Եւ ես տէր իմ թերևս ուրախատ իթ յուրեր բե-
րած եմ :

Ֆրանչ ,—Ի՞նչպէս :

Անթօ ,—Ձեր Բաօլօ եղբայրը , . . .

Ֆրանչ ,—(Իողահար) Եղբայրս . . . և ի՞նչ :

Անթ ,—Կը կարծուի թէ տակաւին ողջ է :

Ֆրանչ ,—(Եր եր երևուվ) Ո՞ղջ է , և ո՞վ ըսաւ :

Անթ ,—(Բէնթուօն ցոյնելով) Այս մարդը . . . ձկնորս մ'է
որ իշխանը Մինչիօի գետէն ազատած է :

Ֆրանչ ,—(Բէնթուօն) Ո՞վ . . . դո՞ւ . . . ահ ուրեմն
դո՞ւ ես որ զայն . . . կամ ինքզինքդ նորա ազատարարը
կուղես ցուցնել :

Բիէթ ,—Ինչ որ ըսի , ճշմարիտ է տէր իմ , ես զինքը իմ
խրճթիս մէջ խնամեցի :

Ֆրանչ ,—(Կարողարար անոյ նայելով) Ի՞րաւ , և ի՞նչ ըրիք
զինքը անկէց վերջը :

Բիէթ ,—Ձգիտեմ տէր իմ , խրճթէս ինչպէս փախ-
չելին և ո՞ր կողմ երթալին անձանթ է ինձ , որովհետև
աճապարեցի գալ այս ամենը ձեզ իմացնել .

Ֆրանչ ,—(Անթուօն) Անթօնե'օ , իմացայ որ Մանթուի
աւագանեաց մէջ ինձ դէմ դաւ և խարդաւանանք կը նիւ-
թեն :

Անթօ ,— Ի՞նչ կըսէք տէր իմ , կարելի՞ բան է :

Ֆրանչ .—Այո՛ , ես բոլոր բարեկամներս և թշնամիներս
կը ճանչնամ . հիմա ճամբորդութենէս կը վերադառնամ
մէկ քանինքը պատժելու և մէկ քանինքը վարձատրե-

լու համար, Այս մարդը թերևս խռովարարներու գործակատար և կամ ստույթեանց տարացայնիչ մ'է :

Բիէթ ,— (Արշակունցեալ) Ե՛ս .

Ֆրանչ ,— Պիտի իմանամ, պիտի ստուգեմ. (պէքօյն) Պէբբօ , այս մարդը լաւ հսկողութեամբ բանտարկեցէք և չըլլայ որ փախցնէք .

Բիէթ ,— Ի՛նչպէս , միթէ . . .

Պէբբօ ,— (Մեկուսի) Փոխուած է Աստուած իմ, փոխուած է . գառնուկը վագր մը դարձած է

Ֆրանչ ,— (պէքօյն) Տա՛ր այս մարդը , (պէքօ չինորայ աչ չնէ .)

Բիէթ ,— Բայց աէր իմ, զիս աղէկ չէք դատեր, ես հինօրեայ զինուոր մ' եմ , բոլոր արքունեաց մէջ անցած դարձուածքներէ անտեղեակ, և չկայ զօրութիւն մը նոյն իսկ ձերը որ կարենայ զիս ստելու ստիպել ,

Ֆրանչ— (Մեկուսի) Գոնէ պիտի կարենամ զքեզ լռեցնել : (Կո՛նց ճշ պէքօյն) Եթէ խօսիլ ուզէ՝ գայլեցէք իւր բերանը, և ՚ի հարկին

Պէբբօ ,— Այո՛ իշխանդ իմ (Մեկուսի) Օն ուրեմն , ահաւասիկ ես ալ իւր մեղացը կը մասնակցիմ :

(Մեկնի Բիէթուօի և Զօրաց հետ):

ՏԵՍԻԼ Գ

Ֆրանչ , Անթօն , (Երէ) Դքսուհին Լէօնուա

Անթօ . — Ճշմարիտ կըսեմ իշխանդ վեհազուն , թէ ձեր այդ բարկութիւնը զիս կը զարմայնէ և չեմ կրնար հասկնալ այդ զգուշութեանց պատճառը, զոր հիմա կը բանեցնէք :

Ֆրանչ, — (Շրտապա տայելով) Մինչև ցարդ շատերուն վրայ կը վստահէի բայց հիմա սր մատնիչներով շըջապատեալ եմ հօրս տկարութենէն կրնամ օգուտ քաղել . . մեռած եղբօրս անսւամբը զինուելով թերևս մի քանի զրպարտիչներ պիտի դռնեմ :

Մնթ . — Ի՞նչ կըսէք . .

Ֆրանչ, — Ձը լսեցի՞ք այս մարդուն խօսքերը , և կը հաւատա՞ք իւր առասպելիցը , ո՞վ պիտի համարձակի զատոնք իմ հօրս իմացնել և անոր ներկայութեանը թաօլօ իշխանին անունն արտառանել : (Դրոտնչն յոնէ)

Դքսու, — (Մտած ապենը) Բա՛՛ջօ , զաւակս , ո՞վ է որ անոր վրայօք կը խօսի՞ :

Ֆրանչ — (Պաշտօնեմք) Ես , արկին , սր դժուարին և անպառուզ ճամբորդութենէ մը կը վերադառնամ , հաւատացէք խօսքերուս , ալ ինքզինքնիդ զսպելու ժամանակն հասած է , ուստի բոլոր ձեր շուրջը գտնուող անձանց սիրտը զուր անգը մի խռովէք : (Դրոտնչ կը քայտի) ահա ատիկ հայրս կուգայ , կաղաչեմ լռեցէք , և ձեր սրտմութեամբը անոր սիրտն ալ մի վիրաւորէք :

Դքսու, — (Ձարմացած) Ֆրանչէսքօ , իրաւ դս՛ւք էք ո՞վ

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք և Կուխօ ,

Կուխօ, — Ձեր վերադարձը որդեակ իմ (Կանչ անելով) բայց ի՞նչ կը տեսնեմ . . . մայրերնիդ խռոված և գուր զԷԼ խակօր կը մտածէք , որով կը հասկնամ թէ բերած լուրերնիդ խիտ ազետակի են . . . Ձձեզ յուսահատ բայց անհամբերութեամբ կըսպասէի և արդէն գիտէի այս պատասխանները ընդունելս . որովհետև այն կարողութիւնը որու զքեզ ընկերացուցի որդեակ իմ , և առողջութիւնիս

որ ծերութենէ և կոկիծէ խանդարեալ է, չլծողուր ինձ որ զայն քեզի հետ բաժնեմ, ասոր համար որոշած եմ անկարողութենէս և իշխանութենէս հրաժարելով զայն քեզ ձգել :

Անթ. — Ի՞նչ, տէր իմ, այդպիսի որոշում մը . . .

Կուիտ. — Հարկ անհրաժեշտ է Անթօնեօ. ուստի շուտով դնա աւագանեաց ժողովոյն իմացուր իմ այս որոշումս, դուք ալ որդեակ իմ Ֆրանչէսքօ, այս գիշեր Մանդուի դուքս պիտի հռչակուիք. ուրեմն եկէք ինձ հետ իմ հրաժարագիրս պատրաստելու :

Ֆրանչ. — Կը հնազանդիմ հայր. (Մէկտէ) Հողը սարիստակ կը բռնկի, ինքզինքս չեմ կրնար ազատել բայց եթէ ժպրհութեամբ և կատաղութեամբ : (Խրոխաբար Անթօնէի նայելով հօրը հետ մէկը :

Դքսուհին. — (Ա. Անթօն.) Կը տեսնէ՞ք Անթօնիօ, իշխանին շարժմունքը և ձայնին այլայլիլը :

Անթօն. — Մյո աիպին, և ինքնիրենս անսնց պատճառները կը փնտռէի, ո՛հ, ի՞նչպէս չեմ կրնար ձեր աչացը յուսոյ նշոյլ մը երևցնել :

Դքսուհ. — (Անթօնի մտքը բան մը է հարցնել, Անթօնէօ խոնարհելով ելնէ) .

ՏԵՍԻՒ Ե.

Դքսուհին. (Երէ) Մանկուսիկ մը.

Դքսուհ. — (Միտէ) Յուսոյ նշոյլ . . . ի՞նչ ըսել կուզէ . . . և ի՞նչ յոյս կրնան ինձ առաջ . . . Երբ զաւակս կորուսած եմ . . . չգիտեմ, բայց Ֆրանչէսքօի այս նոր խոժոռ կերպարանքը զիս կը սոսկացնէ. իւր մինչև

յայսօր ունեցած քաղցրօթ թիւնը ուրիշ բան չէ եղեր բայց եթէ կեղծաւորութիւն, կարծես թէ իր նպատակին հասնող անզգամ մ'է . (Մանկ-եկէ ճոնէ)

Դքսուհ . — Ի՞նչ կուզեն ինձմէ :

Մանկու . — Ձեր վսեմութիւնը մեր ամենասիրելի տէր և իշխան կուրաօ ար Կօնզակուէ դքսին առողջութեանը օգնելու համար քամալախիւններու վանքէն մասունքներ բերել հրամայած էր . այս վանքին քոյրերէն մին զանոնք ձեզ բերած է :

Դքուհ . — Կանչեցէք այդ առաքիլնի կիներ , այլ ևս միմիայն աղօթիւք պիտի կարենամ միտիթարուիլ : (Մանկ-եկէ երկայ, Լինաա ճոնէ Կոյրիկու)

ՏԵՍԻԼ Զ .

Դքսուհին . Լինաա . (Կոյրիկու)

Դքսուհ . — Մօտեցէք քոյր իմ , ձեր բարի գլխաւորուհին է զձեզ հօս զրկողը :

Լինաա — Ոչ տիկին . այլ այս հոնդերձանքը հագնել կը պարտաւորէի ձեզ ներկայանալու համար :

Դքսուհ . — Ինձ ներկայանալու . . . ի՞նչ պատճառաւ և ո՞վ էք դուք :

Լինաա . — (Բոլը ներեւով) Ձեր վսեմութիւնը չի՞ ճանչնար զիս :

Դքսուհ . — (Որտ եւձ) Կարծեմ թէ ամիս մը առաջ զբեզ տեսած եմ , մի թէ դուք չէ՞ք Փրանչէսքօի խնամածուն , անկէջ ի վեր ինչօ՞ւ նորէն հօս չեկաք :

Լինաա . — (Կե՞ յայնձ) Տակաւին երէկ ձեր ամենասիրելի անձանց ընկերակցութեամբ բանտարկուած էինք

սարսափելի մահուան մը սպասելով և չգիտեմ ի՞նչ մեծ հրաշքով մը ազատեցանք գետնաբոր ճամբէ մը՝ զոր մինակ ամուսինս գիտեր, Փառք երկնից, հեռացանք և ազատեցանք այն աւերակներէն՝ որ մեր գերեզմանը պիտի ըլլային .

Դքսուհի . — Ինծի սիրելի անձինք ըսի՛ր, և ուրեմն տանք որո՞նք են .

Լինտա . — (Յածէն) Ա՛հ տիկին, կազաչեմ, մեծ ուրախու թեան մը դիմանալու համար ինքզինքնիդ պարտատեցէք. մի՛ կանչէք, մի՛ պոռաք ապա թէ ոչ ամեն բան կորսուած է

Դքսուհի . — Աստուած իմ . . . բայց իօսեցէք ուրեմն, ուրախութիւն ըսիք, ուրախութիւն ինձ համար . արդեօք գաւկէս բարի լո՞ւր մը կը բերէք .

Լինտա . — (Կամօյ) Ա՛յո՛ տիկին .

Դքսուհի . — Զուա՛կս, Բաօլօ՛ս .

Լինտա . — Դեռ կապրի .

Դքսուհի . — Կապրի՞ .

Լինտա . — Լռեցէք տիկին .

Դքսուհի . — (Կամօյ) Ա՛յո՛ այո՛, ուրեմն ազատած է

Լինտա . — Երկու անգամ .

Դքսուհի . — Ինքը՛, Բաօլօ՛ս, կապրի՛, ո՛հ չես խաբեր զիս այնպէս չէ՞ .

Լինտա . — Աստուած չընէ տիկին բայց ինքզինքնիդ զսպեցէք

Դքսուհի . Ե՛ս, և ինչո՞ւ համար .

Լինտա . — Եթէ իմանան . . .

Դքսուհի . — (Զօրո՛ւնեմօք) Բայց կուղեմ որ բոլոր աշխարհք իմանայ, կուղեմ որ այս պալատը իմ ուրախական ազադակներովս թնդայ .

Լինտա , — Կո՛ւզես ուրեմն որ զուակդ իւր ամենաօխերիմ թշնամուոյն կատաղութեանը զոհուի :

Դքսուհ . — Ո՛վ սք ե իցէ իւր թշնամին , ամենեկին չեմ վախնար անկէց , հոս , հոս կուխոս ար կծնդակուէի պալատին մէջ .

Լինտա . — Բայց միւսը՞ , տիկին .

Դքսուհ . — Ֆրանչէսքո՞ն :

Լինտա . — Այո՛ , այս ամենուն թելադրիչ ե Բաօլօ իշխանին սպաննիչը :

Դքսուհ , — Նա՛ , իւր եղբորը սպաննիչը :

Լինտա . — Իւր եղբայր՛ը , ո՛հ , օրհնեալ ըլլան երկինք տիկին , չէ՛ , իւր հարազատ եղբայրը չէ նա :

Դքսուհ . — Ի՞նչ կըսես .

Լինտա . — Ամուսինս զձեզ խաբած է , բայց վերջը շատ զղջացած :

Դքսուհ . — Ֆրանչէսքոն իմ զուակս չէ եղբ՛ր . . . ոհ Աստուած իմ , ուրեմն աղատած է որդիս , ուրեմն բնագրուս զիս չէր խաբած . . . բայց ես զուակս կուզեմ , Բաօլօս կուզեմ , ո՛ւր է , ո՛ւր :

Լինտա , — Մանթուէն շատ հեռու չէ , իւր նշանածին հետ վանքի մը մէջ պահուրտած , ե այս միջոցիս Լուիճի իրեն օժանդակներ կը փնտռէ՛ . Ֆրանչէսքօ իշխանին ամբողջ բանակին յաղթելու համար , որ քաղըին բոլոր ամբողջները ու դռները պաշարած է .

Դքսուհ . Բայց ես անոնց համար հոս պիտի պատեարզմիմ .

Լինտա . — Ի՞նչպէս :

Դքսուհ . — Գնա դուն անոնց միացիր , ե օրհնեալ ըլլաս որ այս երջանկութիւնը ինձ պարգեհեցիր . ըսէ՛ իրենց , ըսէ՛ իմ հարազատ զուակս թէ շնորհօքն Աստուծոյ կուխոս ար կծնդակուէ դուքսը աակաւին ատէր ե իշխան է :

Մանթուի երկրին , և որ ինձմէ պիտի իմանայ Ռաօլօի կենդանի ապրելուն ուրախառիթ լուրը :

Լինտա .— Ա՛հ, զգուշացէք աիկին, ի՞նչ ընել կուզէք :

Դքսուհ .— Կուղեմ հոն դքսին քովը երթալ :

Լինտա .— Բայց Ֆրանչէսքօն :

Դքսուհ .— Ալ անկէց չեմ վախնար :

Լինտա .— Այլ սակայն

Դքսուհ .— Գացէք , գացէք , ժամանակը կը սահի :

(Լինտա իւ մեկ)

Դքսուհ .— (Մեծ) Ա՛հ , կորուսած բոլոր քաջասրտութիւնս նորէն կստանամ Ռաօլօիս երջանկութեանը նպաստելու համար . (Սը կողմ տենելը իւ լուր , նոյն պահուն Ֆրանչէսքօ դքսուհ տեմին զբայ կերեալ եւ լայն կարգէլէ տենայ մտելու :

ՏԵՍԻԼ Է

Դքսուհին և Ֆրանչէսքօ ,

Ֆրանչ .— Ո՛ւր կերթաք աիկին :

Դքսուհ .— Չէ՞ք տեսներ սր ամուսնոյս սենեակը կերթամ :

Ֆրանչ .— Ամուսինդ աւագանեաց ժողովոյն նախագահելու համար հիմն պալատէս մեկնեցաւ :

Դքսու .— Է՛ սուրեմն կրնամ հոն երթալ :

Ֆրանչ .— Ներեցէք մայր իմ , այդ անկարելի է :

Դքսու .— Ձիս քու մայրդ մի՛ կոչեր թշուառական , վասն զի դու իմ հարազատ որդիս չես :

Ֆրանչ .— Ա՛հ մատնած են զիս , մատնած , լաւ ուրեմն

տիկինն, ահա կրնաս հասկնալ զքեզ հոն երթալ չթողելուս պատճառը :

Դքս — Յանդո՛ւզն բողբալանդիր, զիս արգելե՞լ կուզես :

Ֆրանչ, — Ահա կը տեսնես արդէն :

Դքսու. — Վերջին անգամ կըսեմ, թողէք որ երթամ, ապա թէ ոչ Դուքսը օգնութեան կը կանչեմ :

Ֆրանչ, — Անոր ականջը չպիտի հասնի քու ձայնդ :

Դքսուհ, — Ուրեմն ծառաներս (Սեղանին լրայի շանգուկը շարել երես, քոյց Ֆրանչէոս աւելի)

Ֆրանչ, — (Անոր բնէն բռնելով) Մէկը չպիտի կանչես, մինչեւ որ այս պատշգամէն Ֆրանչէսքօի Մանդուի դուքսը ըլլալը հռչակուի :

Դքսու, — Սյգ վառքը իմ հարազատ որդւոյս կը պատկանի, որ իւր մօրը եղած այս անպատուութեան և անարդանաց վրէժը պիտի լուծէ :

Ֆրանչ, — Քու հարազատ դաւակից կըսես :

Դքսու, — Բաօյօս դեռ կապրի, դիտեմ :

Ֆրանչ, — Կապրի՞ :

Դքսուհ, — Այո՛, և ազատուած է քու ճերաններէդ :

Ֆրանչ, — Ազատուած . . . և ո՞վ ըսաւ քեզ զայդ :

Դքսուհ, — Ձեր զոհերէն մին, Լինտա :

Ֆրանչ, — Լինտան :

Դքսու, — Ա՛հ ուրեմն կը վախնաս :

Ֆրանչ, — Ե՞ս կնոջմէ մը վախնամ, (Խնդարով) հ'ա հ'ա, շնորհակալ եմ դքսուհիդ Լէօնուա, դուք շատ անխօհեմ եղաք անոր ազատուած ըլլալը ինձ իմացնելովնիդ, առանց այս միջոցիս անոր ապահով վիճակ մը ունենալը ստուգելու : Ա՛հ ուրեմն դուք ինձ դէմ պատերձազմ կը հրատարակէք, լաւ, թող այդպէս ըլլայ, պատրաստ եմ պատ-

տերազմելու: Այլ ուսկից պիտի վախնամ, իմ կողմնակիցներս երկրին բոլոր ճամբաները բռնած են, ժամէ մը ձեր Բաօլօ որդին անոնց սուրերէն պիտի սպաննուի, որոյ պատճառը իւր մայրը, այսինքն դուք եղած պիտի ըլլաք:

Դքսուհի, — (Աղեկէզ ձայնիւ) Ա՛հ, շնորհք, շնորհք, (Փրանչէտի սոսնիստ կը ճարի.)

Փրանչ, — (Զանգուկը դարնէ, կանայք ներս կը վազեն.)
Իշխանուհին սարսափելի ցնցմամբ մը խելքը կորսնցուցած ՚ի զո՛ւր իւր մեռած զաւակը կանչելով զայն անհետ կը կարծէ, ուստի զինքը իւր սենեակը տարէք. խնամէցէք և զգուշացէք որ մէկը չմտնեայ իրեն, ասկէց զատ, մօտակայ վանքին բժիշկը ինձ կանչեցէք:

(Կտնայք զԴքսուհին կիսամեռ վիճակին մէջ կը տանին)

ՏԵՍԻԼ Ը.

Փրանչէտքօ, (Երէ) Անթօնիօ:

Փրանչ, — (Առանձին, սուկմամբ) Բաօլօ ազատած . . . կարելի՞ բան է . . . օն յառաջ, ամեն բան ամեն բան ղէմ գնելու վայրկեանը հասած է. թագ մը կամ կախազան մը, անհաւասիկ այս երկուքէն մին ինձ կսպասէ, (Առ Անթօնիօ, որ ներս մտած էր.) Է ուրեմն, յայտարարութի՞ւնը

Անթօն, — Դեռ բան մը կատարուած չէ իշխանդ վեհազունն .

Փրանչ, — Ի՞նչպէս .

Անթօն, — Դուքս հայրերնիդ իւր հրաժարականը մտտոցանելու ժամանակ բաւական ատենէ ՚ի վեր ունեցած տենդովը բռնուեցաւ .

Ֆրանչ, — Կարելի՞ բան է :

Անթոն, — Այո՛ , բայց կարծեմ թէ այնչափ ծանր չէ :

Ֆրանչ, — Եւ ժողովքը :

Անթոն, — Ժողովը ջրուեցաւ , յաջորդ նիստը վաղուան ձգելով :

Ֆրանչ, — (Մեկուսի) Վաղուա՛ն . . .

Անթոն, — Ձէ՞ք ուզեր ձեր հայրը տեսնել, աէր իմ :

Ֆրանչ, — Այո՛ , Այո՛ , շնորհակալ եմ, հիմա կերթամ, (Անթոնիօի մեկնելէն ետքը) վա՛ղը . . . բայց ես կորսուած եմ, թերեւ մէկ ժամէն ճամարտութիւնը երևան պիտի ելնէ , ամենևին բան մը ինձ չպիտի կրնայ նպաստել, քանի որ Կուխտօ տը Կօնզակուէ տակաւին կիշխէ, կը տեսնէ և կը լսէ . . . դուքսը . . . ահաւասիկ ճամարիտ և մեծ վտանգը . . . բայց ինչ որ ըլլալու է՝ թող ըլլայ : (Պէքօ մանէ) :

Պէքօ, — Տէր իմ, ահաւասիկ վանքին բժիշկը :

Ֆրանչ, — (Մեկուսի) Այո՛ , Սբօլէթթայի եղբայրը, որ այնչափ հաւատարիմ է ինձ .

(Խորը կերեայ Լուիճի կրօնաւորի հագուստով, կնքուող վար քաշած և ձեռքը ավուսէի մը մէջ դաւաթ մը կայ) :

ՏԵՍԻԼ Թ .

Ֆրանչ . Պէքօ , Լուիճի .

Պէքօ, — Ձեր դքսուհի մօրը համար զօրացուցիչ դեղ մը կը բերէ :

Ֆրանչ, — Ալ ևս անօգուտ է , վասն զի մայրս իւր առողջութիւնը դտաւ , ուստի պէտք է որ այդ դեղը հօրս տանի , բայց նախ և առաջ ինձի բեր տեսնեմ, (Պէքօ փսիւթը կառնէ կը բերէ) հիմակուան ժամանակն խիստ զգուշութիւն պէտք է մատնութեանց դէմ , այս սուրբ

մարդն անդամ կրնայ խարուած ըլլալ, ուստի հօրս շըրթունքը այս գաւաթին դպչելէն առաջ պէտք է որ խմշըրթունքս մօտենան՝ թունախառն ըլլալը կամ չըլլալը ստուգելու համար, . . (Գաւաթը կառնէ քիչ մը կը խմէ,)

Պէր, (Մեկուսի) — Ինչ որ ալ ըլլայ՝ դարձեալ կըսեմ թէ բարի աղայ մ'է սա, (Ֆրանչէսքօ դոգահար ծոցէն շիչ մը կը հանէ և բաժակին մէջ քանի մը կաթիլ լեցնէ խիստ զգուշութեամբ. ետքը գաւաթը ամսէին մէջ կը դնէ, Պէրօ զայն կրօնաւորին կուտայ,)

Ֆրան — Ահաւասիկ ալ հանդիստ եմ, (կրօնաւորին) գացէք բարի հայր, ա՛հազ որ սիրելի հայրս յուսացուած էն աւելի հիւանդ պիտի դանէք, զինքը ձեր բարի խնամոց և սուրբ աղօթիցը կը յանձնեմ: (Լուիճի խօնարհի և զայրութիւ անոր ետնէն նայելով ամ կողմը մտնէ Պէրօյի հետ):

ՏԵՍԻԼ Ժ.

Ֆրանչէսքօ, (Ետը) Անթօնեօ,

Ֆրանչ, (Մինակ) — Վայրկեանը վճռողական է, այս քիչ մը ժամանակը որ տակաւին թշնամիներս ինձ կը թողուն, խիստ ազետարեր պիտի ըլլայ իրենց համար. . . (Պարտելով) ահա այսպէս բռնութեամբ պիտի հրաժարիս իշխանութենէդ կուխտօ տը կ'օնգակուէ՛, դուքս Մանթուի: (Աջ կողմէ դրոճ մօտեայ և զոն կէ՛ մը բանալով) Անթօնեօ իւր ստիցը տակ նստած է, ինչպէս իմ հաւատարիմներէս ալ մէկ քանին. . . կրօնաւորը անկողնոյն կը մօտենայ, բաժակը կը լեցնէ, իշխանին շրթանցը կը մօտեցնէ. կուխտօ զայն ամբողջապէս կը խմէ, խմեց, գլուխը կէլնայ, ալ չի շարժիր, ձայն չիկայ, (Ներսէն ազազակ) ա՛հ, աղէկ, աղէկ, ահա մեռաւ. . . ամեն բան լմնցաւ. հիմա Մանթուի իշխանը ես եմ: [Անթօնեօ շտապաւ տեսարան դայ,]

Անթօն, — Ի՛նչ սարսափելի աղէտ, ա՛հ իշխան:

Ֆրանչ, — Ի՞նչ կայ ուրեմն:

Անթ, — Հայրերնիդ. . .

Ֆրանչ, — Լմնցուցէ՛ք:

Անթ, — Ալ չիկայ, մեռաւ:

Ֆրանչ, — Մեռաւ:

(Խորէն իշխանք և Պէքօ կուգան ողջունել զՖրանչէսգօ.)

Ֆրանչ .— Այ չիկայ . . . (Կամայ մը Պէքօյի) գնա՛ իմացուր որ ժողովրդեան հռչակեն. (Քարձր) Ա՛հ, հայր իմ, հայր իմ, [Դէպի սենեկին գուռը դարձած 'ի ծունր իջնէ]

Մանկլաւ, (Խորի պատշաղմին վրայ երևնալով) — Կուխօ տը Կօնզակուէի դուքսը մեռաւ, կեցցէ՛ ուրեմն Ֆրանչէսքօ դուքս և իշխանն Մանթօի :

Ֆրանչ .— (Ելլելով) Երթանք աղօթել :

ՋԳԻ ՎՍՐԱԳՈՅԻՆ

ՎԵՐՋԻՆ

ՊԱՏ՝ ԵՐ

)(ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ՊԱՏԻԺԸ)(

(Տեսարանն է Կուխօ տը Կօնզակուէի սենեակը, խիստ զարդարեալ : Խորը գուռ մը : Գեղեցիկ կանգեղ մը կը լուսաւորէ տեսարանը, Խորը, աջ կողմը դադաղ մը, որուն վրայ Կուխօ տը Կօնզակուէ մեռելի պէս տարածուած է իշխանական հանդերձանօք և թաղը դուլթը : Սեղանի մը վրայ թուղթեր և իշխանական կնիքը դրուած է : Թատերաբեմին առջեւ ուրիշ սեղանի մը վրայ կաղամար դրիչ)

(Վարագոյրը բացուելուն, Անթօնեօ, Պէքօ և իշխանք դադաղին չորս կողմը 'ի ծունր, իսկ Լուիճի կրօնաւորի կնքուղը մինչև աչքերը քաշած դադաղին քով նստած է.)

ՏԵՍԻԼ Ա .

Անթօնեօ, ազնուականք և Լուիճի՛ կրօնաւորի հագուստով

Անթօն .— Սյա երկրին իշխանական սովորութեանը համեմատ, մեր վախճանեալ վեհապետին մարմինը իւր ամեն զարդարանօքը զգեցեալ պէտք է որ ամբողջօր մը այն

սենեկին մէջ մնայ՝ ուր հոգին աւանդած է, քիչ մը ետքը պալատիս դռները պիտի բացուին բոլոր ժողովրդեան՝ այս սգալի դադաղին վրայ արցունք թափելու համար, Մնաս բարեա՛ւ Կուխոս ար Կօնզակուէ, ընդունէ՛ իմ վերջին յարգանքս ու ողջոյնս : (Այլոց) Տե՛արք իմ, ամենքնիդ ալ գթասիրտ տէք և իշխան մը կորուսինք, բայց ես սրբտակից բարեկամ մը :

Լուիճի, (Կամաց մը Անթօնիօի ականջին) — Յուսացէ՛ք տակաւին : (Անթօնեօ գարմանօք ետին դառնայ, Լուիճի կերպով մը լուսթիւն պատուիրելէ ետքը,) — Աղօթեցէք, (Անթօնեօ ՚ի ծունը իջնէ դադաղին քով.)

Ոմն, — (Քովի ընկերացը) Իմացա՛ք տեարք իմ, կըսեն թէ Բաօլօ իշխանը մեռած չէ :

Այլ ոմն — Ո՛վ կը համարձակի ատանկ սուտ մը հնարել :

Այլ ոմն, — Գիտէ՛ք որ շատ վտանգաւոր է այդպիսի առասպելական խօսքերը, զոր արտասանելով ինքզինքնիս Ֆրանչէսքօ իշխանին թշնամի պիտի երկցնենք :

Այլ ոմն — Ե՛ս անոր թշնամի ըլլամ, Աստուած չընէ . . . Բայց պարտիմ ձեզ յայտնել թէ՛ այս տարածայնութիւնը Սանթօ Քիէթօօ վանքին շրջակայներէն ելած է :

Ոմն, — Մեր հաւատարիմ զինուորները այդ տարածայնութեանց առաջըը շուտ մը կատնուն : (ժամը 3 կը զարնէ.)

Անթօն, — (Ոտք ելած) Ահաւասիկ պալատիս մատրան մէջ աղօթելու ժամն հասած է :

Լուիճի (Մեկուսի) — Ժամը երե՛ք, և տակաւին բան մը չեմ տեսներ . . . (Մարմինը կը դիտէ) Ոչինչ, արդեօք սըխալեց՛այ : (Մառայ մը կը մտնէ)

Մառայն, — (Մտած առենը) Նորին վսեմութիւն Մանթուի իշխանը : (Ֆրանչէսքօ մտնէ, զոր ամենքը սօք ելած ակնածութեամբ կողջունեն.)

Ֆրանչ, (Սգոյ հանդերձանօք) — Եթէ բան մը կայ որ կարենայ մեր անտանելի ցաւերը մեղմացնել, այն ալ այս իշխանաց և հարց լաւագունին, Կուխոս ար Կօնզակուէ հօրըս մատուցուելիք վերջին յարգանաց տեսարանն է : Անթօնեօ, դու գնա՛ կատարուելիք այս սգալից հանդիսին նախադահելու, ես ալ քիչ ատենէն կուգամ, (Անթօնեօ

խոնարհելով մեկին, Լուիճի գաղտնապահութեան նշան մը կընէ անոր,) դուք ալ տե՛արք , իմ խորին շնորհակալիքըս ընդունելով՝ հաճեցէք քիչ մը ասեմն առանձին թողուլ զիս այս մահահամբոյր գաղաղին մօտ , որպէս զի իմ վրայ բեռնաւորեալ այս իշխանական մեծ պարտաւորութիւնները կարենամ մտածել, նաևս արգիլեցէք դքսուհին որ հոս չգայ , բաձարցակապէս արգիլեցէ՛ք , զի ինչպէս որ գիտէք, իւր անդրանիկ զաւկին կորստեանը վրայ քիչ մը խելագարած է , թող իւր սենեակին մէջ առանցնացուեալ մնայ մինչև կատարեալ յառողջութիւն : (Իշխանք խոնարհին և մեկնիլ պատրաստուն , իսկ կրօնաւորը դագաղին քով անշարժ կը կենայ) :

Փրանչ , (կրօնաւոր Լուիճիին) — Հա՛յր իմ, չէ՞ք լսեր :

Ռմի — Ձէ՛ք գիտեր իշխանդ վեհազուն, թէ այս կրօնաւորին պարտքն է մինչև վերջը մեռեալին դագաղին քով կեցած աղօթել .

Փրանչ , (Իշխանական կերպով) — Երբեւ հոս ներկայ եմ, ինձմէ զատ ոչ ոք պէտք է որ սիրելի հօրս դագաղին մօտ չգանուի, և երբ ես կը հրամայեմ, ամենքն ալ պէտք է հնազաղդին և խոնարհին (Իշխանք նորէն խոնարհին,) դացէ՛ք, և առանց իմ հրամանիս մէկը չմտնէ այս դահլիճս : (Ամենքն ալ մեկնին, Փրանչէսքօ մնայ առանձին) :

Փրանչ — Վերջապէ՛ս, յաջողեցայ ձեռք անցնել այս վեհապետական իշխանութիւնը , սրտիս միակ նպատակն ու փափաքը. (Դագաղին մօտեցած) ա՛հ կուզեմ այս մարդուն դէմքը նկատել, վասն զի երեկ իմ տէրս՝ իսկ այսօր անշնչացեալ է ստքիս տակ : (Ետ ետ երթալով) Աստուած իմ, կարծես թէ իւր նայուածքը իմինիո հանգիստեցաւ . . . է՛հ , հեռայններք այսպիսի տղայական անհիմն կասկածները (Ինքնիրեն) Ի՛նչ , վա՛տդ դու , դու որ իշխանական գոռողութեամբ կուզես ուրիշներուն հրամայել, հիմա կը վախնամս քու երևակայութենէդ . (Դրօէն երգեհոնի եւ զանգակաց ձայնք.) Ահա այս զանգակները իմ անհիմն վախերուս կը պատասխանեն . (Դագաղին) Ի՛նչ կրնաս ընել հիմա դու ինձի, դո՛ւ, մինչ կը պատրաստուն դուրսը յուզարկաւորութեանդ վերջին հանդէսը կատարել . . . այս

Թագը (Թագը յափշտակելով) բու ճակտիդ վրայ այլ եւս ուրիշ նշանակութիւն մը չունի բայց եթէ սնտոտի զարդ մը, իսկ իմ ճակտիս վրայ իշխանական մեծ նշան. (Գլուխը կը դնէ) բայց քանի որ տակաւին ժողովուրդը միահամուռ իմ ոտքս դիմելով այս թագադրութիւնը անանկանելի ընելու համար զիս չէ սղոճեած, առ այժմ տղայական խողալիքի մը պէս կերևայ աչացս. հոպ օն, ժամանակ կ'որոնցնելու չէ. . . գործե՞ք. (Թատերաբեմին առջևի սեղանին գլուխն անցած հետևեալը կը դրէ բարձրաձայն, կրնակը դագաղէն դարձուցած.) «Իմանալով որ խարերայ մը իւր «ունեցած նմանութեամբը ինքզինքը մեր կորուսած ամբ-ճնասիրելի եղբայր Բաօլօ իշխանը կուզէ հաւատացնել, ապստե գրութեամբ կը հրամայենք բոլոր մեր հպատակաց՝ «թէ այն խարերայ թշուառականը գտնելով մեզ յանձ-ճենն, սրոյ գլուխը 10,000 ոսկի Ֆիօրինի գրաւի դրուած է:

Սասրագրեալ

Պրանչէսքօ, իշխան Մանթուի»

Հիմա արքունի կնքով պէտք է վաւերացնենք զայս .

(Միւս սեղանը երթալով տուփին մեջէն կնիքը կառնու կրնակը միշտ դագաղին դարձուցած, այն միջոցին Կու-տօ կարթննայ և կամայ կամայ դագաղին մէջ կը նստի, Պրանչէսքօ ալ տաղին եկած իւր տեղը կը նստի և գրածը աչքէ անցուցած վայրկենին՝ Կուխտօ դագաղէն կիջնէ եւ դողդոջուն քայլերով մօտենայ անոր և ետևէն թագը դըլ-խէն կը յափշտակէ:)

Կուխտօ, — Սրբապղծութիւն, սրբապղծութիւն .

Պրանչ, (Սարսափահար և այլայլեալ) — Ա՛հ . . .

Կուխտօ, (Պատելով) — Ե՛ւ եմ իշխան Մանթուի .

Պրանչ, — (Սարսափելի նայուածքով զայն կը դիտէ և առջևը կերթայ.) Ուրուական, ի՞նչ կուզես ինձմէ . ինչո՞ւ

այդպէս տժգոյն և զայրացեալ իմ առաջս կը կենաս . .
 ան ազատէ զիս . . . շնորհք . . . շնորհք . . . զն'ա
 հեռացիր . . . թող զիս . . . (Աչքերը միշտ կուխտօի
 վրայ տնկած՝ ետ ետ երթալով գագազին մօտենայ, եւ
 մէջը նայելով՝ խենդի պէս կը դողայ և կը խարխարէ)
 Պարա՛պ . . . դագաղը պարա՛պ է . . . արթնցած է . . .
 ահ, ուրեմն մարդ մը, արարած մ'է որ դէմս կանգնելով՝
 ա՛հ, ինքն է, այո, կուխտօն է, ալ չեմ վախնար :

Կուխտ, (Մտածելով) — Ի՛նչպէս, այն կրօնաւորը, որ
 զիս քնացուց, հոս չեմ տեսներ :

Ֆրանս — Ուրեմն այն անիծեալ կրօնաւորը զիս խաբած է :

Կուխտ, — (Չեռն 'ի ճակատ մտածելով) Կը յիշեմ . .
 պատրաստուած թոյնին տեղ ուրիշ ըմպելիք մը ինձ ներ-
 կայացնելով « քնացի՛ր » ըսաւ, « Բաօլօ և ես զքեզ պիտի
 արթնցնեմք : »

Ֆրանս, — Բաօլօ՛ :

Կուխտ, — Բաօլօ՛, որդեակ իմ, ո՛ւր ես :

Ֆրանս, — Բաօլօն մեռած է, չե՞ս գիտէր :

Կուխտ, — Մե՛ռած . . . ո՛հ չէ՛ չէ՛ . . .

Ֆրանս, — Մտիկ ըրէ ինձ, ամեն մէկ խօսք և ամեն մէկ
 վայրկեան թանկագին են մեզ համար, խօսք մը բաւական
 է, որոյ փոխարէն այս դռները բանալով ամենքը ներս
 պիտի կանչեմ և անոնց ներկայութեանը պիտի յայտարա-
 րեմ թէ՛ հայրս հրաչքով մը ողջնցաւ . . .

Կուխտ, — Եւ ի՞նչ է այդ բանը :

Ֆրանս, — Չեր իշխանութենէ հրաժարիլը ,

Կուխտ, — Հրաժարի՛լ :

Ֆրանս, — Եւ ձեր ստորագրութեամբը վաւերացնել այս
 հրովարտակը : (Թուղթը ներկայացնէ) :

Կուխտ, — Որդւոյս մահավճի՞ր . . . որդւոյս դատակնի՞քը,
 երբէ՛ք, երբէ՛ք :

Ֆրանչ, — Խարերայ մը, որ . .

Կուխտ, — Խարերան դու ես, դու, վասնզի իմ հարազատ
զուակա չես. (Գրսէն զանգակի ձայն.)

Ֆրանչ, — Թշուառակա՛ն, կը լսե՞ս այս զանգակները և
այս յո զարկաւորութեան երգերը . . մի միայն ես գիտեմ
որ դու կապրիս, միմիայն ես կամ հոս քեզի հետ դէմառ
դէմ ծե՛րունի, և կրնամ նորէն զքեզ դագաղիդ վրայ տա
լածել, ուրեմն ստորագրէ՛ կըսեմ քեզ, ստորագրէ՛ .

Կուխտ, — Երբէք, երբէք :

Ֆրանչ, — Ստորագրէ՛ ապա թէ ոչ այս ձեռքը . . .
(Եւ անմիջապէս Կուխտօի վրայ յարձակելով՝ անոր կոկորդէն
կը բռնէ, նոյն միջոցին խորի դռնէն Լուիճի Կրօնա-
ւորի հագուստով բայց գլուխը բաց, կայծակի արագու-
թեամբ ներս կը վազէ և Ֆրանչէսքօի կոկորդէն կը բռնէ
գոչելով.) — Տեսնենք պարոն, երկուքէս ո՞րին ձեռքը ա-
ւելի զօրաւոր է .

Ֆրանչ, (Հօրը օձիքը թողու և ետ ետ երթալով) — Լու-
իճի՛ն :

Լուիճի, — Այո՛ Լուիճին, զքեզ իրեն որդեգրող հայրդ,
որ պարտաւոր էր սիրելի զուակա, օրօրանիդ մէջ զքեզ
այսպէս խեղդել :

Ֆրանչ, — Թշուառակա՛ն, կը համարձակի՞ս իշխանիդ
դէմ ձեռք վերցնել :

Լուիճի — Իմ իշխանս, (Վազէ խորի դուռը բանայ) ահա
լասիկ իմ իշխանս. (Տեսարանը կը լուսաորուի, Բաօլօ դըբ-
սուհոյն Լէօնօսայի և Պիանգայի մէջ տեղը կերևայ, իսկ
Լինտա եւ Բիէթաօ անոնց կը հետեւին) :

Կուխտ, — Բաօ՛լօ .

■ Իքսուհի. — Գրկէ՛ զաւակդ Կուխտօ, (Գրկախառնին)

Ֆրանչ. — (Մեկուսի) Լմնցաւ ամեն բան, (Գրպանէն շիշ
մը հանած՝ կը խմէ .)

Բաօլ, — Հա՛յր իմ, (Լուիճին ցուցնելով) ահա աօիկ իմ կենացս աղատարարը :

Լուիճ, (ի Մուսը) — Շնորհ անցելոյն համար, տէր իմ:

Կուիտ — Դու որ իմ կեանքս ինձ պարզեցիր, և իմինէս հազար անգամ աւելի թանկազին Բաօլօ որդւոյս կեանքը ազատեցիր, օրհնեալ ըլլաս. ուստի ոտք ելիր քաջասիրտ հրամանատարս :

Լուիճ, — Այո, ձեր հրամանատարն եմ տէր իմ, այս թշուառականը պատժելու համար :


Փրանչ, — Արդէն ես պատժուած եմ՝ քանի որ թագն ինձմէ կը հեռանայ. Եւ դու, որ զիս խրճթէն այժմ պալատոյ բերիւր և սրտիս մէջ հպարտութեան ու գոռոզութեան դաղափարները արթնցուցիր, անիծեա՛լ, յաւիտեան անիծեա՛լ ըլլաս :


Լուիճ, — Փոխանակ անիծելու՝ զզջա՛ թշուառական գործած այնչափ յանցանաղդ վրայ :


Փրանչ, (Յաւէն լաթերը պատռտելով) — Թագաւորեցէք ուրեմն . . բայց ես ձեր հպատակը չպիտի ըլլամ, ոչ կը յաղթեմ ձեր ամենուն. ամենքդ ալ. ա՛հ. . (Դողդղայ) բայց չէ . . . ձեր ոտիցն առջև. . . չէ. (իւր վրայ դառնայ և քանի մը քայլ առնելէն ետքը կիչնայ.)

Կուի, — Աստուած արդար է որդեակ իմ Բաօլօ, ահա աօիկ ոճրագործ հօր մը դաւաճան որդւոյն արժանի պատիժը, զի « ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻ ԶՆՄԱՆՈՒԹԻԻՆ ՀՕՐՆ ԲԵՐԷ: »


ԿԵՐՔ







İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0439

255.07.02.01.06.00/

Գլխ 7 դասեկան